4227

281.6
S-52

1838

2010

281.6
S-52

Հրատարակութիւն կենտրոնական գրավաճառանոցի

ՍԿԶԲՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Վան 08
36224

ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
Ստեփաննոս աւագ քահանայ Տէր-Ստեփանեան

Ծխական-եկեղեցական ուսումնարանների բոլոր բաժանմունքների և մինչնակարգ ուսումնարանների առաջին դասատունների համար։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏՓԽԻՍ
Տպարան Մ. Շարաձէի և Ընկ. Նիկ. 21
1898

39
1118

Дозволено цензурою, Тифлисъ, 13-го Декабря 1897 г.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵՍՈՆ ՏԵՍՈՆ ՄԿՐՏՉԻ Ս.

ՀԱՅՐԱՊԱՏՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱՊԱՏՈՒՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՍԿԶԲՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ


ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1. ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԻ ՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ.

Աստուած գերագոյն և ամենակատարեալ էակ է։ Չէ եղել այնպիսի ժամանակ, որ Աստուած եղած չլինէր։ Յաւիտենական է Աստուած, և չկայ աշխարհիս մէջ մի տեղ, ուր չգտնուի Նա։ Աստուած ամենայն տեղ է։ *Ամենաթարի է* Աստուած (*որովհետև ամենքի համար գերագոյն բարի է կամենում*), *Ամենիմաստ է* (*մեր գործած յայտնի և գաղտնի գործերը գիտէ*), նոյնպէս և *Ամենակարող է*։ Ըստ իւր էութեան անմարմին հոգի է Աստուած։

Ինքն Աստուած յայտնած է մեզ, թէ ըստ բնութեան մի է, և ունի երեք անձինք, որք են՝ Հայր Աստուած, Որդի Աստուած և Հոգի Սուրբ Աստուած, թէ այս անձինքն ունին հաւասար զօրութիւն և պատիւ, և թէ երեք անձինք մի Աստուած են և ոչ երեք։ Երեք և մի լինելու հեռաւոր նմանութիւնը բնութեան մէջ ևս տեսնում է։

Օրինակի համար, արեգակից ծնվում է լոյս և ջերմութիւն, նոյնպէս Հայր Աստուծուց ծնվում է Որդին



և բղխում է Հոգին Սուրբ. և ինչպէս չէ կարելի արեգակից բաժանել ո՛չ լոյսը և ո՛չ տաքութիւնը, այնպէս ևս Հայր Աստուծուց չէ կարելի բաժանել Որդին Աստուած և Սուրբ

Հոգին։ Այս իսկ պատճառով Աստուած կոչվում է և Ամենասուրբ երրորդութիւն միասնական եւ անբաժանելի։

Եւ ան՛ձնձնեայ Աստուած տուաւ մեզ պատուիրանները, որոնցով պէտք է պատուենք Նորան և առանձին ակնածութեամբ յիշենք Նորա սուրբ անունը։ Մենք ևս կատարելով Նորա պատուիրանները, փառաբանում ենք Աստուծուն և յայտնում ենք ցանկութիւն Նորա անունով ապրելու, այսինքն այնպէս վարուելու, ինչպէս պահանջում է Նորա անուան փառքը։

Ես եմ Տէր Աստուած քո, մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։

Ես եմ քո Տէր Աստուածը և Ինձանից զատ ուրիշ աստուածներ չունենաս։

Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ՚ի վերայ սնոտեաց։

Աստուծոյ անունը չյիշես ունայն տեղը։

Փառք Քեզ, Աստուած, Փառք Քեզ յաղագս ամենայնի, Տէ՛ր, փառք Քեզ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն։

2. ԹԷ ԻՆՉ ԵՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ.

Սկզբում Աստուած ստեղծեց՝ այսինքն ոչնչից գոյացրեց շատ հրեշտակներ։ Հրեշտակներն անմարմին (ուրեմն և անտեսանելի), անմահ, իմացական և ազատ հոգիք են։ Նոքա

հրեշտակ (այսինքն Համբաւաբեր) ասվում են այն պատճառով, որ Աստուծոյ հրամանով մարմնաւոր կերպարանք են ստանում և Աստուծոյ կամքը յայտնում են մարդկանց։ Ամեն հրեշտակ նոյն աստիճանի գօրութիւն և փառք չունի։ Հրեշտակները բաժանվում են ինն դասակարգ, և այս պատճառով զանազան անուններ ունին. ոմանք հրեշտակք են ասվում, ոմանք հրեշտակապետք և ոմանք Սերովբէք և Քերովբէք։

Աստուած հրեշտակներին քարի ստեղծեց, բայց վերին դասակարգի հրեշտակներից մինը հպարտացաւ, կամեցաւ Աստուծոյ հաւասար լինել. ուստի սկսաւ հակառակիլ Նորան և տրտնջալ Նորա դէմ և կարողացաւ դէպի չարը մոլորեցնել ուրիշ շատ հրեշտակների, որոնք Նորա հետ երկնքից թօթափեցան։ Այն չար հրեշտակին սատանայ ենք ասում (որ կնշանակէ հակառակորդ), իսկ Նորա մոլորեցրած հրեշտակներին՝ դեւք և արքայեակք սատանայի։ Այսպէս հրեշտակները բաժանուեցան քարի և չար։ Բարի հրեշտակները Աստուծոյ կամքը յայտնում են մարդկանց, ամեն քարի գործերի մէջ օգնում են նոցա, չար բաներից պահպանում են մեզ, իսկ չար հրեշտակներն ամեն ըարի բանին թշնամի են։

Ամենաքարին Աստուած իւրաքանչիւր մարդու մի հրեշտակ է տալիս, որ ասվում է պահապան հրեշտակ. Նորան դիմում ենք մենք մեր աղօթքով. երբ քնից արթնանում ենք՝ խնդրում ենք, որ այն օրը օգնէ մեզ բարեգործութիւն անելու. իսկ քնելու ժամանակ խնդրում ենք, որ մեզ ազատ պահէ սատանայի փորձութիւններից և արժանի անէ Աստուածային ողորմութեան։

Հրեշտակի խաղաղութեան Տէր զօրութիւնների, մեր յանձն արա զանձինս մեր, անձը յանձնիր խաղաղութեան Տէր զօրութեանց, որ եկեալ հրեշտակին, որ գալով մեզ մօտ, պահեսցէ զմեզ անխռով՝ի հանգիստ և արթուն պահ-

տուէ և՝ի գիշերի, յարթնութեան և՝ի հանգստեան մերում, զի Դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի։

պանէ մեզ գիշեր և ցերեկ, մեր արթուն և քնած ժամանակը, որովհետև Դու ես լոյսի արարիչը և գիշերի ստեղծողը։

3. ՏԵՍԱՆԵԼԻ ԱՇԽԱՐՀԻՍ ԵՒ ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ.

Հրեշտակներից յետոյ Աստուած ստեղծեց վեց օրուայ մէջ այն բոլոր բաները, որ մենք տեսնում ենք։ Առաջին օրն ստեղծեց լոյսը։ Երկրորդ օրն ստեղծեց տեսանելի երկինքը։ Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և հրամայեց որ հողը արտադրէ բոյսեր։ Չորրորդ օրն ստեղծեց արեգակը, լուսինը և աստղերը։ Հինգերորդ օրը՝ թռչուններն և ձկները։ Վեցերորդ օրն ստեղծեց բոլոր կենդանիները և յետոյ մարդը։

Աստուած մարդու մարմինը հողից ստեղծեց և փչելով տուեց Նորան բանական, ազատ և անմահ հոգի։ Այս հոգւով մարդը զանազանուեցաւ կենդանիներից։ Աստուած մարդու հոգին ստեղծեց Իւր կերպին և նմանութեան պէս, շնորհելով Նորան անարատ միտք և սուրբ կամք։

Աստուած առաջին մարդու կողքից ստեղծեց Նորա համար կին, այսինքն այնպիսի մարդ, որպէս Նա ինքն էր։ Աստուած այս արաւ, որպէսզի մարդիկ սիրեն միմեանց այնպէս, ինչպէս իւրեանց անձը։ Աստուած առաջին մարդուն Ադամ անուանեց, իսկ նախամօրը Եւայ։

Եօթներորդ օրը Աստուած ոչինչ չստեղծեց, վասնորոյ այն օրը կոչուեցաւ շաբաթ (որ կընշանակէ հանգստութիւն)։ Աստուած օրհնեց և սրբեց այն օրը և հրամայեց որ մօն և սուրբ պահուի ի յիշատակ աշխարհի ստեղծագործութեան։

Աստուած աշխարհն ստեղծելուց յետոյ անխնամ չը թողեց նորան, այլ Իւր Հովանաւորութեան ներքոյ պահելով, նախախնամում է և ամեն բարի բանին օգնում է։

Այս պատճառով մենք Աստուծուն անուանում ենք Տէր, Երկնաւոր թագաւոր, Արարիչ, Ամենակալ և Նախախնամող։ Եւ մեր ամեն կարօտութիւնների ժամանակ աղօթքով դիմում ենք դէպի Նա։

Ամենայն բարի գործի համար մենք խնդրում ենք Արարիչ Աստուծոյ և Ամենակալի օրհնութիւնը և շնորհակալ ենք լինում Նորանից այն ամեն բանի համար, ինչ որ Նա տալիս է մեզ։

Օրհնեա՛, Տէ՛ր։

Գոհանամ զքէն (շնորհակալ եմ Քեզանից), Տէ՛ր Աստուած իմ։

Մեր դէպի Ամենակալ և Արարիչ Աստուածն ունեցած հաւատը յայտնում ենք այսպէս.

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ, Արարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից։

Երևելի անուանում ենք Աստուծոյ այն արարածները, որոնց կարող ենք տեսնել—երկիրը և ամենը, ինչ որ նորա վերայ կայ. իսկ աներևոյթ՝ հրեշտակներին։

Աստուծոյ պատուիրանը եօթներորդ օրուայ մասին.

Ցիշեա՛ սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսցես եւ արասցես զամենայն գործս քո. իսկ յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քո։

Մի՛տդ պահիր շաբաթ օրը, որ սրբութեամբ պահես նորան, այսինքն այն օրը նուիրես բարի գործերի։ Վեց օր աշխատի՛ր, այսինքն արա՛ քո գործերը. իսկ եօթներորդ օրը դադարիր այդ գործերից ի՛ պատիւ քո Տէր Աստուծոյ։

ԱՒԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ.

Գոհանամ զՔէն, Տէր Աստուած իմ, որ զարթուցեր զիս ի հանգստենէ քնոյ շընորհիւ ողորմութեան Քո։ Զարթո զմիտս իմ արդարութեամբ առ Քեզ, Տէր Աստուած իմ, զի տեսցեն աչք իմ զփրկութիւն Քո։ Եկեսցէ և բնակեսցի յիս Աստուածութիւն Քո և ողորմութիւն Քո հովանի և պահապան լիցէ ի վերայ իմ։ Եւ զիս արժանի արա ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուիրանաց Քոց. և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Շնորհակալ եմ Քեզանից, Տէր Աստուած իմ, որ Քո ողորմութեան շնորհովը զարթեցրիր ինձ հանգիստ քնից։ Զարթեցրու իմ միտքը արդարութեամբ դէպի Քեզ, Տէր Աստուած իմ, որ իմ աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, գայ և բնակուի իմ մէջ Քո Աստուածութիւնը. և Քո ողորմութիւնը հովանի և պահապան լինի իմ վրայ։ Եւ ինձ արժանի արա գիշեր և ցերեկ և ամեն ժամանակ Քո պատուիրանների վրայ մտածել և Քո պատուիրանները կատարել և շնորհակալութեամբ փառաւորել Հօրը և Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

4. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԵԱՆՔԸ ԴՐԱԽՏԻ ՄԷՋ.

Աստուած Ադամին և Եւային բնակեցրեց դրախտի մէջ, որ մի գեղեցիկ պարտէզ էր արևելեան կողմը։ Նորա մէջտեղում մի նշանաւոր ծառ կար, որի պտուղները մարդուն հիւանդութիւնից և մահից ազատ էին պահում։ Այս ծառի անունն էր *ծառ կենաց*։ Աստուած առաջին մարդկանց դրախտը տանելով, օրհնեց նրանց և ասաց. «Բազմացէք, լցրէք երկիրս և նորան տիրեցէք»։ Առաջին մարդիկը երջանիկ կեանք ունէին դրախտի մէջ և ոչ մէկ բանի կարօտութիւն չէին զգում, հոգեկան զբաղմունք ունէին, որ ճանաչում էին Աստուծոյ արարածները և սովորում էին սիրել Աստուծուն։ Սորանից զատ ինքն Աստուած երեւում էր նրանց և յայտնում էր այն բանները, որ իրանք իրանց չէին կարող իմանալ. ունէին նաև մարմնական զբաղմունք, այսինքն դրախտը պահպանում և մշակում էին։ Նոքա ոչ թշնամութիւն գիտէին և ոչ խաբէութիւն, և անմեղ մանկանց նման ամօթ չէին զգում։

Որպէսզի մարդիկ չմոռանան որ նոցա վրայ իշխում է ինքն Աստուած և Նորա կամքին հնազանդիլը սովորեն, Աստուած պատուէր տուաւ նոցա։ Պատուիրեց որ չուտեն այն ծառի պտուղը, որի անունն էր *ծառ գիտութեան բարւոյ եւ չարի*,— ասելով՝ որ եթէ ուտեն, կմեռնին։

Ողորմած Աստուածը մեզ ևս կարողութիւն և ոյժ է տալիս բարի բան սովորելու, Իւր կամքը մեզ ևս յայտնում է և տալիս է Աստուածային անկեղծութիւն։ Վասն որոյ մենք ևս մեր դասատուութիւնից առաջ աղօթք ասելով խընդրում ենք, որ օգնէ մեզ աւանդուած ուսմունքը սովորելու։ Իսկ դասատուութիւնից յետոյ աղօթք ասելով՝ շնորհակալ ենք լինում մեզ պարգեւած ողորմութեան համար, և օրհնութիւն ենք խնդրում նոցա համար, որոնք օգնեցին մեզ սովորելու։

ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ.

Ամենաբարի Աստուած, առաքեա առ մեզ զշնորհս Հոգւոյդ Ս. սրբոյ, որ պարգեւէ մեզ զմիտս և կազդուրէ զզօրութիւնս հոգւոյ մերոց, որպէս զի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս՝ զարգասցուք Ձեզ ստեղծողիդ մերում՝ ի փառս, ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և Հայրենեաց։

Ո՛վ Ամենաբարի Աստուած, ուղարկիր դէպի մեզ Ս. սուրբ Հոգւոյդ շնորհքը, որ մեզ միտք պարգեւէ, և զօրացնէ մեր հոգևոր կարողութիւնները, որպէսզի մենք ուշք դարձնելով մեզ տուած ուսմունքին, մեծանանք Ձեզ ստեղծողիդ փառք տալու, մեր ծնողացը մխիթարելու և եկեղեցուն ու Հայրենիքին օգտակար լինելու։

ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ՑԵՏՈՑ.

Տոհանամք զՔէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շընորհաց Ս. Հոգւոյդ ընդունելութեան ուսմանս, օրհնեա զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ի գիտութիւն բարութեան, և տուր մեզ զկարողութիւն ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

Շնորհակալ ենք Քեզանից, Արարիչ, որ Ս. սուրբ շնորհովն արժանացրիր մեզ ուսմունք ստանալու։ Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներն իմանալու։ Տուր մեզ ոյժ և կարողութիւն, որ այսուհետև ևս շարունակենք նոյն ուսումը։

---

5. ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԵՂՔԻ ՄԻՋ ԸՆԿՆԻԼԸ.

Սատանան՝ առաջին մարդկանց երանելի վիճակի վրայ նախանձուելով, մոլորեցրեց նրանց դէպի չարը։ Մէկ անգամ, երբ Եւան անցնում էր արգելեալ ծառի մօտով, սատանան՝ օձի կերպարանքով մօտեցաւ նրան և հարցրեց. «Յիրաւի, մի՞թէ Աստուած արգելել է դրախտի ծառերի պտուղներից ուտել»։ Եւան պատասխանեց, թէ՝ «Բոլոր ծառերի պտուղներից կարող ենք ուտել, միայն հրամայեց Աստուած այս ծառի պտուղը չուտել, որպէսզի չմեռնինք»։ «Ո՛չ, դուք չէք մեռնիլ, ասաց սատանան, այլ եթէ այս պտղից ուտէք՝ իսկոյն ձեր աչքերը կըբացուին և Աստուծոյ նման կըլինիք, չարն ու բարին կըհասկանաք»։ Եւան ցանկացաւ այն պտղից ուտել. նա չկարողացաւ համբերել, կոթեց ու կերաւ, յետոյ Ադամին տուաւ, որ նոյնպէս կերաւ։ Եւ այս կերպով առաջին մարդիկ մեղանչեցին։ Երբ մեղքն առաջին մարդկանց հոգու մէջ մտաւ, իսկոյն ամօթ և սարսափ տիրեց նոցա վերայ։ Երբ լսեցին որ Աստուած դրախտի մէջ ման է գալիս, ահով դողդով պահուեցան ծառերի մէջ, չմտածելով՝ որ ամենատես Աստուծուց անկարելի է թագչիլ։ «Ադա՛մ, ո՞ւր ես», հարցրեց Աստուած։ Ադամը պատասխանեց. «Ձայնդ լսելով վախեցայ, և որովհետև մերկ էի՝ ամաչեցի, ուստի պահուեցայ»։—Ձլինե՞ր թէ այն արգելուած ծառի պտղիցը կերար, հարցրեց Աստուած։ Այն ժամանակ սկսաւ Ադամը յանցանքը իւր կնոջ վերայ ձգել և ասաց. «Այս կինս, որ Դու ինձ տուիր, սա ինձ տուաւ այն պտուղը, և ես կերայ»։ Աստուած հարցրեց Եւային. «Այս ի՞նչ բան արիր»։ Իսկ նա պատասխանեց, թէ «օձն ինձ խաբեց»։ Այս կերպով ահա մարդկանց հոգին մեղքերով ապականուեցաւ։ Նոքա, որ սկզբից բարի և ճշմարտախօս էին, այն յանցանքը գործելուց յետոյ ստախօս, անձնասէր և չարասիրտ եղան։

Աստուած արգելում է մեզ՝ սրտերիս մէջ նախանձ պահելը կամ ուրիշի բարութեան վրայ նախանձելը, որովհետև նորանից յառաջ են գալիս շատ տեսակ չարութիւններ։ Այդ պատուիրանն այսպէս է կարդացվում.

Մի՛ ցանկանար տան ընկերի քո եւ մի՛ ամենայնին, որ ինչ ընկերի քո է։

---

6. ՓՐԿՉԻ ԽՈՍՏՈՒՄԸ ԵՒ ՆԱԽԱԾՆՈՂՆԵՐԻ ՑԱՆՑԱՆՔԻ ՊԱՏԻԺԸ.

Արդարադատն Աստուած անիծեց մոլորեցնող սատանային, որ օձի կերպարանք էր առել, և ասաց նրան. «Քո և այս կնոջ մէջ թշնամութիւն եմ դնում. սորա սերունդից մէկը պիտի քո գլուխը ջախջախէ»։ Այս խօսքերը մխիթարութիւն եղան մարդկանց համար, որովհետև գուշակեցին, թէ Փրկիչը աշխարհ պիտի գայ։ Յետոյ Աստուած մարդկանց համար ևս պատիժ որոշեց, որ նոքա չմոռանան իրանց գործած մեղքը։ Եւային ասաց՝ թէ դու ցաւով պիտի ծնանիս որդի. իսկ Ադամին ասաց. «երեսիդ քրտինքով պիտի հաս հացդ, մինչև որ մեռնիս»։ Բայց որպէսզի մարդիկ միշտ յիշեն խոստացած Փրկիչը, Աստուած սովորեցրեց [նոցա, որ Իրան կենդանիները զոհեն, որով՝ ցոյց տուաւ, թէ Փրկիչը Իւր արիւնով պիտի ազատէ մարդկանց։ Յետոյ Աստուած դրախտից արտաքսեց նրանց։

Բայց սորանից յետոյ ևս Աստուած անխնամ չթողեց մարդկանց, այլ պատրաստում էր նրանց Փրկչին ընդունելու։ Մինչև Փրկչի գալուստը եղած միջոցը կոչւում է *հին ուխտի ժամանակ*, իսկ Նորա գալուց յետոյ եղած միջոցը ասվում է *նոր ուխտի ժամանակ*։

Աստուած, ողորմեա ինձ մեղաւորիս։

ԵՐԵԿՈՑԵԱՆ ԱՂՕԹՔ

Տէր Աստուած մեր, Դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ Քո բևեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ Քեզ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ Քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Տէր Աստուած մեր, Դու պահիր մեզ խաղաղութիւնով այս գիշեր և ամեն ժամանակ։ Քո սուրբ երկիւղիդ մէջ բևեռած պահիր մեր միտքը և խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ և ազատ լինինք թշնամու որոգայթից։ Եւ Քեզ տանք օրհնութիւն և փառք՝ Հօրը և Որդուն և սուրբ Հոգուն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

7. ՄԱՐԴԿԱՑԻՆ ԱԶԳԸ ՄԻՆՉԵՒ ԶՐՀԵՂԵԼԸ.

Մեղքի մէջ ընկած առաջին մարդկանց սերունդներն ևս իրանց պէս մեղաւոր եղան։ Այս պատճառով բոլոր մարդիկ կրում են այն պատիժները, որ նշանակեց Աստուած Ադամի և Եւայի համար, բայց այս ցաւերի հետ նախածնողքը հաղորդեցին իրանց սերունդներին նաև Քրկչի գալստեան յոյսը։

Ադաւ և Եւան՝ դրախտից արտաքսուելուց յետոյ, որդի ունեցան։ Առաջին որդուն Կայէն կոչեցին, իսկ երկրորդին Աբէլ։

Կայէնը երկրագործ էր, իսկ Աբէլը խաշնարած։ Մէկ անգամ եղբայրները կամեցան Աստուծուն զոհ անել։ Երկուսն էլ իրանց աշխատութեան լաւ պտուղներից զոհ բերին, բայց

երկուսի սիրտն էլ միատեսակ չէր։ Աբէլը խոստացեալ Քրկչին հաւատալով և իւր մեղքի վրայ զղջալով էր մատուցանում իւր զոհը, իսկ Կայէնը առանց հաւատալու և զղջալու։ Աստուած չընդունեց Կայէնի զոհը, այլ միայն Աբէլինն ընդունեց։ Այն ժամանակ նախանձից վառուած Կայէնը սպանեց Աբէլին։ Արդարադատն Աստուած անիծեց եղբայրասպան Կայէնին՝ ասելով. «Այն հողը, որի վրայ քո ձեռքով եղբօրդ անմեղ արիւնը թափեցիր՝ քո դէմ բողոքում է իմ առաջ. հալածական և թափառական մնաս աշխարհիս երեսին»։ Աստուած՝ Ադամին և Եւային մխիթարելու համար, Աբէլի փոխանակ ուրիշ որդի տուաւ նոցա, Սէթ անունով (որ մխիթարիչ կընշանակէ)։ Կայէնը ծնողաց տանից հեռացաւ և հեռու տեղ բնակուեցաւ։ Եւ այսպէս՝ մարդիկ սկսան իրարից բաժանուիլ։ Կայէնի սերունդները մոռացան Աստուծուն և անձնասէր ու անխիղճ մարդիկ էին, իսկ Սէթի սերունդը ճանաչում էր Աստուծուն և արդար էր։ Բայց երկար ժամանակ անցնելուց յետոյ, Սէթի սերունդը բարեկամութիւն և ազգականութիւն արին Կայէնի սերունդի հետ, նոցանից սովորեցին ամեն տեսակ չարութիւն և մոռացան Աստուծուն։ Միայն արդար Նոյի ընտանիքի մէջ մնաց ճշմարիտ հաւատը։

Սոքա են Աստուածային պատուիրանները, որոնք արգելում են չարութիւն անել.

Մի սպանանիր, մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայեր զընկերդ քումմէ։

---

8. ՋՐՀԵՂԵՂ.

Արգարադատն Աստուած վճռեց, որ մարդկանց ջրհեղեղով պատժէ: Նա հրամայեց Նոյին, որ տապան (մեծ նաւ) շինէ, այնպէս որ մէջը կարողանան տեղաւորուիլ նորա ընտանիքը և աշխարհիս բոլոր կենդանիները: Այն տապանի մէջ մտաւ Նոյը իւր կնոջ հետ, նորա Սեմ, Քամ և Յաբէթ որդիքը՝ իրանց կանանց հետ, և իւր հետ տապանի մէջ մըտցրեց սուրբ համարուած—զոհի կենդանիներից ու թռչուններից



երից եօթն-եօթն զոյգ, իսկ անսուրբ անասուններից երկու-երկու զոյգ: Յետոյ քառասուն օր անդադար անձրև եկաւ, ջուրը շատացաւ, եղերքներից դուրս եկաւ, բոլոր երկրիս երեսը ծածկեց, որով խեղդուեցան մարդիկ և անասուններ: Ազատուեցան միայն նոքա, որոնք տապանի մէջ էին:

Երբ ջրհեղեղն անցաւ, Նոյը տապանից դուրս եկաւ և իւր ազատելու համար շնորհակալութեան զոհ մատոյց Աստուծուն: Աստուած այն զոհն ընդունեց և խոստացաւ, որ այլևս համաշխարհական ջրհեղեղ չի լինիլ և Իւր խոստման նշան տուաւ ծիածանը, որ է ծիրանի գօտին:

9. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶԳԻ ՋՐՀԵՂԵԼԻՑ ԵՏՈՑ.

(Քաւէր անպատուհաս ի հօրէ: Բարեչոնի աշտարակաշինութիւնը եւ ազգերի ցիրուցան լինելը: Կոպայաշտութիւն).

Ջրհեղեղից յետոյ կարճ ժամանակի մէջ մարդիկ նորից մեղքի մէջ ընկան: Նոյը այգի տնկեց, և երբ խաղողը հասաւ, նորա հիւթից ըմպելիք պատրաստեց: Գինու զօրութիւնը չիմանալով, մէկ անգամ փոքր ինչ աւելի խմեց՝ հարբեցաւ և մերկ պառկեցաւ իւր վրանի տակ: Քամը տեսաւ իւր հօր մերկութիւնը և վատ կատակով պատմեց այն իւր եղբայրներին: Բայց Սեմ և Յաբէթ երբ լսեցին, իսկոյն գնացին իրանց հօր մօտ և վերարկուով ծածկեցին նորա մերկութիւնը: Նոյը Աստուծոյ հրամանով անիծեց Քամին՝ նորա վատ վարմունքի համար, իսկ Սեմին և Յաբէթին օրհնեց և միանգամայն գուշակեց, թէ Փրկիչը յառաջ կըգայ Սեմի սերունդից:

Աստուածային պատուիրանը ծնողաց պատուելու մասին.

Պատուեա՛ զհայր քո եւ զմայր, զի քարի լինիցի քեզ եւ երկայնակեաց լինիցիս ՚ի վերայ երկրի:

Ջրհեղեղից յետոյ մարդկային ազգը նորից բազմացաւ Նոյի երեք որդիներից: Առաջ բոլոր մարդիկ միասին էին ապրում և մէկ լեզուով խօսում: Ցեղի մէջ ամենից մեծը նահապետ էր համարւում, որ փոքրերին սովորեցնում էր թէ ինչպէս կեանք պէտք է վարել, կառավարում էր նրանց և ա-

բարիչ Աստուծուն զոհ էր մատուցանում։ Բայց յետոյ, երբ չարագործութիւնք և խռովութիւնք աշխարհիս մէջ շատացան, մի քանի ցեղեր խորհուրդ արին, թէ «այնպիսի քաղաք և աշտարակ շինենք, որ ծայրը մինչև երկինքը հասնի, մեզ համար փառք լինի և չցրուենք աշխարհիս երեսին»։ Բայց Աստուած չթողեց որ այն շինութիւնն աւարտեն. շինողների լեզուն այնպէս խառնակեց, որ չէին կարող միմեանց խօսքերը հասկանալ։ Ուստի թողին շինութիւնը և բոլոր աշխարհիս երեսին ցրուեցան։ Այս կերպով զանազան ազգեր ձևացան։ Մարդկային սերունդները զանազան կողմեր ցրուելով՝ իրանց ազգակցութիւնը մոռացան։ Իւրաքանչիւր սերունդ իւր համար գրեթէ նոր լեզու հնարեց, և Աստուծոյ վերայ նոր կարծիքներ ունեցաւ. նոցա մեծ մասը ճըշմարիտ Աստուծուն մոռացան և սկսան Աստուած համարել այն ամեն բաները, որ իրանց օգուտ կամ վնաս էին տալիս։ Ոմանք սկսան երկրպագութիւն անել արեգակին, լուսնին և աստղերին, ոմանք ևս՝ կենդանիները, ծովը, և երկիրս Աստուծոյ տեղ էին ընդունում։ Աստուածների մէջ ոմանց մեծ էին համարում, մէսներին փոքր, ոմանց բարի, ոմանց ևս չար։ Յետոյ սկսան ոսկուց, արծաթից, քարից և փայտից աստուածներ շինել և մեհեաններին մէջ դնելով՝ զոհ էին մատուցանում նոցա։ Այնպիսի արձանները *կուռք* էին կոչվում, և նոցա մատուցուած պաշտօնը *կռապաշտութիւն*։

Այս անօրէնութիւնը տարածուեցաւ բոլոր աշխարհիս վերայ և գրեթէ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկան։

Կռապաշտութիւն արգելող Աստուածային պատուիրանը.

Մի՛ արասցես քեզ զկուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր է, եւ որ ինչ յերկրի ի խոնարհ։

10. ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ԻՍԱՀԱԿ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԸ.

Մինչդեռ բոլոր մարդիկ կռապաշտութեան մէջ ընկած էին, Սեմի սերունդից Աբրահամ անունով մէկ արդար և ուղղահաւատ մարդ կար։ Աբրահամը Աստուծոյ հրամանով թողեց իւր հայրենիքը և գնաց բնակուեցաւ Քանանացոց երկրի մէջ։ Այնտեղ Աստուած քանի մի անգամ երևեցաւ նորան և յայտնեց՝ թէ նա Իսահակ անունով մի որդի պիտի ունենայ, որից մեծ ժողովուրդ պիտի յառաջանայ, որ Աստուծոյ ժողովուրդը կըկոչուի, որովհետև նա իւր դէպի Աստուած ունեցած հաւատը հաստատ պիտի պահէ, և Ինքը Քանանացոց երկիրը նրան պիտի տայ։ Աստուած այն ժամանակն իսկ հրամայեց, որ Աբրահամի բոլոր սերունդները թլփատուին, և ասաց թէ միայն նա կըհամարուի Իւր ժողովուրդ, որ թլփատուած կըլինի։

Աստուծոյ խոստմունքը կատարուեցաւ։ Աբրահամը հարիւր տարեկան եղած ժամանակ Իսահակ որդի ծնաւ։ Աբրահամը բոլոր սրտով սիրում էր իւր որդուն։ Աբրահամի հաւատը և հնազանդութիւնը Աստուած մեզ իբրև օրինակ տուեց հետևեալ կերպով. Մէկ անգամ Աստուած երևեցաւ Աբրահամին ու ասաց՝ «Աբրահա՛մ»։ Աբրահամը պատասխանեց՝ «Այստեղ եմ»։ Աստուած ասաց՝ «վէ՛ր առ այդ քո միակ որդուդ՝ Իսահակին, որին դու սիրում ես, և բեր նորան Ինձ մատաղ—ողջակէզ այն սարի գլխին, որ Ես ցոյց կըտամ քեզ»։ Միւս օր առաւօտը կանուխ վեր կացաւ Աբրահամը, էշը պատրաստեց, ողջակիզի համար փայտ կոտրեց, կապեց, առաւ հետը երկու ծառայ և իւր սիրելի որդի Իսահակին և գնաց Աստուծոյ ցոյց տուած տեղը։ Նոքա երեք օր ճանապարհին էին։ Երբ Աբրահամը հեռուից տեսաւ սարը, ասաց իւր ծառաներին. «Դուք այստեղ մնացէք, մեզի սպասեցէք, իսկ ես ու որդիս մինչև դիմացի սարը կերթանք, աղօթք կանենք ու կըդառնանք»։—Աբրահամը Իսահակին բարձեց փայտը. իսկ

ինքն առաւ կրակն ու սուրը, և նոքա երկուսը գնացին միասին: Ճանապարհին Իսահակն ասաց Աբրահամին. «Հայր, ահա մենք ունենք փայտ և կրակ, բայց ողջակիզի ոչխարն ո՞ւր է»: Պատասխան տուաւ Աբրահամը. «Աստուած Ինքը կըպատրաստէ Իւր համար ողջակիզի ոչխարը, որդեակ»: Եւ այնպէս երկուսը միասին շարունակում էին գնալը: Երբոր վեր ելան սարը, Աբրահամը սեղան շինեց, դասեց փայտը, և Իսահակին կապելով դրաւ նորա վերայ: Յետոյ վեր առաւ սուրը և ձեռքը բարձրացրեց, որ մորթի Իսահակին: Բայց յանկարծ Աստուծոյ հրեշտակը ձայն տուաւ նորան երկնքից. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ, մի՛ դիպչիր տղայիդ. հիմա հասկացայ, որ աստուածավախ մարդ ես, և իմ սիրոյս համար քո միակ որդուդ չըխնայեցիր»: Աբրահամը իւր շուրջը նայեցաւ և տեսաւ, որ նորանից ոչ հեռու մի ոչխար կախուած է ծառից: Աբրահամը առաւ նրան և զոհեց Աստուծուն: Սորա վերայ Աստուծոյ հրեշտակը միւս անգամ էլ ասաց Աբրահամին. «Այսպէս է ասում Տէրը, որովհետև դու հնազանդուեցար Իմ հրամանին, օրհնելով կ'օրհնեմ քեզ և բազմացնելով կբազմացնեմ քո սերունդը, ինչպէս երկնքի աստղերը և ծովի աւազը: Քո սերունդից յառաջ կըգայ աշխարհի Փրկիչը»: — Սորանից յետոյ Աբրահամն ու Իսահակը դարձան ծառաների մօտ և այնտեղից իրանց տունը: — Նոյն խոստմունքը Աստուած կրկնեց Իսահակին և նորա որդի Յակոբին, որ Իսրայէլ կոչուեցաւ, որ և աւելի արժանաւոր եղաւ Աստուծոյ օրհնութեանը, քան թէ նորա մեծ եղբայր Եսաւը:

11. ՅԱԿՈԲ ՆԱՀԱՊԵՏԻ ՈՐԴԻՔԸ.

Աբրահամի թոռը՝ Յակոբը, տասներկու որդի ուներ: Հայրն ամենից աւելի սիրում էր կրտսեր որդի Յովսէփին և կարեց նրան գեղեցիկ ծաղկեայ շորեր, իսկ եղբայրները ատում էին Յովսէփին և չէին ուզում նորա հետ քաղցրութեամբ խօսել:

Յովսէփը երկու երազ տեսաւ և պատմեց իւր եղբայրներին: Նա ասաց նրանց. «Լսեցէ՛ք իմ տեսած երազը. ինձ թուում էր, թէ մէկ դաշտում որայ էինք կապում. իմ որայս կանգնած էր ուղիղ, իսկ ձեր որանները պատեցին իմ որայս և երկրպագութիւն տուին նորան»: Եղբայրներն ասացին. «Մի՞թէ մեր վերայ թագաւո՞ր պիտի լինես դու կամ պիտի տիրե՞ս մեզ»: Մի քանի օրից յետոյ Յովսէփը իւր հօրն ու եղբայրներին միւս երազը պատմեց: «Երազումս, ասաց նա, ինձ երևցաւ, իբրև թէ արեգակը, լուսինը և տասնումէկ աստղեր ինձ երկրպագում էին»: Այս անգամին հայրն էլ յանդիմանեց նորան, ասելով. — Այդ ի՞նչ երազ է, մի՞թէ ես, մայրդ ու եղբայրներդ երկրպագութիւն պիտի անենք քեզ»: — Եղբայրներն աւելի չարացան Յովսէփի վերայ այս երազների համար:

Մէկ անգամ Յակոբի որդիքն արածացնում էին խաշները, իսկ Յովսէփը տանն էր մնացել: Հայրն ասաց նրան. «Գնա՛, տե՛ս, առողջ են արդեօք եղբայրներդ և մեր խաշները, և համբաւ բե՛ր ինձ: Յովսէփը գնաց և դաշտում մոլորուեցաւ: Այնտեղ մի մարդ գտաւ նորան և հարցրեց. «ի՞նչ ես փնտռում» (որոնում): — Յովսէփը պատասխանեց. «Ես իմ եղբայրներին եմ փնտռում. ասա՛ ինձ, ուր են արածացնում նոքա»: Անծանօթ մարդն ասաց նորան. «Նոքա այստեղ չեն. ես լսեցի որ նոքա ասացին, թէ հեռանանք այստեղից»: Եւ նա ցոյց տուեց նորան, թէ ո՛ր կողմն էին գնացել նորա եղբայրները: Երբ Յովսէփը գտաւ եղբայրներին և մօտենում էր նրանց, նոքա սկսեցին մէկ մէկու ասել. «Ահա գալիս է երազատեսը. եկէ՛ք սպանենք նորան և տեսնենք, թէ ի՞նչպէս պիտի կատարուին նորա երազները»: Ռուբէնը՝ որ մեծ եղբայրն էր, ասաց. «Չէ, եղբայրնե՛ր, ի՞նչու սպանենք նորան. ինչո՞ւ մեր ձեռքերը թաթախենք նորա արիւնի մէջ. աւելի լաւ է ձգենք նորան այս անջուր փոսի մէջ. թող երթայ ինքն իրան մեռնի»: Նորա միտքն այն էր, որ յետոյ հանէ Յովսէփին նոյնտեղից ու հօր ձեռքը հասցնէ: Երբ Յովսէփը

մօտեցաւ եղբայրներին, սոքա հանեցին նորա ծաղկեայ շորերը և գցեցին նորան փոսի մէջ։ Յետոյ նստեցին հաց ուտելու։ Յանկարծ տեսան, որ գալիս են վաճառականները, որոնք ուղտերով ապրանք էին տանում Եգիպտոս. Յուդան ասաց իւր եղբայրներին. «Յովսէփին սպանելուցը մեզ ինչ օգուտ. ինչևիցէ նա մեր եղբայրն է. եկէք ծախենք նորան այս վաճառականներին»։ Այդ մինչդին Ռուբէնը այնտեղ չէր։ Եղբայր-



ները լսեցին Յուդայի խօսքին, Յովսէփին հանեցին փոսից և քսան դահեկանով ծախեցին նոյն վաճառականներին։ Երբ վաճառականները Յովսէփին տարան, եկաւ Ռուբէնը։ Նա չգտաւ Յովսէփին փոսի մէջ և ասաց եղբայրներին. «Յովսէփը այնտեղ չէ, այժմ ո՞ւր կորչիմ ես»։ Եղբայրները մորթեցին մի ուլ, նորա արիւնով թրջեցին Յովսէփի շորերն ու այն հօրը ուղարկելով, հրամայեցին ասել. «այս շորերը մենք գտանք դաշտի մէջ. տես, արդեօք սա Յովսէփինը չէ»։ Յա-

կոբն իսկոյն ճանաչեց այն և տրտմութիւնից աղաղակեց. «Ո՛հ, այս իմ զաւակիս շորերն է. չար գազանի մէկը կերել է Յովսէփին, չար գազանը պատառել է Յովսէփիս»։ — Եւ նա իսկոյն պատառեց իւր հագուստը, ու նորա տեղ հագաւ քուրձ, այսինքն ձիու մազից հիւսած հաստ շոր, որ մեծ սուգի ու տրտմութեան նշան էր։ Աղբիւրի պէս աչքերից արտասուք էր թափում ու ասում. «Թողէք որ ես էս այս սուգով գերեզման մտնեմ, որդուս մօտ երթամ»։

Վաճառականները Յովսէփին Եգիպտոս տարան եւ այնտեղ ծախեցին Պետափրէս անունով հարուստ իշխանին, որ Եգիպտոսի թագաւորի մեծամեծներից մէկն էր եւ միանգամայն դահճապետ ու բանտերի գլխաւոր վերակացու։ Բայց Աստուած օգնում էր Յովսէփին և նա անուանի եղաւ բոլոր Եգիպտոսում, իբրև երազների քաջ մեկնող։

---

12. ՅՈՎՍԷՓԸ ԲԱՆՏՈՒՄԸ.

Սկզբում Յովսէփը կենում էր Պետափրէսի տանը իբրև ծառայ և ինչ-որ հրամայում էին, ամենն էլ սիրով կատարում էր։ Յետոյ Պետափրէսը տեսնելով, որ Յովսէփը հաւատարիմ, աչքաբաց ու շնորհալի տղայ է, սիրեց նորան և բոլոր իւր տան կառավարութիւնը նորան յանձնեց. Աստուած էլ Յովսէփի պատճառով օրհնեց Եգիպտացու տունը։ Բայց Յովսէփը դեռ չէր մոռացել եղբայրների հասցրած վիշտը, և ահա մի նոր դժբաղտութիւն հասաւ վրան։

Պետափրէսի չար կինը մի օր գանգատուեց իւր մարդուն, իբրև թէ Յովսէփը անհաւատարիմ է դէպի նա. և Պետափրէսը, առանց գործի իսկութիւնն իմանալու, Յովսէփին դրեց բանտը։ Բայց Աստուած այստեղ էլ չթողեց Յովսէփին։ Բանտապետն այնպէս սիրեց Յովսէփին, որ բանտի

բոլոր կալանաւորներին նորա ձեռքը յանձնեց և այնտեղի բոլոր գործերը նորան էր կատարել տալիս։ Նոյն միջոցին, երբ որ Յովսէփը բանտումն էր, թագաւորի իշխաններից երկու հոգի բերին այնտեղ։ Նոցանից մէկը թագաւորի տակառապետն էր, այսինքն գինիների վերակացու, և միւսը մատակարար, այսինքն սեղանի կամ կերակուրների վերակացու։ Սոցա արածը երևի մի ծանր բան էր, որ ամբողջ տարի մնացին բանտումն։ Մի օր Յովսէփը տեսաւ, որ սոքա երկուսն էլ շփոթուած, գլուխները կախած նստած են, հարցրեց նոցա, «Ի՞նչ է պատճառը, որ այսօր այդպէս տրտում էք»։—Զարմանալի երազներ տեսանք, ասացին նոքա, և մէկը չկայ, որ նոցա մեկնութիւնը տայ մեզ.—Յովսէփն ասաց նոցա. «Մի՞թէ չգիտէք որ մեկնութիւնը Աստուծոյ ձեռին է, բայց պատմեցէք ինձ»։

Տակառապետն ասաց. «Ինձ երևեցաւ որ դիմացս խաղողի մի որթ կայ։ Որթի վերայ էլ երեք հատ կանանչ ճիւղ և ճիւղերի վերայ հասած խաղող։ Իմ ձեռքումս էլ կար Փարաւոնի թագաւորի բաժակը, խաղողը ճմլում էի բաժակի մէջ և տալիս էի թագաւորի ձեռքը»։ Յովսէփն ասաց նորան. «Երեք ճիւղերը—երեք օր է. երեք օրից յետոյ Փարաւոնը յետ կը դարձնէ քեզ քո պաշտօնը, որ առաջուայ պէս Փարաւոնի բաժակը իւր ձեռքը տաս։ Եւ երբ որ յաջողութեան մէջ լինիս, դու էլ ինձ միտդ բեր և այս բանտիցը ազատիր. ես ոչինչ յանցանք չեմ արած»։—Երբ որ Յովսէփը մեկնեց տակառապետի երազը, մատակարարն էլ ասաց. «Ես տեսայ երազումս, որ գլխիս վերայ դրած ունէի երեք զամբիւղ. վերին զամբիւղումն էին թագաւորի սիրած ամեն տեսակ կերակուրներ և թռչուններն ուտում էին նրանցից»։—Յովսէփը պատասխանեց. «Երեք զամբիւղը—երեք օր է. երեք օրից յետոյ Փարաւոնը քո գլուխը կվերցնէ վրայիդ, մարմինդ կախ կըտայ փայտի վերայ և թռչունները քո միսը կուտեն»։ Ինչպէս ասաց Յովսէփը, այնպէս էլ եղաւ։ Երրորդ օրը Փարաւոնի ծննդեան տարեդարձն էր. ուստի և իւր ծառաների համար մեծ հանդէս կատարեց պալատում. միտը եկան տակառապետն ու մատակարարը.—Հրամայեց, որ տակառապետին իւր առաջուայ պաշտօնը տրուի, իսկ մատակարարը փայտի վերայ կախուի։ Բայց տակառապետը մոռացաւ Յովսէփին, որ այլևս երկու տարի մնաց բանտումն։

13. ՅՈՎՍԷՓ ՓԱՌՕՔԸ

Պատահեց որ Փարաւոնը երկու երազ տեսաւ։ Նորան երևեցաւ, իբր թէ կանգնած է գետի եղերքին։ Գետի միջից դուրս եկան եօթն գեղեցիկ և պարարտ կովեր և արածում էին ափում։ Նոցանից յետոյ նոյն գետից դուրս եկան ուրիշ եօթն կովեր, բայց այնպէս նիհար, որ նոցա նման նա երբէք չէր տեսել, և կանգնեցան նոյն կովերի մօտ։ Եւ այն նիհար կովերը պարարտ կովերին կերան։ Փարաւոնը զարթեցաւ, բայց կրկին քնեց։ Յետոյ դարձեալ մի ուրիշ երազ տեսաւ. իբր թէ մէկ փունջ ցորենի վրայ եօթն հատ լիք և գեղեցիկ հասկեր կային. նոցա մօտ դուրս եկան եօթն հատ էլ վատ և չոր հասկեր, և այս վատ հասկերը կերան այն եօթն լիք հասկերին։ Փարաւոնը զարթեցաւ։ Առաւօտուն վաղ կանչել տուաւ իւր բոլոր իմաստուններին և նոցա պատմեց երազները. բայց ոչ ոք չկարողացաւ նոցա մեկնութիւնը տալ։ Այն ժամանակ տակառապետն ասաց նորան. «Եգիպտոսում կայ մի ծառայ, Յովսէփ անունով Եբրայեցի երիտասարդ, որ երազ մեկնել լաւ գիտէ»։ Թագաւորը հրամայեց, որ իւր մօտ բերեն նորան։ Երբ Յովսէփն եկաւ, թագաւորն ասաց. «Ես երազ տեսայ, բայց մարդ չկայ, որ մեկնէ ինձ. իսկ քեզ համար ասում են, ինչ երազ որ լսես, կարող ես մեկնել»։ Յովսէփը պատասխան տուաւ. «Առանց Աստուծոյ կարելի չէ յաջող ու ճշմարիտ մեկնութիւն տալ տէրութեանդ

երազին»: Երբոր Փարաւոնը պատմեց իւր երազները, Յովսէփը ասաց. «Ցէը արքայ, քո տեսած երկու երազն էլ միևնոյն նշանակութիւնն ունին. եօթն գեր կովեր և եօթն լիք հասկեր՝ եօթն առատութեան տարի են, նոյնպէս և եօթն նիհար կովեր ու եօթն վտիտ հասկեր սովի տարիներ են: Այդ երազներով Աստուած քեզ յայտնում է, թէ ինչ պիտի անէ, այսինքն թէ առաջ եօթն տարի շարունակ առատութիւն կը լինի, յետոյ նոցա կը յաջորդեն եօթն սովի տարիներ: Ուրեմն մէկ իմաստուն ու խոհեմ մարդ պիտի ընտրես և բոլոր Եգիպտոսի վերայ կառավարիչ կարգես: Թող նա առատութեան տարիներին ցորեն հաւաքէ և սովի տարիներին Եգիպտացոց վերայ ծախէ, որպէսզի ժողովուրդը սովամահ չլինի»: Յովսէփի տուած մեկնութեան և խորհրդին շատ հաւանեցաւ Փարաւոնը և ասաց Յովսէփին. «Քեզանից իմաստուն, քեզանից խոհեմ մարդ ես չունիմ. ես քեզ կը դնեմ գլուխ բոլոր Եգիպտոսի վերայ, ամեն մարդ հնազանդ կը լինի քո հրամանին և ես միայն թագաւորական աթոռով քեզանից»:—Փարաւոնը իւր ձեռքից հանեց մատանին և հագցրեց Յովսէփի մատին, նմանապէս բեհեզեայ շոր հագցրեց, վզին ոսկի մանեակ կախեց. նստեցրեց նորան արքունի կառքի մէջ և նորա առջևից մունետիկը կանչում էր. «Երկրպագեցէք, սա է երկրի հայրը»: Այն ժամանակ Յովսէփը երեսուն տարեկան էր:

14. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՑՐՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ.

Թագաւորի երազները կատարուեցան: Հասան առատութեան եօթն տարիները: Յովսէփը անչափ ցորեն ժողովեց և դիզեց ամեն քաղաքներում: Սովի տարիներն էլ հասան: Յովսէփն սկսեց ցորեն ծախել: Քաղցածութիւնը տիրեց նաև Քանանացոց երկրին, ուր կենում էր Յովսէփի հայրը: Յա-

կոբն ասաց իւր որդուցը. «Ես լսեցի, որ Եգիպտոսում ցորեն է ծախւում. գնացէք այնտեղ և գնեցէք, որ քաղցածութիւնից չմեռնինք»: Յովսէփի տասն եղբայրները հաւաքուեցան ու գնացին Եգիպտոս, միայն Բենիամինը մնաց հօր մօտ տանը: Երբոր եղբայրները հասան Եգիպտոս, նոցա բերին Յովսէփի առաջ: Նոքա խոնարհ երկրպագեցին նորան, բայց չճանաչեցին, իսկ Յովսէփը ճանաչեց նոցա և իսկոյն միտը բերեց իւր տեսած երազները: Յովսէփը հարցրեց նոցա, «Որտեղից էք գալիս»: Նոքա պատասխան տուին. «Քանանացոց երկրից»: «Դուք լրտես էք, ասաց նա. դուք եկել էք իմանալու, թէ ինչ է լինում Եգիպտոսի երկրում»:—«Ո՛չ, տէր», պատասխանեցին եղբայրները, մենք ցորեն գնելու ենք եկել. ամենքս էլ մէկ մարդու որդի՝ խաղաղ ու հանդարտ մարդիկ ենք, մենք տասներկու եղբայր էինք. մեզանից մէկը կորաւ, իսկ փոքրը մնաց տանը հօր մօտ»:—Եթէ դուք ճշմարիտն էք խօսում, ասաց նա, ձեզանից մէկին ուղարկեցէք տուն, թող նա բերէ ձեր փոքր եղբօրը, իսկ միւսներդ իբրև գերի կը մնաք ինձ մօտ»: Նա հրամայեց նրանց բանտը տանել: Բայց երրորդ օրը Յովսէփն ասաց նոցա. «Ես աստուածավախ մարդ եմ և չեմ ուզում որ ձեզ անիրաւութիւն լինի. ուրեմն թէ որ դուք անվնաս ու անմեղ մարդիկ էք, այսպէս արէք. թող ձեզանից միայն մէկը մնայ բանտի մէջ, իսկ դուք ձեր առած ցորենը տարէք տուն և ապա ձեր կրտսեր եղբօրը բերէք ինձ մօտ, որ իմանամ թէ ճշմարիտ է ձեր խօսքը. իսկ առանց նորան ինձ չերևաք»:—Նա հրամայեց նոցա առջև Շմաւոնին կապել, յետոյ պատուիրեց, որ նոցա պարկերը ցորենով լցնեն ու բերած փողերն էլ ամեն մէկինն իր պարկի մէջ դնեն թաքուն: Եւ եղբայրներն սկսեցին մէկմէկու ասել. «Աստուած մեզ պատժում է մեր եղբօր դէմ արած մեղքի համար. մենք տեսնում էինք նորա նեղութիւնը և ուշ չէինք դարձնում նորա աղաչանքին»: Ռուբէնն էլ վրայ բերաւ, թէ «մտերնիդ

չէ, որ ասում էի, թէ այդ մանուկի դէմ մեղք մի գործէք, և դուք ինձ չլսեցիք. և ահա այժմ մենք ենք տանջւում»: Նոքա այսպէս խօսում էին և չգիտէին, որ Յովսէփը նոցա ամեն մի ասածը հասկանում էր, որովհետև նոցա հետ թարգմանով էր խօսում: Յովսէփը հեռացաւ նոցանից և լաց էր լինում: Եղբայրները տրտմութեամբ լցուած ուղևորուեցան դէպի տուն: Ճանապարհին երբ որ իջևանեցան, նոցանից մէկը բաց արեց իւր պարկը և իւր փողերը տեսաւ նորա մէջ: Նա այդ պատմեց եղբայրներին. նոքա ևս իրանց պարկերում միևնոյնը գտան: Նոքա զարմացած մէկմէկու ասում էին. «Այս ինչ փորձանք է բերում Աստուած մեր գլխին»: Երբ նոքա հասան տուն և ինչ-որ Եգիպտոսում պատահել էր նոցա՝ պատմեցին, Յակոբը շատ տրտմեցաւ և ասաց. «Դուք ինձ անզաւակ թողեցիք. Յովսէփը չկայ, Շմաւոնը չկայ, հիմա Բենիամինին էլ ուզում էք տանել. այս ամեն փորձանքներն ինձ համար էին պահուած: Չէ, Բենիամինին չեմ արձակիլ. թէ որ ճանապարհին հիւանդանայ կամ բան պատահի, լալով ողբալով գերեզման պիտի իջնեմ:

15. ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏՆ ԵԳԻՊՏՈՍ.

Երբոր Եգիպտոսից բերած ցորենը հատաւ, Յակոբն ասաց իւր որդոցը. «Գնացէք էլի Եգիպտոս՛և, եթէ կարելի է, գնեցէք ցորեն»: Նոքա ասացին. «Եգիպտոսի իշխանը հրամայեց մեզ, որ առանց Բենիամինի չերևանք նորա աչքին, ուստի թէ որ Բենիամինին կրտաս՝ կերթանք, ապա թէ ոչ, պէտք է առանց հացի մնանք ու ամենքս քաղցածութիւնից մեռնենք»: Յակոբն ասաց. «Ի՞նչ հարկ կար Եգիպտոսի իշխանին ասելու, որ մէկ ուրիշ եղբայր էլ ունիք»: Նոքա պատասխանեցին. «Ի՞նչ անէինք, բան չթողեց որ չըհարցնէր. «ունի՞ որդիքն էք, ձեր հայրը ո՞ղջ է, ուրիշ եղբայր էլ ու-

նի՞ք». ունի մտքիցը կանցնէր, որ նա պէտք է ասէր մեզ, թէ գնացէք ձեր եղբօրն էլ այստեղ բերէք»: Յուդան ասաց. «Արձակիր Բենիամինին ինձ հետ. ես երաշխաւոր եմ նորա համար: Եթէ ես նորան յետ չբերեմ, թող նորա յանցանքը իմ վերայ լինի բոլոր իմ կեանքում»: Այն ժամանակ Յակոբն ասաց. «Եթէ այդպէս է, եկէք այսպէս արէք. հետերնիդ ընծաներ տարէք Եգիպտոսի իշխանին մեր երկրի բերքերից՝ ռետին (անուշահամ ու անուշահոտ իւղ), մեղր, խունկ և ընկոյզ. և պարկերումդ գտած փողերն էլ յետ դարձրէք նորան»: Եղբայրները հաւաքուեցան ու ճանապարհ ընկան: Երբ նոքա եկան Յովսէփի մօտ, նա իւր ծառային հրամայեց, որ նրանց տանի տուն: Եղբայրները վախեցած մէկմէկու ասում էին. «Մեզ անպատճառ կըմեղադրեն մեր պարկերումը գտած փողերի համար և գերիի պէս կըպահեն իրանց մօտ»: Նոքա ասացին հազարապետին. «Երբ մենք վերադառնում էինք Եգիպտոսից, ահա ինչ պատահեց մեզ՝ — մենք մեր պարկերում գտանք այն փողերը, որ մենք վճարել էինք ցորենի համար»: Բայց նա ասաց նոցա. «Մի վախենաք, հանգիստ կացէք. Աստուած ինքը յետ է դարձրել ձեզ ձեր փողերը. ես ամենն ստացել եմ, ինչպէս հարկն էր»: Շուտով Շմաւոնին էլ բերին նոցա մօտ: Եղբայրներն իմացան, որ իշխանի տանը պիտի ճաշ ուտեն ու պատրաստեցին իրանց ընծաները: Կէսօրին երբոր Յովսէփը տուն եկաւ, իրանց հետ բերած ընծաները մատուցին նրան ու երկրպագութիւն արին: Հարցրեց Յովսէփը. «Ի՞նչպէս էք, ինչպէս է, առո՞ղջ է ձեր ծերունի հայրը»: — Ողջ ու առողջ է քո ծառադ՝ մեր հայրը, — պատասխան տուին նոքա: Յովսէփը տեսաւ Բենիամինին ու հարցրեց. «Ա՞յս է ձեր փոքր եղբայրը, որ ինձ մօտ պիտի բերէիք. Աստուծոյ ողորմութիւնը վրադ լինի, որդեակ»: Այստեղ Յովսէփը շուտ հեռացաւ, որովհետև աչքերն արդէն լցուած էին արտասուքով. նա մտաւ միւս սենեակը և այնտեղ լաց եղաւ: Յետոյ երեսը լուաց, սիրտը ամուր բռնեց,

դուրս եկաւ և ասաց. «Կերակուր բերէք»։ Կերակուրները բերին ու իրան առանձին տուին, եղբայրներին առանձին, նորանց հետ ճաշող եգիպտացիներին էլ առանձին։ Յովսէփն ինքը յատկացրեց եղբայրների համար տեղերը նոցա նստացրեց աւագութեան կարգով։ Այդ զարմացրեց եղբայրներին։ Յովսէփը իւր սեղանից էր ուղարկում նոցա կերակուր և Բենիամինին հինգ անգամ աւելի էր տալիս, քան թէ ուրիշներին. այսպէս եղբայրները կերան ու խմեցին նորա մօտ։ Ճանապարհ ձգելիս, Յովսէփը հրամայեց որ նոցա պարկերը ցորենով լցնեն ու դնեն նոցա մէջ ցորենի համար բերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ, բացի փողերից, հրամայեց դնել իւր արծաթէ սկիհն էլ։

16. ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՃԱՆԱՉԵՑԻՆ ՅՈՎՍԷՓԻՆ.

Երբոր եղբայրները փոքր ինչ հեռացան քաղաքից, Յովսէփն ուղարկեց նոցա յետևից իւր հազարապետին։ Հազարապետը հասնելուն պէս՝ սկսաւ սաստկութեամբ խօսել նոցա հետ. «Ինչո՞ւ բարութեան փոխարէնը չարութեամբ էք հատուցանում։ Ինչո՞ւ գողացաք իմ տիրոջս արծաթէ սկիհը»։ Եղբայրները սարսափեցան ու ասացին. «Այդ ի՞նչ խօսքեր են որ լսում ենք, տէր, քա՛ւ լիցի, որ մենք այդպիսի բան անենք։ Մեր մէջից ում մօտ որ գտնուի սկիհը, թող նա մահապարտ լինի, իսկ մենք ամենքս էլ գերի լինինք մեր տիրոջը»։—Ո՛չ, ասաց հազարապետը, ում մօտ որ գտնուի սկիհը, թող նա լինի ինձ գերի, մեւսները յանցանք չունին»։ Նոքա բաց արին իրանց պարկերը։ Հազարապետը մեծից մինչև փոքրի պարկերը նայելուց յետոյ, սկիհը գտաւ Բենիամինի պարկի մէջ։ Սարսափը տիրեց եղբայրներին։ Ա.հուդողով նոքա էլի յետ դարձան քաղաք։ Յովսէփը դեռ ևս տանն էր։ Ամենքը գնացին Յովսէփի մօտ ու երեսի վրայ ընկնելով երկրպագութիւն արին։ Յովսէփն ասաց նոցա. «Ի՞նչ է այդ

ձեր արածը»։ Յուդան պատասխան տուաւ. «Ի՛նչ պիտի ասենք մեր տիրոջը, ի՞նչ պատասխան տանք, ինչո՞վ կարող ենք արդարանալ։ Աստուած մեր մեղքերի համար պատժում է մեզ։ Ահա ամենքս էլ քո գերիներն ենք, թէ մենք և թէ նա, որի մօտ գտնուեցաւ սկիհը»։ Բայց Յովսէփն ասաց. «Քա՛ւ լիցի, որ ես այդպիսի բան անեմ։ Ում մօտ որ գըտնուեցաւ սկիհը, նա միայն կըլինի իմ գերիս, իսկ դուք բարով գնացէք ձեր հօր մօտ»։ Այն ժամանակ Յուդան սկսեց աղաչել, որ նա այդ չանէ։ «Թէ որ հիմա երթանք մեր հօր մօտ, ասում էր նա, և մեզ հետ չլինի մեր փոքր եղբայրը, տրտմութիւնից իսկոյն կըմեռնի ծերունին։ Ես երաշխաւոր եղայ հօրս Բենիամինի համար, ես ասացի նորան, որ եթէ յետ չբերեմ երեխային, յանցաւոր լինիմ բոլոր իմ կեանքում։ Եւ ի՞նչպէս երևամ հօրս։ Ո՛չ, ես չեմ կարող հօրս չարչարանքն ու մահը տեսնել»։ Չկարողացաւ Յովսէփը այլևս դիմանալ։ Նա բարձրաձայն լաց եղաւ և ասաց. «Ես Յովսէփն եմ. յիրաւի մինչև հիմա կենդանի՞ է հայրս»։ Եղբայրներն այնպէս շփոթուեցան, որ չկարողացան մի խօսք էլ ասել։ «Մօտ եկէք», ասաց Յովսէփը։ Նոքա մօտ եկան։ Նա կրկնեց. «Ես ձեր այն Յովսէփ եղբայրն եմ, որին դուք ծախեցիք. բայց մի տրտմիք ինձ ծախելու համար, որովհետև Աստուած ինձ ուղարկեց այստեղ, որ ձեր փրկութեան պատճառ լինիմ։ Շուտ արէք, գնացէք իմ հօրս մօտ և պատմեցէք նորան իմ փառքի մասին ու ասացէք՝ ահա թէ ինչ է ասում քո որդի Յովսէփը. «Աստուած ինձ բոլոր Եգիպտոսի տէր կարգեց. ել ինձ մօտ, մի ուշանար։ Դու կըբնակուիս ինձ մօտ։ Ես կըկերակրեմ քեզ, որովհետև էլի հինգ տարի սով կըլինի»։ Յետոյ իւր եղբօր Բենիամինի վզովը փաթաթուեցաւ ու լաց եղաւ. Բենիամինն էլ գրկում էր նորան ու լաց էր լինում։ Յովսէփը մեւս եղբայրներին էլ համբուրում էր և նրանց գըրկելիս լաց էր լինում։ Նոքա էլ սիրտ արին և սկսեցին խօսել Յովսէփի հետ։ Նա շորեր պարգևեց նոցա, իսկ հօրն ըն-

ծաներ ու կառքեր ուղարկեց, որ գայ։ Յովսէփը եղբայրնե-
րին ճանապարհ գցելիս ասաց. «ճանապարհին չ'վիճէք»։

17. ՅԱԿՈԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽՈՒԻԼԸ.

Եղբայրներն եկան տուն և ասացին իրանց հօրը. «Յով-
սէփը կենդանի է։ Եգիպտոսի թագաւորը իւր ամբողջ երկ-
րի վերայ իշխան կարգեց նորան»։ Յակոբը սրտի ուրախու-
թիւնից չէր ուզում հաւատալ. բայց երբոր Յովսէփի ուղար-
կած կառքերն ու ընծաները տեսաւ, նորից երիտասարդանա-
լու պէս կենդանացաւ ծերունին։ «Եթէ յիրաւի Յովսէփ որ-
դիս դեռ կենդանի է, ասաց նա, սորանից մեծ ուրախու-
թիւն չի կարող լինել ինձ համար. ուրեմն քանի որ չեմ
մեռած՝ գնամ տեսնեմ նորան»։ Եգիպտոս գալուց առաջ Յա-
կոբը Աստուծուն զոհ մատոյց։ Աստուած տեսիլքով յայտ-
նուեցաւ Յակոբին ու ասաց. «Մի՛ վախենար, գնա՛ Եգիպ-
տոս։ Ես ինքս կըգամ քեզ հետ Եգիպտոս, և ինքս դարձեալ
կըհանեմ քո ազգատոհմը այնտեղից։ Յովսէփը իւր ձեռքով
կըփակէ քո աչքերը»։ Յակոբը իւր հետ Եգիպտոս տարաւ
իւր բոլոր որդոցը, թոռներին, բոլոր խաշները և իւր բոլոր
ստացուածքը։ Յովսէփն իսկոյն կառքը պատրաստել տուաւ
և իւր հօր առաջը դուրս եկաւ։ Մօտը հասնելուն պէս վր-
զովը փաթաթուեցաւ ու բարձր ձայնով լաց եղաւ։ Հայրն
էլ ասաց արտասուելով. «Այսուհետև սիրով կմեռնիմ, որով-
հետև տեսայ որ դու կենդանի ես»։ Ինքը Փարաւոնն էլ կա-
մեցաւ տեսնել Յովսէփի հօրը և եղբայրներին։ Երբ նոքա
ներկայացան թագաւորին, հարցրեց նոցա. «Ձեր գործն ինչ
է»։ Նոքա պատասխան տուին. «Մենք ոչխարների հովիւ ենք,
եկել ենք այս երկրի մէջ բնակուելու, որովհետև Քանա-
նացոց երկրումը սաստիկ սով է»։ Նա ասաց Յովսէփին. «Ե-
գիպտացոց աշխարհը բաց է քո առաջ, երկրի ամենալաւ
տեղումը բնակեցրու՛ հօրդ ու եղբայրներիդ»։ Յետոյ թագա-

ւորը հարցրեց Յակոբին. «Քանի՞ տարի են քո կենաց օրերը»։
Յակոբը պատասխանեց. «Հարիւր երեսուն տարեկան եմ. սա-
կաւ և դժուար են կեանքիս օրերը»։

Յակոբ նահապետը տասն և եօթ տարի կացաւ Եգիպ-
տոսի մէջ։ Երբոր տեսաւ, որ մահուան ժամանակը մօտե-
ցել է, կանչեց Յովսէփին և ասաց նորան. «Երբոր ես մեռ-
նեմ, չթաղես ինձ Եգիպտոսում, ես կամենում եմ իմ հայ-
րերի հետ ննջել, դուրս տար ինձ Եգիպտոսից և նոցա գե-
րեզմանումը թաղիր»։ Յովսէփը պատասխանեց. «Խօսքդ կըկա-
տարեմ»։ Յակոբն ասաց. «Երդուիր ուրեմն»։ Յովսէփը եր-
դուեցաւ։ Մեռնելուց առաջ Յակոբը օրհնեց իւր բոլոր որ-
դոցը, Յուդայի համար մարգարէացաւ, թէ նորա սերունդ-
ներից չեն պակասիլ թագաւորները, մինչև որ չգայ Փրկիչը։
Յետոյ պառկեցաւ իւր մահճի վերայ և վախճանեցաւ։ Յով-
սէփն ընկաւ իւր հօր երեսին, համբուրեց ու լաց եղաւ։ Յա-
կոբի բոլոր որդիքը հաւաքուեցան և ինչպէս հայրը պա-
տուիրել էր՝ այնպէս էլ արեցին. տարան Քանանացոց երկիրը
և այնտեղ թաղեցին։ Հօր մեռնելուց յետոյ եղբայրներն ա-
սացին. «Ի՞նչ պիտի անենք, եթէ Յովսէփը ոխ պահելով իւր
սրտի մէջ՝ կամենայ մեզանից վրէժ առնել այն չարութիւն-
ների փոխարէն, որ մենք գործեցինք նորա դէմ»։ Ուստի սիրտ
արին, մարդ ուղարկեցին Յովսէփի մօտ ասելու, թէ «մեր
հայրը մեռնելիս պատուիրեց, որ թողութիւն խնդրենք քե-
զանից. ուրեմն ներիր մեզ մեր յանցանքը»։ Լաց եղաւ Յով-
սէփը այդ սրտաշարժ մեղայի վերայ։ Նա կանչեց իւր եղ-
բայրներին և ասաց. «Ես վրէժ չեմ առնիլ ձեզանից. ես
վախենում եմ Աստուածուց։ Դուք ուզեցիք ինձ չարիք անել,
բայց Աստուած ինձ բարիք կամեցաւ, որ ժողովուրդի այսքան
բազմութիւնը ազատուի մահից։ Ուրեմն մի վախենաք. ես
կըկերակրեմ ձեզ և ձեր որդոցը»։

18. ՀՐԷԱՑՔ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.

Յակոբի մեռնելուց յետոյ քիչ ժամանակի մէջ նորա ցեղը բազմացաւ և մի ազգ յառաջացաւ, որ Եբրայեցի, Հրէայ և Իսրայէլացի էր կոչվում։ Այն ազգը տասներկու ցեղ բաժանուեցաւ՝ Յակոբի տասներկու որդոց թոռովը։ Իսրայէլացիք Եգիպտոսի մէջ բնակուելով, սակաւ առ սակաւ իրանց հաւատն անգամ մոռացան։ Աստուած նրանց պատժելու համար՝ իւր ողորմութիւնից զրկեց։ Եգիպտացոց Փարաւոն կոչուած թագաւորներն սկսան ծանր աշխատութիւններով նրանց նեղացնել. իսկ Փարաւոններից մէկը սոսկալի հրաման հանեց, որ Հրէից նորածին բոլոր արու տղայք սպանուին։ Այն ժամանակ Հրէայք յիշեցին իրանց Աստուծուն և սկսան Նորա ողորմութիւնն ու օգնութիւնը խնդրել։ Ողորմածն Աստուած խղճալով նոցա վերայ՝ նոցա ազատարար ուղարկեց Մովսէսին։

19. ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷՆ.

Երբոր Մովսէսը ծնուեցաւ, մայրը սկզբում նորան իւր տան մէջ պահեց, որ Եգիպտացիք չսպանեն, յետոյ դրաւ ձիւթով ծեփած կողովում և ձգեց գետում բուսած եղեգների մէջ այն տեղի մօտ, ուր լողանում էր Փարաւոնի աղջիկը։ Թագաւորի աղջիկը տեսաւ այն փոքրիկ կողովը, միջից հանեց տղային, իրան որդեգիր արաւ և անունը դրաւ Մովսէս, որ նշանակում է *ջրից հանած*։ Մովսէսը մեծացաւ և թագաւորի պալատի մէջ կրթուեցաւ. բայց աւելի լաւ էր համարում չարչարուիլ իւր ազգակից՝ Աստուծոյ ժողովրդի հետ, քան թէ միայնակ երկրաւոր զուարճութիւնները վայելել։ Մի անգամ Մովսէսը տեսաւ, որ մի Եգիպտացի սաստիկ ծեծում է մի Հրէայի։ Նա Հրէային տէր կացաւ և նո-



րա հակառակորդին սպանեց։ Փարաւոնն այս լսելով, հրամայեց որ Մովսէսին սպանեն։ Մովսէսը մերձակայ Արաբացոց երկիրը փախչելով՝ մահից ազատուեցաւ։

Արաբիայի մէջ Յոթոր քրմի տանը մնաց. նորա դստեր հետ ամուսնացաւ և քառասուն տարի կացաւ նորա մօտ։ Շատ էր ցաւում դժբախտ Իսրայէլացոց վերայ. այնպէս էր կարծում, թէ այն ազգը նեղութիւնից այնպէս պիտի փճանայ, ինչպէս որ կրակով ոչնչանում է բոյսը։ Մէկ անգամ դաշտի մէջ տեսաւ մի փշոտ թուփ՝ մորենի, որ վառվում էր բայց չէր այրվում (անկէզ մորենի)։ Մօտեցաւ այն թրփին և նորա միջից ձայն լսեց, որ ասում էր. «Ես եմ քո հայրերիդ Աստուածը։ Ես տեսնում եմ իմ ժողովրդեանս

չարչարանքը և կամենում եմ ազատել նորան։ Ուրեմն գնա՛ Փարաւոնի մօտ և իմ ժողովուրդս Եգիպտոսից հանի՛ր»։ Մովսէսը հրաժարուեցաւ այս պաշտօնը կատարելուց, պատճառ բերելով՝ թէ իրան չեն հաւատալ։ Այն ժամանակ Աստուած նորան տուաւ հրաշագործութիւնները անելու զօրութիւն։ Մովսէսը իւր Ահարոն եղբօր հետ Փառաւոնի դիմացն ելաւ և տասն հրաշալի պատիժներով ստիպեց թագաւորին որ Հրէաներին արձակէ։ Տասներորդ պատժից առաջ Մովսէսը հրամայեց, որ ամեն մէկը իրանց հօտի միջից մի-մի գառն ընտրեն, երեք օրից յետոյ մորթեն, նորա արիւնով նշան դնեն իրանց դռների վերայ և այն ուտեն եղէգ ասուած գառն խոտով և բաղարջ հացով։ Եւ ասաց նոցա թէ «Այս գիշեր Աստուած պէտք է կոտորէ Եգիպտացոց անդրանիկներին, իսկ առանց վնասելու կանցնի այն դռների մօտով, որոնց վերայ արիւն է քսուած»։ Հրէայք Մովսէսի հրամանը կատարեցին։ Գիշերը բոլոր եգիպտացոց տների մէջ լաց ու ողբ տարածուեցաւ։ Ամենայն տան մէջ մեռել կար, Հրէաների տներից զատ։ Նոյն իսկ Եգիպտացիք խնդրում էին Հրէաներին, որ շուտով հեռանան իրանց երկրից։

Այն օրից սկսած՝ Հրէայք ամենայն տարի մորթում են և ուտում գառն՝ եղէգնով ու բաղարջ հացով, իբրև նշան, որ գառան արիւնով ազատուեցան Եգիպտոսի ցաւալի վիճակից։ Այն օրը Պասէք կամ Զատիկ կոչուեցաւ, որ նշանակում է անցք կամ ազատութիւն։

20. ՀՐԷԱՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ.

Երբ Եգիպտացիք իրանց աննչեցեալներին թաղեցին, սկսան զղջալ, որ Իսրայէլացոց թող տուին։ Փարաւոնը իւր զօրքերով նոցա յետևից ընկաւ և կարմիր ծովի եղերքին նոցա հասաւ։ Իսրայէլացիք վախեցան. բայց Մովսէսը քաջալերելով նրանց, գիշեր ժամանակ Աստուծոյ հրամանով գաւազանը

ջրին խփեց։ Այն ժամանակ մի սաստիկ հողմ վերկացաւ, ծովի ջրերը երկու բաժանեց և յատակը չորացրեց։ Իսրայէլացիք ցամաք յատակի վրայից անցան։ Իսկ ջուրը պարսպի նման աջ ու ձախ կողմը կանգնած էր։ Եգիպտացիք նոցա ետևից ընկան և գրեթէ ծովի մէջտեղն էին, երբ Իսրայէլացիք արդէն անցան միւս եղերքը։ Այն ժամանակ Մովսէսը իւր գաւազանը մեկնեց դէպի ծովը և ջուրը իսկոյն միացաւ։ Փարաւոնը և նորա բոլոր զօրքերը խեղդուեցան։

Իսրայէլացիք յաւաջ տարան իրանց ճանապարհը Արաբիայի անապատի մէջ։ Նոքա այն ճանապարհորդութեան մէջ շատ նեղութիւններ կրեցին։ Բայց ողորմածն Աստուած ամեն բանի մէջ օգնում էր նոցա. անապատի մէջ նոցա ճանապարհ էր ցոյց տալիս. Նորա հրամանով օդի մէջ մեկ սիւն երևեցաւ, որ ցերեկը ամպի պէս էր և Իսրայէլացոց արևից էր պաշտպանում, իսկ գիշերը կրակի նման էր լինում և ճանապարհը լուսաւորում էր։ Երբ նոքա Եգիպտոսից առած բոլոր հացը հատացրին, Աստուած մանանայ տուաւ նոցա, այսինքն սննդարար քաղցր հատիկներ, որ ամեն առաւօտ անապատի մէջ իջնում էր մեծ քանակութեամբ։ Երբ նոցա ջուրը պակասեցաւ, Մովսէսն իւր գաւազանը ժայռին խփեց և քարի միջից ջուր բղխեցրեց։ Ամաղեկացիք ճանապարհին նոցա վերայ յարձակուեցան, բայց Իսրայէլացիք Աստուծոյ օգնութեամբ յաղթեցին նրանց։

21. ՍԻՆԱՑ ԼԵՐԱՆ ՎԵՐԱՑ ԱՍՏՈՒԾՈՑ ՏՈՒԱԾ ՕՐԻՆՔՆԵՐԸ

Իսրայէլացիք՝ Եգիպտոսից դուրս գալուց յիսուն օր յետոյ, Սինայ լերան մօտեցան։ Երբ այնտեղ կանգնած էին, թանձր մառախուղ Սինայի գագաթը պատեց, կայծակներ էին արձակում և որոտմունք էր լինում։ Իսրայէլացիք լսե-

ցին Աստուծոյ ձայնը, որ ժողովրդին յայտնում էր Իւր սուրբ կամքը, ասելով՝

1. *Ես եմ Տէր Աստուած քո, եւ մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն։*

Ես եմ քո Տէր Աստուածը, և Ինձանից զատ՝ ուրիշ աստուածներ չունենաս։

2. *Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր, եւ ո՛ր ինչ յերկրի ի խոնարհ, եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի՝ մի՛ երկրպագանիցես նոցա եւ մի՛ պաշտեսցես զնոսա։*

Քեզ համար կուռք մի՛ շինիր, ո՛չ վերևի բաների նմանութեամբ, ո՛չ ներքևը՝ գետնի վերայ եղածների, և ո՛չ գետնի տակ՝ ջրերի մէջ եղածների նմանութեամբ. մի՛ երկրպագիր նոցա և մի՛ պաշտիր. կամ թէ՝ աշխարհի մէջ եղած ո՛չ մի բան իբրև Աստուած մի՛ պաշտիր, կռապաշտութիւն մի՛ անիր, հոգուդ հակառակ բան մի՛ անիր ո՛չ վոզի համար, ո՛չ ուրիշին հաճոյանալու համար. մի՛ արբենար և որկրամոլ մի՛ լինիր։

3. *Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ անուտեաց։*

Չուր տեղը Աստուծոյ անունը մի՛ յիշիր։ Աստուծոյ անունը յիշիր միայն աղօթքի և խօսակցութեանց մէջ՝ մեծ յարգանքով։ Պէտք չեղած տեղը երդում մի՛ անիր։ Սուտ՝ մի՛ խօսիր. մանաւանդ սուտ երդում մի՛ անիր։

4. *Ցիշեա՛ սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսջիր եւ արասջիր զամենայն գործս քո, իսկ զեօթներորդ օրն շաբաթ նուիրեա՛ Տեառն քումմ։*

Մտքումդ պահիր, որ շաբաթ և տօն օրերը պէտք է սուրբ գործեր անել և ո՛չ թէ անգործութեամբ անցկացնել, վեց օրուայ մէջ քո բոլոր գործքերդ արա՛, իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստուածն նուիրիր՝ այն օրը աշխատիր Աստուծոյ և աղքատների համար։

5. *Պատուեա՛ զհայր քո եւ զմայր քո, զի քարի լինիցի քեզ եւ երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի։*

Պատուիր քո ծնողներիդ և նոցա, որոնք ծնողաց տեղ են բռնում, այսինքն մեծերիդ, ուսուցիչներիդ և բարերարներիդ։ Այն ժամանակ քեզ համար լաւ կըլինի և երկար



կապրիս աշխարհիս մէջ։ Նոցա յարգիր, նոցա կարօտութեան ժամանակ օգնիր։

6. *Մի՛ սպանաներ։*

Մի՛ սպանիր. ո՛չ գործով, ո՛չ խօսքով ո՛չ ոքին չարհամարհես. ո՛չ քո և ո՛չ այլոց առողջութեանը վնաս մի՛ տար. կարօտեալ մարդկանց օգնիր։

7. *Մի՛ շնար։*

ՇնուԹիւն մի՛ անիր, քո և այլոց հոգու մաքրուԹիւնը մի՛ ապականիր անվայել գործերով, խօսքերով և հայեցուածքով։

8. *Մի՛ գողանար։*

Քո և այլոց ստացուածքին վնաս մի՛ տար, գողուԹիւն մի՛ անիր, գտած բանդ մի՛ պահիր. ուրիշի ունեցածը մի՛ յափշտակիր, մշակի վարձը մի՛ կտրիր, կաշառք մի՛ առնիր։

9. *Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ։*

Ուրիշի բարի անունը մի՛ վնասիր, զրպարտուԹիւն մի՛ անիր, լրտեսուԹիւն մի՛ անիր, ուրիշների գործերը և խօսքերը ՚ի վատն մի՛ մեկնիր, բամբասանք մի՛ անիր, անձիդ վերայ չար բաներ մի՛ մտածիր, բամբասանքի և զրպարտուԹիւնների մի՛ լսիր։

10. *Մի՛ ցանկանար տան ընկերի քո եւ մի՛ ամենայնի, որ ինչ ընկերի քո իցէ։*

Նախանձու աչքով մի՛ նայիր ուրիշի բախտաւորուԹեան վերայ և գոհ եղիր քո ունեցածով։

Երբ ձայնը դադարեց, Մովսէսը լերան վերայ բարձրացաւ և այնտեղ Աստուծուց առաւ երկու քարեղէն տախտակներ, որոնց վերայ գրուած էին Աստուծոյ տասն պատուիրանները. նոյնպէս և ուրիշ պատուիրաններ առաւ, ԹէՀ ինչպէս պէտք է կատարել ԱստուածպաշտուԹեան ծէսերը և սրբուԹեամբ ապրիլ։ Ժողովուրդն այն օրէնքները լսելով երդուեցաւ որ սրբուԹեամբ կրկատարէ ամենը։ Այն ժամանակ Աստուած յայտնեց, ԹէՀ Իսրայէլացոց մէջ մի մեծ Մարգարէ պիտի գայ, որ կը բացատրէ նոցա Աստուծոյ կամքը։

Օրէնքի տախտակները դրուեցան տապանակի մէջ, որ ազնիւ փայտից շինուած մէկ արկղ էր, և ոսկով ծեփած։ Այն տապանակը Մովսէսը դրաւ առանձին վրանի մէջ, որ խորան կոչուեցաւ։ Խորանի առջև շինուած էր սեղան կամ զոհարան։ Հրէայք այնտեղ գնում էին Աստուծուն աղօԹելու

և զոհ մատուցանելու. համար։ Մովսէսը Աստուծոյ հրամանով իւր Ահարօն եղբօրը քահանայապետ կարգեց, իսկ նորա որդոցը քահանայ դրաւ։

Մովսէսը բոլոր օրէնքները մէկ գրքի մէջ գրեց։ Այս կերպով ձևացաւ Սուրբ Գիրքը։ Հրէայք Աստուծուց իրանց տուած օրէնքների յիշատակն անմոռանալի պահելու համար, ամենայն տարի սկսան տօնել Յինանց վերջի օրը, որ է Պենտեկոստէն։ Այն տօնը Յիսներորդաց տօն էր կոչւում այն պատճառով, որ կատարվում էր Զատկից յիսուն օր յետոյ։ Այն օրը Հրէայք սովորուԹիւն ունէին իրանց տները զարդարել ծաղիկներով և ծառերով։

11. Մի խօսատուներ։

22. ԻՍՐԱՑԵԼԱՑՈՑ ԱՆԱՊԱՏԻ ՄԷՋ ԱՐԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵԻ ՔԱՆԱՆԱՑՈՑ ԵՐԿԻՐԸ.

Իսրայէլացիք՝ Աստուծուց օրէնքներն առնելուց յետոյ, քառասուն տարի ևս Սրաբիայի անապատներում թափառեցան։ Այն ժամանակ Աստուած գԹուԹեամբ խնամում էր և խստուԹեամբ պատժում նոցա, որ խռովուԹիւն չհանեն և չտրտնջան։ Մի անգամ Կորխ հրէայն Ահարոն քահանայապետի և այլ քահանաների դէմ ելաւ ասելով ԹէՀ՝ «բոլոր ժողովուրդը սուրբ է, դուք ինչո՞ւ համար ձեզ միայն վեր էք դասում Աստուծոյ ժողովրդից»։ Նորա հետ միաբանեցան նաև 250 ծերեր։ Այն ժամանակ Մովսէսն ասաց. «Աստուած ցոյց կըտայ, ԹէՀ Ինքը որին է ընտրում», և հրամայեց ծերերին որ բուրվառներն առած խորանը գան։ Բայց բոլոր ծերերը Մովսէսի այս հրամանը չկատարեցին։ Նոցանից երկուսը՝ Դադան և Աբիրոն պատասխանեցին, ԹէՀ՝ «բաւական է, որ Մովսէսը մեզ հարուստ աշխարհից հանեց. նա դեռ մեզ ոչինչ օգուտ չէ տուել, այլ ուզում է մեր վերայ իշխել. մենք չենք երթալ»։ Աստուած այս ապստամբներին պատժեց։ Կորխի, Դադանի և Աբիրոնի վրանները նոցա ծառաներով և

ստացուածքով մէկ տեղ գետնի տակ անցան, իսկ խորանի առաջ հաւաքուած ծերերն այրուեցան այն կրակով, որ խորանի միջից դուրս եկաւ, և շատ ժողովուրդ ևս ժանտախտով մեռան։ Այս կերպով Աստուած յայտնեց թէ Նա Մովսէսին իշխան է կարգել, իսկ Ահարոնին քահանայապետ։



Մէկ անգամ ևս Իսրայէլացիք միս չուտենալու համար սկսան տրտնջալ Մովսէսի դէմ, որովհետև ասում էին, թէ զզուել են ամենայն օր մանանայ ուտելուց։ Աստուած նրանց պատժելու համար, նոցա վերայ օձեր ուղարկեց, որ խածոտում ու մեռցնում էին նորանց։ Իսրայէլացիք գղջացին իրանց արածների վերայ։ Այն ժամանակ Մովսէսը Աստուծոյ հրամանով փայտէ սիւնի վրայից մի պղնձէ օձ կախեց և ասաց. «Ով որ հաւատով այս օձին կընայի, չի մեռնիլ»։ Այն Իսրայէլացիք, որոնք Մովսէսի խօսքին հետևեցան, կենդանի մնացին։

Քանանացոց երկրի սահմանների մօտ մեռաւ Մովսէսը,

և Աստուած նորա փոխանակ Իսրայէլացոց առաջնորդ նշանակեց Յեսու Նաւեային։

23. ՅԵՍՈՒ ՆԱՒԵԱՑ ԵՒ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ.

Յեսու Նաւեան Իսրայէլացոց Աստուծոյ խոստացած երկիրը հասցրեց։ Աստուած այն ժամանակ օգնում էր Իսրայէլացոց։ Նոքա Յորդանան գետի միջից պիտի անցնէին։ Աստուծոյ հրամանով գետի ջրերը բաժանուեցան և յետ քաշուեցան այնպէս, որ նոքա գետի ցամաք յատակի վերայով անցան։ Պէտք էր նաև վեր առնել Երիքով քաղաքը, որ շրջապատուած էր ամուր պարիսպներով և ամրացած։ Քահանայք՝ ուխտի տապանակն առած, նորա չորս կողմը շրջեցան. ամուր պարիսպներն իրանք իրանց կործանուեցան։ Վեց տարուան մէջ Իսրայէլացիք Քանանացոց բոլոր երկրին տիրեցին և վիճակով իրանց տասն և երկու ցեղերի մէջ բաժանեցին։

Յեսուայ մահից յետոյ Իսրայէլացիք ծերակոյտով էին կառավարվում։ Այն ժամանակներում շատ նեղութիւններ կրեցին նոքա, որովհետև Աստուծոյ հրամանը չէին կատարում։ Իսրայէլացոց ցեղերը փոխանակ Աստուծոյ հրամանները կատարելու և բարեկամական սիրով վարուելու, կռվում էին միմեանց հետ և իւրաքանչիւր հրէայ իւր խելքի կըտրածն էր անում։ Բացի սորանից նոքա հեթանոսների հետ բարեկամութիւն արին և նոցանից կռապաշտութիւն սովորեցան, որ Աստուած արգելել էր։ Այս պատճառով Աստուած իւր ողորմութիւնը կտրեց նոցանից, և մերձակայ հեթանոս ազգերն սկսան նրանց նեղել։ Սակայն Իսրայէլացիք զղջում էին իրանց մեղքերի վերայ և այն ժամանակ Աստուած սկսում էր նորից օգնել նոցա և ազատիչներ ուղարկել, որոնք ժողովրդին կառավարելով՝ թշնամիների ձեռքերից ազատում էին նրանց։ Այս ազատարարները դատաւորները էին կոչվում։

Օրինակի համար՝ Իսրայէլացիք իրանց մեղքի համար մէկ վայրենի ժողովրդի իշխանութեան տակ ընկան, որ կողոպտում էր նոցա երկիրը։ Երբոր Իսրայէլացիք իրանց մեղքերի վերայ ղղջացին, Աստուծոյ հրեշտակը երևեցաւ Գէդէօնին և ասաց. «Ես քեզ կուղարկեմ, որ ձեր թշնամիներին մի մարդու նման կոտորես»։ Այն ժամանակ Գէդէօնը կուռքերի զոհարանը կործանեց և ճշմարիտ Աստուծուն զոհ մատոյց, և վերստին եօրեք հարիւր մարդով յարձակուեցաւ թշնամի զօրքի վերայ։ Աստուած այնպէս շփոթութիւն ձգեց թշնամիների մէջ, որ սկսան միմեանց կոտորել և այնպէս փախան — ցրուեցան։

Վերջին դատաւորն եղաւ Սամուէլ մարգարէն, որ Աստուծոյ օգնութեամբ Իսրայէլացիներին թշնամիների ձեռքից ազատեց և պատերազմից յետոյ երկար ժամանակ կառավարեց նրանց։

24 ՍԱՒՈՒԼ՝ ՀՐԵՒՑ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԸ.

Հրէաները կամեցան թագաւոր ունենալ, եկան Սամուէլ մարգարէի մօտ և ասացին «Կարգիր մեր վերայ թագաւոր, թող նա դատէ մեզ և պաշտպանէ թշնամիներից»։

Սամուէլն աղօթք արեց Աստուծուն և Աստուած ասաց նորան. «Կարգիր նոցա վերայ թագաւոր»։ Սամուէլը Աստուծոյ հրամանով իւղ թափեց Սաւուղի գլխին և թագաւոր օծեց նորան։ Սկզբում Սաւուղը բարեպաշտ էր, բայց յետոյ անհնազանդ դտնուեցաւ Աստուծոյ առաջ։ Նորա թագաւորութեան երկրորդ տարին Փղշտացիք պատերազմ յայտնեցին Հրէաներին։ Աստուած արգելել էր Սաւուղին պատերազմ սկսելը, մինչև որ Սամուէլը զոհ չմատուցանէ։ Սաւուղը չըսպասեց մարգարէի գալստեան և իւր ձեռքով զոհեց։ Սամուէլն եկաւ և ասաց. «Այդ ինչ արեցիր»։ Սաւուղը պատասխանեց. «Դու շատ ուշացար, իսկ ժողովուրդն սկսեց ցրուիլ։ Ես կարծեցի թէ Փղշտացիք շուտ կըգան և ժամանակ չենք ունե-

նալ զոհելու»։ Սամուէլն ասաց. «Դու վատ վարուեցար, որ չպահեցիր Աստուծոյ պատուէրը։ Աստուած յաւիտեան քեզ կըթողնէր Իսրայէլի թագաւորութիւնը, իսկ այժմ կըգտնէ ուրիշին և նորան կըկարգէ ժողովրդի իշխան»։ Զնայելով այս սպառնալիքին, Սաւուղը երկրորդ անգամ էլ չկատարեց Աստուծոյ կամքը։ Սամուէլի բերանով Աստուած հրամայեց Սաւուղին ամբարիշտ Ամաղեկացիներին կոտորել՝ առանց խնայելու մարդկանց և կենդանիներին։ Սաւուղը զօրք ժողովեց, յարձակուեցաւ Ամաղեկացոց վերայ, կոտորեց նրանց, բայց խնայեց նոցա Ագագ թագաւորին և կենդանիներից էլ ընտիրները պահեց. նա ոչնչացրեց միայն այն, ինչ-որ ոչինչ արժէք չունէր։ Երբոր այդ իմացաւ Սամուէլը՝ շատ տրտմեցաւ։ Մի-ւս օրը նա եկաւ Սաւուղի մօտ և ասաց. «Այս ինչ ոչխարների մայուն է լսվում և եզների բառաչիւն»։ Սաւուղն ասաց. «Այդ Ամաղեկացոց անասուններն են։ Ժողովուրդը խնայեց ընտիր ոչխարներին ու եզներին, որ Աստուծուն զոհ մատուցանէ»։ Սամուէլն ասաց. «Մի՛տդ պահի՛ր՝ — հնազանդութիւնը զոհից լաւ է, իսկ անհնազանդութիւնը նոյն է կռապաշտութիւն»։ Այս ասելուց յետոյ Սամուէլը կամենում էր հեռանալ, բայց Սաւուղն այնպէս պինդ բռնեց նորա շորերից, որ փեշը պատռուեցաւ։ Սամուէլն ասաց. «Ինչպէս որ դու պատռեցիր իմ փեշը, այնպէս էլ Տէրը կըխլէ քեզանից թագաւորութիւնդ և կըտայ նորան, որ քեզանից լաւ է»։

25. ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐ ԸՆՏՐՈՒԻԼԸ.

Աստուած ասաց Սամուէլին. «Մինչև ե՞րբ դու պիտի տրտմես Սաւուղի մասին, որին Ես մերժեցի, որ այլևս թագաւոր չլինի նա։ Լցրու ամանը իւղով և գնա Բեթղեհէմ Յեսսէի մօտ. նորա որդկերանցից մէկին թագաւոր եմ ընտրել. Ես ցոյց կըտամ և դու օծի՛ր նորան»։ Սամուէլը եկաւ

Բեթղեհէմ, կանչեց ժողովրդի ծերերին և ասաց. «Պատրաստուեցէք Աստուծուն զոհ մատուցանելու. զոհագործութեան կանչեցէք նաև Յեսսէին և նորա որդոցը։ Երբոր Սամուէլը տեսաւ Յեսսէի մեծ որդուն՝ մտածեց. «Երևի սա պիտի լինի թագաւոր»։ Տէրն ասաց նորան. «Մի նայիր տեսքին և նորա հասակի բարձրութեանը. Ես նորան չեմ ընտրած. Ես չեմ նայում այնպէս, ինչպէս նայում են մարդիկ. մարդը նայում է երեսին, իսկ Ես նայում եմ սրտին։ Յեսսէն մէկմէկ բերեց Սամուէլի մօտ իւր եօթը որդոց, բայց Տէրը նոցանից ոչ մէկին չընտրեց։ Սամուէլը հարցրեց Յեսսէին. «Ո՞ր բոլոր որդիքն էլ այստեղ են»։ Յեսսէն պատասխանեց—կայ էլի ամենից կրտսերը, Դաւիթ անունով, նա ոչխարները է արածացնում»։ Սամուէլն ասաց. «Կանչիր նորան»։ Յեսսէն մարդ ուղարկեց Դաւթին կանչելու։ Դաւիթն եկաւ։ Նա շէկ էր, գեղեցիկ աչքերով և վայելուչ դէմքով։ Տէրն ասաց Սամուէլին. «Վե՛ր կաց, օծի՛ր դորան. դա է հրէից ազգի ապագայ թագաւորը»։ Սամուէլը նորա գլխին իւղ թափեց, և Տիրոջ Հոգին նոյն օրից իջաւ Դաւթի վերայ։

26. ԴԱՒԻԹԸ ՑԱՂԹՈՒՄ Է ԳՈՂԻԱԹԻՆ

Թէ Սաւուղը և թէ ժողովուրդը շատ շուտ ճանաչեցին Դաւթին։ Մէկ անգամ Փղշտացիք պատերազմի ելան Հրէից դէմ։ Փղշտացիք բանակեցան լերան վերայ մի կողմից Իսբայէլացոց հանդէպ, իսկ մէջտեղը գտնվում էր ձորը։ Փղշտացոց զօրքի կողմից դուրս եկաւ մի հսկայ, Գողիաթ անունով։ Նա ասաց Հրէաներին. «Ինչի՞ էք դուք ամենդ դուրս եկել պատերազմելու. ընտրեցէ՛ք ձեր միջից մի մարդ, որ ինձ հետ մենամարտէ. եթէ նա ինձ սպանէ, մենք կլինինք ձեզ ծառայ, իսկ եթէ ես յաղթեմ և սպանեմ, դուք կըլինիք մեզ ծառայ։ Սաւուղը և նորա հետ բոլոր Հրէաները լսեցին հրսկայի այս խօսքերը և շատ վախեցան։ Դաւթի եղբայրները

պատերազմումն էին. իսկ Դաւիթը ոչխարներ էր արածացնում։ Յեսսէն ասաց Դաւթին. «Վեր ա՛ռ տասը հաց և տար եղբայրներիդ»։ Դաւիթը ոչխարները յանձնեց պահապանին, վերցրեց տասը հաց և ուղևորուեց դէպի եղբայրները։ Երբ որ Դաւիթը տեսաւ Գողիաթին, հարցրեց. «Ի՞նչ կանեն այն մարդուն, որ կըսպանէ Գողիաթին»։ Նորան ասացին. «Թագաւորը մեծ հարստութիւն կըպարգևէ նորան, իւր աղջիկը կնութեան կըտայ և նորա հօր տունը հարկերից կազատէ»։ Դաւիթն եկաւ Սաւուղի մօտ և ասաց. «Թոյլ տո՛ւր ինձ Գողիաթի հետ մենամարտել»։ Սաւուղը պատասխանեց. «Դու երիտասարդ ես, իսկ նա ուժեղ և սովոր պատերազմի. դու չես կարող նորան յաղթել»։ Դաւիթն ասաց. «Ես արածացնում էի հօրս ոչխարները, և երբ գալիս էր առիւծը կամ արջը ոչխար էր յափշտակում, ես յարձակվում էի նորա վերայ և յետ էի խլում յափշտակածը. իսկ եթէ նա ընկնում էր վրաս, ես սպանում էի նորան։ Այն Աստուածը, որ ազատում էր ինձ առիւծից և արջից, կազատէ և Գողիաթի ձեռքից»։ Սաւուղն ասաց. «Գնա՛, թող Աստուած լինի քեզ հետ»։ Դաւիթը վերցրեց իւր գաւազանը, ընտրեց հինգ հատ ողորկ քար և դուրս եկաւ Գողիաթի դէմ։ Գողիաթը տեսաւ Դաւթին և ասաց. «Ի՞նչ է՝ որ գալիս ես իմ վերայ փայտով և քարերով, ես շո՞ւն եմ, ի՞նչ է, փոքր ինչ առաջ արի և ես քո մարմինը կըտամ երկնքի թռչուններին և դաշտի գազաններին»։ Դաւիթը պատասխանեց. «Դու գալիս ես իմ վերայս սրով և տէգով, իսկ ես դուրս եմ գալիս քո դէմ Աստուծոյ յուսով»։ Երբ Գողիաթն սկսեց առաջ գալ, Դաւիթը սաստիկ ուժով արձակեց նորա վերայ պարսաքարը։ Հարուածը յաջողակ էր. քարը դիպաւ Գողիաթի ճակատին և նա ընկաւ գետին և մեռաւ։ Դաւիթը թուր չունէր. նա վազեց դէպի Գողիաթը, հանեց նորա թուրը և կտրեց հսկայի գլուխը։ Փղշտացիք տեսան, որ իրանց հսկան սպանուած է և փախան։ Սաւուղը հարցրեց Դաւթին. «Դու ո՞ւմ որդին ես»։ Դաւիթն

ասաց «Քո ծառայ Յեսսէի որդին եմ Բեթղեհէմից»: Սաւուղը Դաւթին կարգեց զօրքի հրամանատար և իւր աղջիկն էլ տուեց նորան կնութեան:

27. ԴԱՒԹԻ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԻՒՐ ԹԱԳԱՒՈՐԸ.

Երբ որ Հբէանները վերադառնում էին պատերազմից, Իսրայէլացոց աղջիկները դուրս եկան նոցա առաջ և երգեցին. «Սաւուղը յաղթեց հազարին, իսկ Դաւիթը — տասը հազարին»: Սաւուղը սաստիկ նեղացաւ. նորան դուր չեկան այս խօսքերը և նա ասաց. «Դաւիթն աւելի փառաւորուեցաւ, քան թէ ես. նորան այժմ պակաս է միայն իմ թագաւորութիւնը»: Այնօրից նա ատելով ատեց Դաւթին, և միջոց էր փնտրում նորան կորուսանելու: Դաւիթը փախաւ անապատ: Այնտեղ նորա մօտ հաւաքուեցան նորա ազգականները և եղբայրները: Սաւուղը վերցրեց 3000 զինուոր և գնաց նոյն անապատը Դաւթի յետևից: Այնտեղ գիշերը վրայ հասաւ: Սաւուղի համար վրան պատրաստեցին և նա պառկեց քնելու: Նորա զինուորներն ևս քնեցին: Այդ բանն իմացաւ Դաւիթը և ասաց իւր մարդիկներին. «Ո՞վ կրգայ ինձ հետ Սաւուղի վրանը»: Աբեսսայ անունով մէկն ասաց. «Ես կրգամ հետդ»: Դաւիթը տարաւ նորան: Նոքա կամաց մօտեցան Սաւուղի վրանին և տեսան, որ Սաւուղը քնած է, նորա տէգը ցցած էր գետնին՝ գլխի կողմը, իսկ զինուորները և զօրավարներն ամենքն էլ քնած էին Սաւուղի շուրջը: Աբեսսան ասաց Դաւթին. «Աստուած թշնամուդ տալիս է քո ձեռքը. թող տուր, ես կըսպանեմ Սաւուղին տէգի մէկ հարուածով»: Բայց Դաւիթն ասաց. «Մի սպանիր դորան. Աստուած նոյան թագաւոր է ընտրել և յանցանք կրգործի նա, ով ձեռք կրբարձրացնի Աստուծոյ օծեալի վերայ: Հետդ վերցրու Սաւուղի տէգն ու ջրի ամանը, և երթանք»: Նոքա դուրս եկան վրանից և գնացին իրանց կացարանը: Ոչ ոք չտեսաւ, ոչ ոք

չիմացաւ և ոչ ոք չզարթեցաւ — ամենքը քնած էին: Միւս օրը Դաւիթն ելաւ սարի գլուխը և ձայն տուեց Սաւուղի զօրավարին. «Ինչո՞ւ դու չես պահպանում քո տիրոջը, Աստուծոյ օծեալին. մէկ մարդ եկել էր և կարող էր թագաւորին սպանել: Տես, ո՛ւր է թագաւորի տէգը և ջրի ամանը, որ նրա գլխավերևն էին»: Սաւուղը ճանաչեց Դաւթի ձայնը, և ասաց. «Այդ քո ձայնն է, որդեակ իմ Դաւիթ»: Դաւիթը պատասխանեց. «Այո՛, այդ իմ ձայնն է, տէր իմ թագաւոր. ինչո՞ւ ես դու ինձ հալածում. ի՞նչ վատութիւն եմ արել քեզ». Սաւուղն ասաց. «Ես մեղանչեցի, դարձի՛ր, որդեակ իմ. այլ ևս վատութիւն չեմ անիլ քեզ»: Բայց Դաւիթը վախենում էր Սաւուղից և չգնաց նորա մօտ: Սաւուղը վերադարձաւ տուն և շատ ժամանակ չանցած՝ վախճանուեցաւ:

28. ԴԱՒԹԻ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՑ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

Թագաւոր դառնալով՝ Դաւիթը շատ պատերազմներ մղեց, նուաճեց հարևան ժողովրդին պատկանեալ Երուսաղէմ քաղաքը, շինեց այնտեղ իւր համար պալատներ և մայրաքաղաք արեց նորան: Դաւիթն ուզում էր, որ Երուսաղէմում լինի և Աստուծոյ տաճարը: Մէկ անգամ նա ասաց Նաթան մարգարէին. «Ահաւասիկ ես կենում եմ եղևնափայտեայ տան մէջ, իսկ Աստուծոյ տապանակը գտնվում է խորանի մէջ: Ես ուզում եմ կառուցանել Աստուծոյ տունը»: Նաթանն ասաց նորան. «Ի՞նչ որ սրտումդ կայ՝ գնա՛ և արա՛, որովհետև Տէրը քեզ հետ է»: Բայց նոյն իսկ գիշերը Աստուած ասաց Նաթանին. «Գնա՛, ասա՛ Դաւիթ ծառայիս՝ այսպէս է ասում Տէրը. «Դու ուզում ես ինձ համար տո՞ւն կառուցանել. բայց դու շատ պատերազմներ ես մղել և չես կարող ինձ համար բնակութեան տուն շինել, որովհետև շատ արիւն ես թափել երկրի վերայ: Երբ որ դու կըննջես հայրերիդ հետ, Ես քո

որդի Սողոմոնին թագաւոր կըկարգեմ, և նա կըշինէ տուն Իմ անուանը. և նորա աթոռը կանգուն կըլինի մինչև յաւիտեան: Ես կըլինիմ նորան Հայր և նա կըլինի Ինձ որդի: Նաթանն այս խօսքերը յայտնեց Դաւթին: Դաւիթը հնազանդեցաւ Աստուծոյ կամքին և սկսեց նիւթեր պատրաստել տաճարի շինուածեան համար: Նա կանչեց իւր որդոց, իշխաններին և ժողովրդեան ու ասաց. «Ականջ արէք, եղբարք և ժողովուրդ իմ. ես մտադիր էի Աստուծոյ տաճարը շինել, բայց Աստուած ասաց ինձ. «Ոչ թէ դու, այլ քո որդի Սողոմոնը Ինձ համար տուն կըշինէ»: Ինչ որ կարող էի, պատրաստել եմ Աստուծոյ տան համար: Ձէք ցանկանայ արդեօք և դուք որևիցէ բան նուիրել Տիրոջը»: Սկսեցին ամենքը նուէրներ տալ՝ թէ իշխանները և թէ ժողովուրդը,—ոմանք ոսկի, ոմանք արծաթ, ոմանք պղինձ, ոմանք երկաթ, ոմանք մարմարիոն: Երբ որ Դաւթի մահուան ժամանակը հասաւ, նա ասաց Սողոմոնին. «Որդեակ իմ Սողոմոն, մի մոռանար Աստուծուն. ծառայիր Նորան բոլոր սրտովդ և բոլոր հոգովդ, որովհետև Աստուած փորձում է բոլոր սրտերը, և գիտէ մեր բոլոր խորհուրդները: Եթէ կրկատարես Աստուծոյ օրէնքը, Աստուած չի թողնիլ քեզ և գործերդ յաջող կերթան: Աստուած ընտրեց քեզ, որ դու շինես Նորա համար տուն, ուրեմն անպատճառ կատարիր այն, ինչ որ Աստուած պատուիրել է քեզ»:

Դաւիթը գրել է Սաղմոսի գրքերը—Սաղմոսարանը. Նորա նում պարունակվում են աղօթքներ, բարեպաշտական կեանքի կանոններ և Փրկչի մասին մարգարէութիւններ: Այս պատճառով Դաւիթը մարգարէ է կոչվում:

---

29. ՍՈՂՈՄՈՆԸ ԵՒ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ.

Երբ որ Սողոմոն թագաւորական գահը բարձրացաւ, Աստուած երևեցաւ նորան տեսլեան մէջ և ասաց. «Խնդրիր, ինչ որ հարկաւոր է քեզ»: Սողոմոնը պատասխանեց. «Դու ինձ բազմաթիւ ժողովուրդի թագաւոր կարգեցիր. բայց ես պատանի եմ և անփորձ: Ուրեմն տուր ինձ իմաստութիւն, որ կարողանամ որոշել, թէ ո՛րն է բարին և ո՛րն է չարը»: Աստուածուն հաճելի եղաւ Սողոմոնի աղօթքը, և Նա ասաց նորան. «Որովհետև դու Ինձանից իմաստութիւն խնդրեցիր և ոչ երկար կեանք կամ հարստութիւն կամ անձիդ փառքը և կամ թշնամեացդ կորուստը, Ես կրկատարեմ քո ցանկութիւնը: Ահա տալիս եմ քեզ սիրտ սուրբ և հոգի իմաստուն. կրտամ քեզ և այն, ինչ որ չես խնդրել. կրտամ քեզ՝ թէ հարստութիւն և թէ փառք, այնպէս որ թագաւորների մէջ ոչ ոք չի լինիլ քեզ նմանը կեանքիդ բոլոր օրերում»: Սողոմոնը զարթեց, և երևեցաւ որ նորա տեսածը երազ էր: Բայց այդ երազը կատարուեցաւ. Սողոմոնը արդարև եղաւ ամենաիմաստուն, փառաւոր և հարուստ թագաւոր:

Իւր թագաւորութեան չորրորդ տարին, Սողոմոնը սկսեց Աստուծոյ տաճարի շինութիւնը Երուսաղէմում: Տաճարի կառուցման վերայ աշխատում էին 30,000 Հրէայ և 150,000 օտարական, 3,600 մարդ հսկում էին մշակների վերայ: Տաճարի շինութիւնը եօթը տարուց աւելի տևեց: Փայտը և քարերը բերւում էին Երուսաղէմ բոլորովին տաշած, այնպէս որ շինութեան տեղում չէր լսվում ոչ մուրճի և ոչ կացնի ձայն: Տաճարը շինուեցաւ նոյն ձևով, որով շինուած էր և վկայութեան խորանը: Նա ունէր գաւիթ, սրբութիւն և սրբութիւն սրբոց. բայց դիրքով խորանից շատ մեծ էր:

Երբ որ ուխտի տապանակը խորանից տաճար տեղափոխուեցաւ, Սողոմոնն աղօթքով դարձաւ առ Աստուած և

խնդրեց Նորանից. «Տէր իմ, լսիր Քո ծառաներին, երբ նոքա հալածուած թշնամիներից կըդիմեն Քեզ և կաղօթեն Քո սուրբ տաճարումը. լսիր նրանց, երբ կըփակուի երկինքը և չի գալ անձրև նոցա մեղքերի պատճառով և երբ նոքա կըզղջան իրանց մեղքերը և աղօթք կանեն Քեզ այստեղումը. թէ երկրի վերայ սով պատահի, կամ ժանտախտ, կամ մսրեխ, կամ վնասակար ճիճուներ և կամ որևիցէ պատահար, ամեն տեսակ աղօթքի և ամեն տեսակ խնդրուածքի վերաբերութեամբ ականջ դիր Քո ժողովրդին և ողորմիր նրանց»:

Աստուած գիշերով երևեցաւ Սողոմոնին, և ասաց. «Ես լսեցի քո աղօթքը: Իմ աչքերս բաց կըլինին և ականջներս ուշադիր դէպի աղօթքները, որ կատարուելու են քո շինած տաճարումը: Իսկ եթէ դու և քո ժողովուրդը չէք կատարիլ Իմ պատուէրները, Ես ձեզ կըհանեմ այն երկրից, որը տուել եմ ձեզ և նախատանաց առարկայ կըլինեմ բոլոր ազգերի առաջ և տաճարն էլ կմերժեմ: Նորա մօտով անցնողը կըսարսափի և կասէ. «Ինչո՞ւ այնպէս վարուեցաւ Տէրը այս երկրի և տաճարի հետ»: Եւ կասեն. «Աստուած իւր մարդիկների վերայ հասցրեց այս պատահարը նորա համար, որ նոքա թողին Նորա պատուիրանները»:

Սողոմոնը մեռնելուց յետոյ Հրէից թագաւորութիւնը երկուսի բաժանուեցաւ՝—Յուդայի և Իսրայէլի:

30. ՄԱՐԳԱՐԷՔ.

Թէև Իսրայէլացիք ստէպ-ստէպ մոռանում էին Աստուծուն, բայց ողորմածն Աստուած անխնամ չէր թողնում նրանց, այլ ուղարկում էր մարգարէներ: Մարգարէները Աստուծոյ անունով ամենքին ճշմարտութիւն էին քարոզում: Գուշակում էին Աստուծուց գալիք պատիժները չար մարդկանց վերայ, և իրանց Աստուծուց ուղարկուած լինելը հաստատելու համար՝ հրաշքներ էին գործում: Չար մարդիկ

մարգարէներին չէին սիրում, նոցա վերայ ծիծաղում էին, հող և քար էին արձակում նոցա վերայ, երբեմն ևս սպանում էին նրանց: Իսրայէլացոց՝ կռապաշտութիւն անելու համար, խիստ յանդիմանում էր Եղիա մարգարէն: Նա գուշակեց, թէ Աստուած Իսրայէլայիներին կռապաշտութեան համար պիտի պատժէ, երեք տարի անձրև չպիտի գայ, և երկրի մէջ սով պիտի ընկնի: Նորա այս գուշակութիւնը կատարուեցաւ, և ժողովուրդը աղօթքով դէպի Աստուած դիմեց՝ ներողութիւն խնդրելով: Այն ժամանակ մարգարէն, կամենալով ժողովրդեան հաստատապէս ցոյց տայ, թէ կայ միայն մի Աստուած, և ուրիշ Աստուածներ չկան, խնդրեց Աստուծուց, որ երկնքից կրակ թափէ զոհի վերայ: Եղիա մարգարէն չմեռաւ, այլ կենդանի հրեղէն կառքով երկինք վերացաւ: Այս բանը տեսաւ նորա աշակերտ Եղիսէն: Եղիսէ մարգարէն Աստուծոյ ողորմութիւնն էր քարոզում և շատ հրաշքներ էր գործում: Օրինակի համար, նա յարութիւն տուաւ մէկ պատանու և Նէյէման Ասորու բորոտութիւնը բժշկեց: Եղիսէն իւր մահից յետոյ ևս հրաշք գործեց: Մէկ անգամ մի ննջեցեալ դրին այն քարանձաւը, ուր թաղուած էր Եղիսէն. ննջեցեալը, երբ Եղիսէի ոսկորներին դիպաւ, իսկոյն յարութիւն առաւ:

31. ՅՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ

Յովնանը Իսրայէլի թագաւորութեան մէջ էր բնակվում: Աստուած ասաց նորան. «Վեր կաց, գնա Նինուէ մեծ քաղաքը և ասա նորա բնակիչներին, որ ապաշխարեն»: Յովնանը չէր ուզում գնալ Նինուէ: Նա մտաւ նաւ, վճարեց ճանապարհի վարձը և ուղևորուեցաւ դէպի ուրիշ քաղաք: Բայց Աստուած ծովի վերայ սաստիկ փոթորիկ բարձրացրեց և նաւն ընկղմուելու վրայ էր: Նաւավարները սարսափեցան և սկսեցին ծանրութիւնները դուրս թափել նաւից, իսկ Յովնանը

նաւի մի կողմն ընկած քնած էր։ Եկաւ նորա մօտ նաւատէրը, զարթեցրեց նորան և ասաց. «Ամօթ չէ՞, որ քնում ես, աղօթք արա՛ Աստուծուդ, գուցէ ազատէ մեզ վտանգից»։ Նաւավարներն ասացին. «Վիճակ ձգենք, որ իմանանք, թէ ո՛ւմ պատճառովն է եկել մեզ վրայ այս վտանգը»։ Երբ որ վիճակ ձգեցին, վիճակը Յովնանին ընկաւ։ Այն ժամանակ ամենքը դարձան դէպի Յովնան. «Ասա՛ մեզ, ինչո՛վ ես պարապում, ո՞րտեղից ես գալիս, ո՞ւր է քո երկիրը և ո՞ր ազգից ես դու»։ Նա պատասխանեց նրանց. «Ես Իսրայէլացի եմ, երկրպագում եմ ամենազօր Աստուծուն, որ ծովը և ցամաքն ստեղծեց։ Աստուած հրամայեց ինձ Նինուէ երթալ, բայց ես չգնացի»։ Նոքա ասացին. «Երևի քո պատճառով հասաւ մեզ այս վտանգը. ի՞նչ անենք քեզ, որ ծովը հանդարտի»։ Յովնանը պատասխանեց. «Որպէսզի ամենքս չկորչինք, վեր առէք և ձգեցէք ինձ ծովը և մրրիկը կդադարի, որովհետև ես գիտեմ, որ իմ պատճառովն է հասել ձեզ այս մեծ վտանգը»։ Նաւավարներն ամեն կերպ աշխատում էին ցամաքին մօտենալ, բայց չկարողացան, որովհետև ծովի ալէկոծութիւնը շարունակվում էր և մրրիկը կատաղում էր նոցա դէմ։ Այն ժամանակ նոքա Յովնանին ձգեցին ծովը, և մրրիկն իսկոյն դադարեց։ Երբ Յովնան ընկաւ ծովը, Աստուած հրամայեց կէտ ձկանը, որ կուլ տայ նորան. և Յովնանը երեք օր և երեք գիշեր կենդանի մնաց ձկան փորի մէջ։ Գտնուելով կէտի փորի մէջ, Յովնանը ղղջաց իւր մեղքերը և խոստացաւ Աստուծոյ հրամանը կատարել։ Աստուած հրամայեց կէտին, որ Յովնանին ափը դուրս հանէ։ Յովնանը վեր կացաւ, գնաց Նինուէ և սկսեց շրջել քաղաքում և ասել. «Այլ ևս երեք օր և Նինուէն պիտի կործանուի»։ Այս խօսքերը Նինուէի թագաւորի ականջին հասան, նա իջաւ իւր աթոռից, հանեց թագաւորական շորերը և հրաման տուեց, որ իւր բոլոր հպատակները պաս պահեն, ձեռք վերցնեն չար գործերից, ապաշխարեն և Աստուծոյ ողորմութիւնը խնդրեն։ Աստուած

տեսնելով նոցա ի սրտէ ղղջումը՝ ներեց։ Յովնանը նեղացաւ այս բանի վրայ և ասաց. «Մարգարէութիւնս չկատարուեցաւ, այժմ ինձ կընդունեն իբրև սուտ մարգարէ»։ Նա դուրս եկաւ քաղաքից, և փոքր ինչ հեռու նորա դիմացը նստեց և նայում էր թէ ինչ պիտի լինի։ Աստուծոյ հրամանով նոյն գիշերը մէկ դդմենի բուսաւ և իւր լայն տերևներով պաշտպանում էր Յովնանին արեգակի տաքութիւնից։ Այս բանի վերայ բաւական ուրախացաւ Յովնանը։ Բայց Աստուած այն պէս կարգադրեց, որ միւս օրը արուսեակի երևնալուն պէս, որդը կտրեց նորա արմատը և դդմենին թառամեցաւ։ Իսկ երբոր արեգակը դուրս եկաւ և սկսեց այրել Յովնանի գլուխը, նա սկսեց մահ խնդրել իւր համար և ասաց. «Աւելի լաւ է մեռնիմ, քան թէ կենդանի մնամ»։ Աստուած ասաց նորան. «Մի՞թէ այդչափ տրտմեցար դդմենու համար»։ Նա պատասխանեց. «Այո՛, շատ տրտմեցայ»։ Այն ժամանակ ասաց Աստուած. «Յովնան, դու չտնկեցիր դդմենին, չմեծացրիր նորան, այլ ինքը մէկ գիշերուայ մէջ բուսաւ և միւս գիշերը թառամեցաւ։ Դու ցաւում ես այդ մասին, ապա ինչպէս ես ուզում որ Ես չափսոսամ և չխնայեմ մի մեծ քաղաք, ուր հարիւր քսան հազար հոգուց աւելի անմեղ մանուկներ կան, որոնք աջ ձեռքը ձախից զանազանել չեն կարող»։

Հայաստանեայց եկեղեցին Յովնան մարգարէի յիշատակը կատարում է Առաջաւորաց պասի ուրբաթ օրը, և պատմական խորհրդաւոր նշանակութիւն ունի։ Այդ ազգային պասը սահմանեց սուրբ Գրիգոր Լուսաւորիչը իւր վերապից դուրս գալուց յետոյ 'ի յիշատակ ազատութեան Տրդատ թագաւորի և ժողովրդոց աստուածային պատուհասից և լուսաւորութեան Հայաստանի՝ քրիստոնէական սուրբ հաւատով։ Առաջաւորաց է կոչւում այդ պասը նորա համար, որ դա մեր առաջին պասն է և մեծ պասի յառաջընթաց։ Մեր եկեղեցու մէջ Առաջաւորաց պասին, Մեծի պահոց օրերի նման, գիրք և աւետարան չեն կարդացւում և սուրբ պատարագ չէ

մատուցանվում։ Միայն ուրբաթ օրը կարդացվում է Յովնանու մարգարէութիւնը Նինուէի ազատութեան մասին։

32. ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ՓՐԿՉԻ ՄԱՍԻՆ.

Մարգարէները շատ անգամ բարեպաշտ մարդոց գուշակում էին Փրկչի մասին։ Նոքա գուշակեցին. 1) թէ *ո՛վ պիտի լինի աշխարհի Փրկիչը*։ Նա կըլինի Աստուածոյ որդին, ծնեալն ՚ի յաւիտենից. Նա կառնու մարդկային մարմին, կըլինի Աստուած և մարդ միանգամայն. 2) թէ *ի՞նչպիսի ոք պիտի լինի աշխարհի խոստացեալ Փրկիչը*։ Նա կըլինի սուրբ և անմեղ, հեզ և ողորմած, գթասիրտ դէպի մարդիկ, հրաշքներ կըգործէ, կըբժշկէ կոյրերին, համրերին, խուլերին և կաղերին. 3. թէ *ինչպէս աշխարհի Փրկիչը կըծնուի երկրի վերայ*։ Նա յառաջ կըգայ Հրէից Դաւիթ թագաւորի ցեղից, կըծնուի կուսից Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում. Նորա առաջից կըգայ Նորա կարապետը. 4) թէ *ինչպէս աշխարհի Փրկիչը պիտի չարչարուի մարդոց մեղքերի համար*։ Նա, իբրև թագաւոր, հանդիսաւոր կերպով կը մտնի Երուսաղէմ քաղաքը, բայց յետոյ 30 արծաթով կը մատնուի չարչարանքի. կենթարկուի՝ հայհոյանքի, ծաղրածութեան, թուքի և գանակոծութեան. մարդիկ կըվարուին Նորա հետ իբրև չարագործի. կը վիրաւորեն, կըմեխեն Նորա ձեռքերը և ոտները, տէգով կըխոցեն Նորա կողքը. կ՚սպանեն Նորան և Նորա հանդերձը կըվերցնեն իրանց համար, կըբաժանեն և վիճակ կըձգեն։ Այդ չարչարանքները Նա կըկրէ մարդոց անօրէնութեանց պատճառով՝ նրանց յաւիտենական կորուստից փրկելու համար. 5) թէ *ինչպէս աշխարհի Փրկիչը մեռնելուց յետոյ յարութիւն կառնէ և ի՞նչ կանէ յարութիւնից յետոյ*։ Իր մահից յետոյ Նա կիջնէ դժոխքը, բայց չի մնալ այնտեղ, այլ յարութիւն կառնէ, կըհաստատէ նոր թագաւո-

րութիւն. առաքեալներին կ՚ուղարկի աշխարհիս ամեն ծայրերը և դէպի այդ նոր թագաւորութիւնը կըհրաւիրէ հեթանոսներին, որոնք առաջ չէին ճանաչում ճշմարիտ Աստուածուն. մարմնով երկինք կըհամբառնայ և կընդունի Աստուածային արժանաւորութիւնը, պատիւը և իշխանութիւնը և յաւիտեան կըթագաւորէ բոլոր ազգերի վերայ։

33. ԹԷ ԻՆՉ ՎԱԽՃԱՆ ՈՒՆԵՑԱՆ ԻՍՐԱՑԷԼԻ ԵՒ ՑՈՒԴԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Իսրայէլի տէրութեան մէջ բոլոր թագաւորները կռապաշտ էին։ Այդ տէրութիւնը նուաճեցին Ասորեստանցիք 722 թ. Ք. առաջ։ Ժողովրդի մեծ մասը գերի տարուեցան և Միջին-Ասիայի զանազան կողմերը ցրուեցան։ Իսրայէլի երկիրը լցրին ուրիշ տեղերից բերած մարդիկներով, որոնք միանալով տեղական բնակիչների հետ՝ Սամարացիք կոչուեցան։

Յուդայեան թագաւորութիւնը նուաճեց 558 թ. Ք. առաջ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը։

Երուսաղէմը և տաճարը կործանուեցան։ Հրէաները գերի տարուեցան Բաբելոն։

Նաբուգոդոնոսորը հրամայեց Հրէից գերիների միջից ընտրել երիտասարդներին և թագաւորական պալատում կըրթութիւն տալ նրանց։ Այդ ժամանակ դոցա միջից իրանց բարեպաշտական կեանքովն աւելի նշանաւոր եղան Դանիէլ մարգարէն, Անանիա, Ազարիան և Միսայէլը։

34. ԵՐԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԿՐԱԿԻ ՀՆՈՑԻ ՄԷՋ.

Նաբուգոդոնոսորը Դեբրա դաշտի վերայ կանգնեցրեց մի ոսկեայ արձան։ Այս արձանի մօտ մի մեծ հնոց ևս շինել տուաւ։ Այս դաշտի վերայ Նաբուգոդոնոսորը հաւաքել տուեց

բոլոր մեծամեծներին և ժողովրդեան։ Երբ Նոքա եկան արձանի առաջ, մունետիկը բարձրաձայն յայտնեց. «Ազգեր, երբոր կըլսէք նուագարանների ձայները, իսկոյն երկրպագուել Թիւն տուէք ոսկէ արձանին։ Իսկ ով որ չի երկրպագանիլ, նա կրձգուի կրակի հնոցի մէջ։ Երբոր ամենքը հաւաքուեցան երկրպագուելիւն տալու, Անանիա, Ազարիա և Միսայէլ չկատարեցին Նաբուգոդոնոսորի հրամանը։ Այս բանն իմացաւ Թագաւորը։ Նա սաստիկ բարկացած՝ հրամայեց իւր առաջ բերել այդ հրէաներին։ Նոցա բերին։ Նաբուգոդոնոսորը հարցրեց. «Ճշմարիտ է, որ դուք, Անանիա, Ազարիա և Միսայէլ, իմ աստուածներին չէք պաշտում և ոսկէ կուռքին, որ ես կանգնեցրի, երկրպագուելիւն չէք տալիս։ Այժմ հրամայում եմ ձեզ, որ երբ փողի ձայնը լսէք, ընկնէք կուռքի առաջ և երկրպագուելիւն անէք նորան։ Իսկ եթէ չէք հնազանդիլ, կրակի հնոցի մէջ կրձգուիք, և ո՞վ է այն Աստուածը, որ ձեզ իմ ձեռքիցս կարող լինի փրկել»։ Պատասխանները պատասխանեցին. «Ա.մենազօր Աստուածը, որին մենք պաշտում ենք, կարող է մեզ փրկել քո ձեռքից և կրակի բորբոքեալ բոցերից։ Բայց եթէ չփրկէ և՛ դարձեալ մենք քո աստուածներիդ և կանգնած կուռքիդ երկրպագուելիւն չենք տալ»։ Թագաւորի դէմքը փոխուեցաւ բարկութիւնից, նա հրամայեց հնոցը եօթնապատիկ աւելի բորբոքել և պատանիներին պինդ կապած մէջը ձգել։ Նորա հրամանը իսկոյն կատարուեցաւ։ Հնոցն այնքան բորբոքեցին, որ մինչև անգամ չորս կողմը եղող սպասաւորներն այրվում էին։ Բայց Աստուած հրաշալի կերպով պատանիներին ազատեց մահից։ Աստուծոյ հրեշտակն իջաւ հնոցը, մեղմացրեց կրակի սաստկութիւնը և զովացրեց նրանց զովարար ցօղով։ Անանիա, Ազարիա և Միսայէլ տեսնելով այս հրաշքը, սկսեցին Աստուծուն փառաբանել. *Օրհնեալ ես, «Տէր Աստուած հարցն մերոց»*, հոգևոր երգը երգելով։ Նաբուգոդոնոսորը շատ զարմացաւ այս բանի վերայ, շուտով տեղիցը վեր կացաւ և հարցրեց իւր պալատականներին. «Չէ՞ որ մենք երեք պատանի ձգեցինք հնոցը»։ Նոքա պատասխան տուին թագաւորին «Իսկ և իսկ այդպէս է»։ Նա ասաց. «Ահա ես չորսին եմ տեսնում, նոքա համարձակ մեն են գալիս կրակի մէջ առանց վնասուելու. և չորրորդը գեղեցիկ է երկնային ոգու պէս»։ Յետոյ Նաբուգոդոնոսորը մօտեցաւ հնոցին և ասաց. «Անանիա, Ազարիա և Միսայէլ, ծառայք Բարձրեալ Աստուծոյ, դուրս եկէք»։ Դուրս եկան։ Հաւաքուեցան մեծամեծները և տեսան, որ կրակը ոչինչ վնաս չէ արել նրանց. գլխների մազը չէ խանձուած, շորները չեն այրուած, և կրակի հոտ անգամ չկար։ Այն ժամանակ Նաբուգոդոնոսորը հասկացաւ, որ Աստուած ինքն է պաշտպանել նոցա և ասաց. «Օրհնեա՛լ է ձեր Աստուածը. որ Իւր հրեշտակին ուղարկելով՝ ազատեց ձեզ, որովհետև ձեր յոյսը դրել էիք Նորա վերայ. եթէ իմ հպատակներիցս մէկը համարձակուի հայհոյել Աստուծուն, որին պաշտում են Հրէաները, նա մաս-մաս կըպատառուի և նորա տունը տերեակ կըդառնայ. որովհետև չկայ մի ուրիշ Աստուած, որ այդպիսի հրաշք գործէ»։

Այս պատմութիւնը գրուած է Դանիէլի մարգարէական գրքի երրորդ գլխումը և կարդացվում է մեր եկեղեցու մէջ բեմի վերայ տարէնը երկու անգամ, այն է Զատկի և Ծնընդեան Ձրագալուցի երեկոներին, այսպէս *).

Ընթերցուածս 'ի Դանիէլէ մարգարէէ.

Ցամին ուրբաստասաներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի՝ առար պատկեր ոսկի, բարձրութիւն նորա վաթսուն կանգուն, և

---

*) Ցանկալի է, որ կրօնուսոյցը՝ երից մանկանց պատմութիւնը աւանդելուց յետոյ, ծանօթացնէ աշակերտներին և նոյն գրքի ընթերցման եղանակի հետ և դասարանում երգել տայ. «Օրհնեցէ՛ք, գովեցէք, և այլն» օրհնաբանութիւնը, ինչպէս և միւս շարականներն իրանց տեղերում։

լայնութիւն նորա կանգուն վեց, և կանգնեաց զնա ի դաշտին Դեկրայ յաշխարհին Բաբելացւոց, և այլն։

Եւ երբ գալիս են այնտեղ, ուր ասվում է՝

Օրհնեցէ՛ք ամենայն գործք Տեառն զՏէր, օրհնեցէ՛ք և բարձր արարէք զնա յաւիտեան.

Պալիրներն սկսում են քաղցր ձայնով երգել՝

«Օրհնեցէ՛ք, գովեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեան»։

Սորանից յետոյ բացւում է սեղանը և սկսվում է պատարագը։

35. ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷՆ. ՑՈՒԴԱՑԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏՈՑ.

Հրէայք Բաբելոնի մէջ 70 տարի գերի մնացին, և այս գերուԹիւնը դառն էր նոցա համար։ Բայց այն վիշտը օգտաւէտ ևս եղաւ նոցա, որովհետև նորանով հեռու մնացին կռապաշտուԹիւնից։ Այս գերուԹիւնն օգտաւէտ եղաւ հեԹանոսներին ևս. վասն զի տեսան նոքա ճշմարիտ Աստուծոյ փառքը և շատերը հաւատացին Նորան։ ԳերուԹեան ժամանակ Աստուած Հրէից ուղարկեց Դանիէլ մեծ մարգարէին։

Այդ միջոցին Բաբելոնի հզօր թագաւորուԹիւնը կործանուեցաւ և նորա տեղը բռնեց Մարաց թագաւորուԹիւնը։ Մարաց Դարեհ թագաւորն անչափ յարգում էր Դանիէլին և իւր իշխանների մէջ աւագուԹիւնը նորան տուեց։ Դանիէլի բարձրանալու վրայ մեծամեծները նախանձեցան և ամբաստանելով թագաւորի առաջ, ձգել տուին նորան գուբը, քաղցած առիւծների առաջ, որովհետև նա իւր օրէնքին համեմատ էր աղօթում դէպի Աստուած. բայց առիւծներն Աստուծոյ հրամանով չմօտեցան մարգարէին։ Դանիէլը գուշակեց, որ Քրիստոսը աշխարհ պիտի գայ Հրէից ազատուԹեան հրաման տրուելուց 490 տարի յետոյ։

Երբ գերուԹեան 70 տարին լրացաւ, Բաբելացոց թա-

գաւորուԹեանը տիրեց Պարսից Կիւրոս թագաւորը, որ հրաման տուաւ Հրէից Երուսաղէմ դառնալու։

Հրէայք իրանց Երուսաղէմը վերականգնեցին և նոր տաճար շինեցին։ Սկզբումը նոցա համար դժուար էր աւերած երկրի մէջ բնակուիլ։ Բայց ողորմած Աստուածը ուղարկեց նոցա մօտ Անգէոս, Զաքարիա և Մաղաքիա մարգարէներին, որոնք քաջալերում և մխիթարում էին նրանց։ Անգէոսը գուշակեց, Թէ Քրիստոսը այն նոր տաճարը պիտի երԹայ։ Զաքարիան նկարագրեց Քրիստոսի աւանակի վերայ հեծած հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնիլը, իսկ Մաղաքիան ասաց՝ Թէ Քրիստոսի առջևից պիտի գնայ նորա կարապետը։

Սկզբում Հրէայք Պարսից թագաւորների իշխանուԹեան տակ էին, յետոյ ընկան Յունաց իշխանուԹեան տակ, որ տիրապետեցին Պարսից թագաւորուԹեանը։

Այն միջոցին Սուրբ գիրքը Եբրայեցոց լեզուից Յունարէն Թարգմանուեցաւ, որ ամեն լեզուներից աւելի գործածական էր այն ժամանակ։ Հրէայք Յունաց իշխանուԹեան տակ եղած ժամանակ մի մեծ վտանգի հանդիպեցան, որովհետև Յոյներն ստիպում էին նրանց, որ կռապաշտուԹիւն ընդունեն, բայց նոքա հաստատ կացան իրանց հաւատին՝ շատ տանջանքներ կրեցին և վերջապէս ազատուեցան Յունաց իշխանուԹիւնից։ Բայց նոցա բարեբախտուԹիւնը երկար չտևեց։ Հռովմայեցիք տիրեցին նոցա և թագաւոր դրին օտարազգի Հերովդէսին, որ խստաբարոյ և կասկածոտ մարդ էր։

36. ՓՐԿՉԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ.

Երբ Հռովմայեցիք Հրէաստանին տիրեցին, բոլոր Հրէայք անհամբերուԹեամբ սպասում էին խոստացած Փրկչի գալստեանը։ Հին ուխտի ժամանակը վերջացաւ, և սկսաւ նոր

ուխտի ժամանակը, երբ Փրկիչն աշխարհ պիտի գար։ Բայց Հրէաներից շատերը թիւր հասկացողութիւն ունէին Փրկչի մասին։ Կարծում էին թէ նա երկրաւոր փառքով պիտի գայ, որ նրանց Հռովմայեցոց իշխանութիւնից ազատէ։ Այլև հրապարտանում էին իրանց սրբութեամբ, իրանք իրանց արդար էին համարում. և կարծում էին թէ Քրիստոսը ո՛չ թէ նրանց մեղքերից ազատելու է գալիս, ինչպէս խոստացել էր Աստուած, այլ գալիս է իրանց բարեգործութիւնների փոխարէն երկրաւոր բարեբախտութեամբ նրանց վարձատրելու։

37. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻ ԾՆՈՒՆԴԸ.

Ղուկ. Ա. 5, 25 եւ 57—80. Մատ. Գ. 1—12. Ղուկ. Գ. 2—18.

Քրիստոսի ծննդեան ժամանակ Հրէաստանի մէջ երկու արդար և բարեպաշտ անձինք կային՝ Զաքարիա քահանան և նորա կին Եղիսաբէթը։ Նոքա ծերութեան հասան, բայց զաւակ չունէին, որի վերայ տրտմելով՝ Աստուծուն խնդրում էին, որ զաւակ տայ իրանց։

Աստուած լսեց նոցա աղօթքը։ Մէկ անգամ Գաբրիէլ հրեշտակապետը տաճարի մէջ երևեցաւ Զաքարիային։

Զաքարիան վախեցաւ։ Հրեշտակն ասաց. «Մի՛ վախենար՝ Զաքարիա. քո աղօթքը լսելի եղաւ. քո կին Եղիսաբէթը կծնի քեզ որդի, որի անունը Յովհաննէս կդնես։ Նորա ծնունդն ուրախութիւն կը պատճառէ ոչ միայն քեզ, այլ և շատ մարդիկներին։ Նա մեծ կըլինի Աստուծոյ առաջ. գինի և օղի չի խմիլ՝ իւր աշխարհ գալու օրից՝ նա կըլցուի սուրբ Հոգով. մարդոց բարեպաշտութիւն կըսովորացնէ և դէպի Աստուած կդարձնէ նրանց»։ Զաքարիան ասաց հրեշտակին. «Ի՞նչպէս կարող եմ ես այդ իմանալ. ես արդէն ծեր եմ և կինս անց է կացրել իւր օրերը»։ Հրեշտակը պատասխանեց նորան. «Որովհետև դու չհաւատացիր խօսքերիս, ա-


հա համր կըլինիս մինչև այն օրը, երբ այդ բանը կըկատարուի»։ Զաքարիան արդարև պապանձուեցաւ, այսինքն դադարեց խօսելուց։ Բայց ժողովուրդն սպասում էր, թէ Զաքարիան երբ դուրս կը գայ տաճարից և նորա ուշանալու վերայ շատ էր զարմանում։ Եւ երբոր դուրս եկաւ Զաքարիան, չէր կարողանում խօսել նոցա հետ, այլ նշաններով յայտնեց թէ նա տեսիլք է տեսել։ Քանի մի ժամանակից յետոյ հրեշտակի գուշակութիւնը կատարուեցաւ. Զաքարիան և Եղիսաբէթը որդի ունեցան։ Հասաւ ութերորդ օրը. հաւաքուեցան ազգականները. մանկան պէտք է անուն տային։ Ազգականները կամենում էին՝ ի պատիւ հօրը Զաքարիա անուն տալ նորան, բայց մայրն ասաց. «Յովհաննէս դրէք դրա անունը։ Հարցրին Զաքարիային թէ մանկանը ինչ անուն է է ուզում դնել. Զաքարիան տախտակ բերել տուեց և գրեց. «Յովհաննէս է դորա անունը»։ Իսկոյն բացուեցաւ նորա լեզուն. սկսեց խօսիլ և մարգարէացաւ թէ Յովհաննէսը Փրկչի կարապետը կըլինի։ Ամենքը զարմացած ասում էին. «Ի՞նչ պիտի լինի այս մանուկը»։

38. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԵՐԻՑ ԱՄԱՑ ԸՆԾԱՑՈՒՄՆ Ի ՏԱՃԱՐՆ.

Երբ Հրէայք սպասում էին Քրիստոսի գալուն, Նազարէթ քաղաքում կենում էին երկու բարեպաշտ անձինք՝ Յովակիմ և նորա կին Աննան, որոնք Հրէից Դաւիթ թագաւորի ցեղից էին։ Նոքա զաւակ չունէին և այս պատճառով չերմեռանդութեամբ աղօթում էին, որ Աստուած մի զաւակ պարգևէ և ուխտ դրին, որ եթէ իրանց որդի ծնուի, Աստուծուն կընուիրեն։ Աստուած նոցա աղօթքը լսեց և մի դուստր պարգևեց, որի անունը Մարիամ դրին։

Երբոր Մարիամը երեք տարեկան եղաւ, ծնողները տաճար տարան նորան Աստուծուն ընծայելու։ Քահանայապետն

ընդունեց Նորան և Աստուծոյ հրամանով տարաւ տաճարի Սրբութիւն սրբոց կոչուած մասը, ուր իրաւունք ունէր մտնելու միայն քահանայապետը։ Տաճարի շուրջը շատ տներ կային, ուր կենում էին բարեպաշտ այրիք, կոյսեր և Աստուծուն նուիրեալ մանուկներ։ Ահա այստեղ Յովակիմը և



Աննան թողին Մարիամին։ Մարիամը տաճարի մէջ մեծանում էր, պարապելով՝ աղօթքով, սուրբ գրոց ընթերցանութեամբ և ձեռագործով։ Սա Աստուծոյ շնորհքով ազատ մնաց ամենայն արատից ու մեղքից և եղաւ ամենասուրբ կոյս *)։

---


*) Մարիամի ծնունդը տօնում ենք միշտ սեպտեմբերի 8-ին, իսկ ընծայումն ի տաճար՝ նոյեմբերի 21-ին։

---

39. ԱՒԵՏՈՒՄՆ ԳԱԲՐԻԷԼ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ԱՒՐ ՍՈՒՐԲ ԿՈԹՄՆ ՄԱՐԻԱՄ.

Ղուկ. Ա. 26—28.

Մարիամի տաճարում եղած ժամանակ՝ ծնողքը վախճանեցան, իսկ երբ 14 տարեկան եղաւ, դաստիարակները *կամեցան* Նորան ամուսնացնել։ Բայց նա ասաց, թէ ուխտել է Աստուծոյ, որ միշտ կոյս մնայ։ Այն ժամանակ քահանայք Նորան նշանեցին իւր ազգական Յովսէփի հետ, որին յայտնեցին նաև Մարիամի ուխտը։ Յովսէփը Գալիլիայի Նա-



զարէթ քաղաքի մէջ էր բնակվում և հիւսնութեամբ էր պարապում։ Մարիամը Նորա տունը գնաց բնակուելու։

Մէկ անգամ, երբ նա աղօթք էր անում, Գաբրիէլ հրեշտակապետը երևեցաւ Նորան և ասաց. «Ուրախացիր, բերկրեալդ, Տէրը քեզ հետ է, օրհնուած ես դու կանանց

մէջ, Հոգին Սուրբ կըգայ քո վերայ և Բարձրելու զօրութիւնը հովանի կըլինի քեզ. մի Որդի կըծնանիս և անունը Յիսուս կըդնես. Նա մեծ կըլինի և Բարձրեալի Որդի կըկոչուի և Տէր Աստուած կըտայ նրան իւր հօր Դաւթի աթոռը և նորա թագաւորութեանը վերջ չի լինիլ»: Մարիամը խոնարհութեամբ ընդունեց այս աւետիքը *): Եւ հրեշտակը գնաց նորանից:

Նոյն օրերում Մարիամ Սուրբ կոյսը գնաց իւր ազգական, Զաքարիայի կին Եղիսաբէթի տեսութեան: Եկաւ այնտեղ և ողջոյն տուաւ Եղիսաբէթին: Եղիսաբէթը երբոր լսեց Մարիամի ողջոյնը, լցուեցաւ Սուրբ Հոգով և բարձր ձայնով ասաց. «Օրհնեալ ես դու կանանց մէջ, և օրհնեալ է քո որովայնի պտուղը. և ո՞ւստի է ինձ այս երջանկութիւնը, որ իմ Տիրոջ մայրն ինձ մօտ եկաւ: Երանի է քեզ, որ հաւատացիր քեզ ասածներին. դոքա ամենքն էլ կը կատարուին»:

Մարիամը երեք ամիս մնաց Եղիսաբէթի մօտ և ապա վերադարձաւ Յովսէփի տունը:

Կոյս Մարիամը արժանացաւ մեծ պատուի — լինել մայր Փրկչի՝ Աստուծոյ Որդու: Ուստի մենք Նորան անուանում ենք Աստուածածին — Տիրամայր, դասելով Սերովբէներից և Քերովբէներից վեր, որը և յայտնում ենք ’ի պատիւ Նորա յօրինուած երգաբանութեանց մէջ:

Ուրախ լե՛ր, բերկրեալդ Ուրախացի՛ր, շնորհալիդ Մարիամ, Տէր ընդ քեզ. օրհ- Մարիամ, Տէրը քեզ հետ է. նեալ ես Դու ’ի կանայս և օրհնուած ես Դու կանանց

*) Աւետման տօնը կատարում ենք միշտ Ապրիլի 7-ին:

օրհնեալ է պտուղ որովայնի մէջ և օրհնուած է քո որովայնի պտուղը: Արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:


40. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ.

Ղուկ. Բ. 1—21.

Մօտեցաւ այն ժամանակը, երբ Գաբրիէլ հրեշտակապետի խօսքի համեմատ Քրիստոսը պիտի ծնուէր: Այն մէջոցին Հռովմայեցւոց կայսրը հրամայեց աշխարհագիր անել, և այս պատճառով իւրաքանչիւր հրէի հրամայուած էր իւր հայրենի քաղաքը երթալ: Յովսէփն ու Մարիամը Դաւիթ թագաւորի ցեղից էին. այս պատճառով Նազարէթից դուրս եկան և Բեթղեհէմ գնացին, որ Դաւթի քաղաքն էր, և մարգարէների գուշակութեան համեմատ Քրիստոսն այնտեղ պիտի ծնուէր: Քաղաքի մէջ նոքա օթևան չգտան, ուստի քաղաքի մօտ գտնուած մի այրի մէջ մնացին, ուր հովիւները իրանց ոչխարներն էին պահում: Այն այրի մէջ գիշեր ժամանակ Մարիամ Սուրբ կոյսը ծնաւ Իւր Միածին Որդին, որ ոչ միայն մարդ էր, այլ միանգամայն Աստուած: Սուրբ կոյս Մարիամը Աստուածորդուն խանձարուրով պատեց և մսուրի մէջ դրաւ:

Նոյն գիշերը Բեթղեհէմի հովիւները իրանց ոչխարների հետ դաշտի մէջ էին: Նոքա քնած չէին: Յանկարծ մէկ անսովոր լոյս տեսան, Աստուծոյ հրեշտակը նոցա երևեցաւ և ասաց. «Մի՛ վախենաք, ես մեծ ուրախութիւն եմ աւետում ձեզ: Դաւթի քաղաքի մէջ Փրկիչ ծնաւ ձեզ, որ է Օծեալ Տէր: Եւ ահա ձեզ նշան. դուք կըգտնէք մանկանը խանձարուրով պատած և մսուրի մէջ դրուած»: Այն միջոցին երկըն-

քից բազմաթիւ հրեշտակներ երևեցան և սկսեցին երգել. «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճութիւն»: Երբոր հրեշտակներն անյայտացան, հովիւներն այրը գնացին, և գտան որ մանուկը խանձարուրով փաթաթուած և մսուրի մէջ դրուած էր: Երկրպագութիւն արին Նորան, իբրև Աստուծոյ, և Մարիամին ու Յովսէփին պատմեցին իրանց լսածն ու տեսածը. յետոյ այն համբաւն իրանց գիւղի մէջ տարածեցին:



Հրէից սովորութեան համեմատ ծննդեան ութերորդ օրը թլփատեցին Նորան և Յիսուս անուանեցին, որ Փրկիչ կը-նշանակէ:

Յունուարի վեցին Հայաստանեայց եկեղեցին կատարում է Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօները ՚ի միասին, իսկ Յունուարի հինգին, երեկոյեան, մատուցանվում է սուրբ պատարագը և ճրագալոյց է լինում: Ծննդեան օրը, պատ-

րագից յետոյ, կատարվում է ջրօրհնէքի շքեղ հանդէսը: Դասք հոգևորականաց զգեստաւորուած՝ խաչերով, խաչուառներով և վառած կերոններով դուրս են գալիս եկեղեցուց, գնում են գետը և այնտեղ խաչով, սուրբ աւետարանով և սուրբ մեռոնով օրհնում են ջուրը ՚ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան Յորդանանում: Նոյն օրը քահանայք գալիս են մեր տները օրհնելու (տնօրհնէք), շնորհաւորում են մեզ Քրիստոսի ծնունդը և յայտնութիւնը — աւետարան կարդալով և այս շարականը երգելով.

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ՝ հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքայ ՚ի Բեթղեհէմ քաղաքի, որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն և ընդ հրեշտակս երգէին՝ փառք ՚ի բարձունս Աստուծոյ:

Այն խորհուրդը, որ այսօր յայտնի եղաւ, մեծ է և հիանալի. հովիւները երգում են հրեշտակների հետ և աւետիս են տալիս աշխարհին: Բեթղեհէմ քաղաքում ծնուեցաւ նոր թագաւոր, մարդոց որդիք, օրհնեցէք Նորան, որովհետև մեզ համար մարմին առաւ:

Այսօր հովիւներն արդարութեան արեգակը (Յիսուսին) տեսնելով, հրեշտակների հետ երգում էին՝ փառք ՚ի բարձունս Աստուծոյ:

Աստուծոյ Միածին Որդին, որ ճշմարիտ և յաւիտենական Աստուած է, և էակից Հօր, մարմնացաւ և մարդացաւ, այսինքն՝ սուրբ կոյս Մարիամից Հոգով Սրբով մարդկային մարմին և հոգի առաւ բացի մեղքից, և այս կերպով եղաւ մարդ կատարեալ և Աստուած կատարեալ: Որդին Աստուծոյ մարմ-

նացաւ մեզ համար, որ մեզ ազատէ սատանայի ձեռքից, ջնջէ մեր մեղքերը, հաշտեցնէ մեզ Աստուծոյ հետ, ճշմարտութիւն և սէր քարոզէ մեզ, և Իւր աշակերտներով մի թագաւորութիւն կամ մի ընտանիք կազմէ, որի մէջ Աստուած Հայր լինի, իսկ մարդիկ Նորա որդիքը, և միմեանց եղբայրներ։

Մեր դէպի Աստուծոյ Որդին և դէպի Նորա մարգեղութիւնն ունեցած հաւատը յայտնում ենք այսպէս.

Հաւատամք եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ, Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ—ծնունդ եւ ոչ արարած։ Նոյն ինքն ՚ի քնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ՚ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկինից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալ էս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտս եւ զամենայն, որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։

41. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՌԱՍՆՕՐԵԱՑ ԳԱԼՈՒՍՏՆ ՚Ի ՏԱՃԱՐ ԿԱՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ.

Ղուկ. Բ. 8—38.

Մովսիսական օրէնքով ամենայն արու անդրանիկ զաւակ Նորա ծննդեան քառասներորդ օրը տաճար էին տանում և այնտեղ Նորա համար զոհ մատուցանում։ Հարուստները մի հորթ կամ ոչխար էին զոհում, իսկ աղքատները մի զոյգ աղաւնու ձագ։ Երբոր Յիսուսը քառասնօրեայ դառաւ, Մարիամ սուրբ կոյսը և Յովսէփը բերին Նորան Երուսաղէմի

տաճարը։ Իրանց հետ տարան և զոհ մի զոյգ աղաւնի։ Նոյն միջոցին Երուսաղէմում բնակւում էր մի արդար և Աստուածավախ ծերունի Սիմէօն անունով։ Նա սաստիկ ցանկանում էր աշխարհիս Փրկչին տեսնել։ Սուրբ Հոգին առաջուց յայտնել էր Նորան, թէ պիտի չմեռնի, մինչև չտեսնէ Քրիստոսին։ Երբ մանուկ Յիսուսին բերին տաճար, Սիմէօնը դուրս եկաւ Նորա առաջ և ըստ յայտնութեան Աստուծոյ իմացաւ, որ Նա է մարգարէների գուշակած աշխարհի Փրկիչը։ Նա



Յիսուսին գիրկն առաւ, փառք տուաւ Աստուծուն և ասաց. «Տէր, հիմիկ Ձո խօսքիդ պէս, խաղաղութիւնով ես արձակում Ձո ծառայիդ. որովհետև իմ աչքերս տեսան Փրկչին, որին պատրաստեցիր ժողովրդի համար. Դա՝ լոյս է հեթանոսների, և փառք Իսրայէլի»։ Յովսէփն ու Մարիամը զարմանում էին այս խօսքերի վրայ։ Սիմէօնն օրհնեց Նորանց և Մարիամին ասաց. «Ձո որդին շատերի հակառակութեան

պատճառ կըլինի։ Ոմանք կըհաւատան Նորան և կըփրկուին, և ոմանք չեն հաւատալ և կըկորչին, և Ինա սիրտդ այնպէս կըխոցոտուի, իբրև թէ սուր անցած լինի անձնովդ»։ Տաճարի մէջ էր նաև Աննա մարգարէուհին, որ ութսուն և չորս տարեկան էր. նա ևս սկսաւ փառաբանել Աստուծոն և ամենքին ասում էր, թէ այն մանուկը խոստացեալ Փրկիչն է։

42. ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ. ՄԱՐԻԱՄԻ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽՉԻԼԸ ԵՒ ԱՅՆՏԵՂԻՑ ԴԱՌՆԱԼԸ.

Մատ. Բ. 1—23.

Այն միջոցին Հրէաստանի արևելեան երկիրներից քանի մի մոգեր, այսինքն իմաստուն մարդիկ, Երուսաղէմ եկան և հարցնում էին թէ՝ «Ո՞ւր է Հրէից Նորածին թագաւորը. մենք Նորա աստղը տեսանք արևելեան կողմը և եկանք Նորան երկրպագութիւն անելու»։ Հերովդէս թագաւորը մոգերի այս հարցմունքը լսելով՝ շփոթուեցաւ և հրէից դպիրներին հարցրեց թէ՝ «ո՞ւր պիտի ծնուի Քրիստոսը»։ Դպիրները պատասխանեցին թէ՝ «Բէթղեհէմ քաղաքի մէջ»։ Այն ժամանակ թագաւորը կանչեց այն մոգերին և խնդրեց նոցանից ասելով, թէ երբ կըգտնէք մանկանը, ինձ յայտնեցէք, որ ես էլ գնամ և երկրպագութիւն անեմ Նորան»։ Մոգերը Բէթղեհէմ գնացին, և տեսան այն գերբնական աստղը մէկ տան վրայ։ Այն տունը մտան, և մանկանը գտան Իւր մօր հետ. երկրպագութիւն արին Նորան, իբրև Աստուծոյ և մատուցին իրանց ընծաները։ Յետոյ ուզում էին Երուսաղէմ վերադառնալ և մանկան մասին Հերովդէսին պատմել, բայց մի ւս գիշերը Աստուծուց հրաման առան, որ Հերովդէսի մօտ չդառնան, ուստի ուրիշ ճանապարհով գնացին իրանց երկիրը։

Հերովդէսը՝ երբ իմացաւ թէ մոգերն իրանց երկիրն են

գնացել, հրամայեց, որ Բէթղեհէմի մէջ եղած երկու տարեկանից փոքր բոլոր տղայոցը կոտորեն։ Յոյս ունէր, որ նոցա հետ Յիսուսն ևս կըսպանուի։ Բայց Յովսէփն ու Մարիամը Աստուծոյ հրամանով իրանց որդու հետ Եգիպտոս փախան։ Հերովդէսի անգութ հրամանը կատարուեցաւ. նորա զինուորները Բէթղեհէմի մէջ 14,000 մանուկ կոտորեցին։

Այնուհետև շատ ժամանակ չանցած՝ Հերովդէսը մեռաւ։ Այն ժամանակ Յովսէփը Հրէաստան դարձաւ և Գալիլիայի Նազարէթ քաղաքում բնակուեցաւ։ Այնտեղ Քրիստոսը մինչև երեսնամեայ հասակն անճանօթ մնաց մարդիկներից. երեսուն տարեկան եղաւ, աճեցաւ և լցուեցաւ իմաստութեամբ և սիրով դէպի Աստուած և դէպի մարդիկ։ Աւանդութիւն կայ՝ թէ Նա Յովսէփ Աստուածահօրն օգնում էր հիւսնութեամբ։

43. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈԶԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ.

Զաքարիայի և Եղիսաբէթի որդի Յովհաննէսն արդէն տղայութեան հասակից ճգնաւորական կեանք էր անցկացնում, անապատի մէջ էր բնակվում և ապրում էր մարախ և մեղր ուտելով։ Նորա հագուստն ուղտի բրդից էր և գոտին մաշկեղէն։ Երբոր Հռովմայեցոց կողմից Պոնտացի Պիղատոսը հրէից դատաւոր էր նշանակուած, Յովհաննէսը Աստուծուց յայտնութիւն ստացաւ՝ պատրաստել ժողովուրդը Փրկչին ընդունելու համար։ Նա եկաւ Յորդանանի եզերքը և ժողովրդին ուսուցանում էր, թէ ինչպէս կարող են նորա երկնքի արքայութեանը արժանի լինել։

Ամեն կողմերից ժողովուրդը հաւաքվում էր նորա քարոզութիւնը լսելու։ Յովհաննէսը իւր մօտ եկողներին ասում էր. «Ապաշխարեցէք, երկնքի արքայութիւնը մօտեցել է». և այս ասելով՝ իւրաքանչիւրին տալիս էր հարկաւոր խը-

բատները։ (Կեղծաւոր Փարիսեցիքը, որ իրանց արտաքին աստուածապաշտութեամբ հպարտանում էին և ծելերի աւանդութիւնները խստիւ կատարում, հարցրին. «Մենք ի՞նչ պէտք է անենք»։ Յովհաննէսը քարոզում էր նոցա թէ՝ «ով որ երկու հանդերձ ունի, թո՛ղ մէկը չունեցողին տայ, կերակուր ունեցողն էլ թո՛ղ նոյնպէս անէ»։ Մաքսաւորները Փարիսեցոց պէս հարցրին, և Յովհաննէսը նոցա պատասխանեց. «Մի պահանջէք ժողովրդից այն, ինչ որ օրէնքը չէ հրամայած»։



Ցետոյ զինուորները հարցրին. «Մենք ի՞նչ պէտք է անենք։ Յովհաննէսը պատասխանեց թէ՝ «դուք ո՛չ ոքին չզրկէք, ո՛չ ոքին չզրպարտէք և ձեր ռոճկով բաւականացէք»)։ Այն քարոզութիւնից յետոյ Յովհաննէսը Յորդանան գետի մէջ մկրտում էր իրանց մեղքերը զղջացողներին։

(Շատերը կարծում էին թէ մարգարէներից գուշակած Մեսիան կամ Քրիստոսը Յովհաննէսն է։ Բայց նա ինքն ասում էր թէ՝ «ես Քրիստոս չեմ, այլ Աստուած ինձ ուղարկեց Նորա առաջն, որ Նորա ճանապարհը պատրաստեմ»։ Այս պատճառով Յովհաննէսը կոչւում է *Տիրոջ կարապետ*)։

Երբ այսպէս Յովհաննէսն ուսուցանում էր և մկրտում ժողովրդին, եկաւ Նորա մօտ Յիսուս Քրիստոսը, որ Նորանից մկրտուի։ Յովհաննէսը հրաժարվում էր Նորան մկրտելուց և առում էր. «Ե՛ս պէտք է քեզանից մկրտուիմ և Դու ինձ մօտ ես գալիս»։ Բայց Յիսուսն ասաց. «Թոյլ տուր»։ Այն ժամանակ Յովհաննէսը մկրտեց Նորան։ Երբ Յիսուս Քրիստոսը դուրս էր գալիս ջրից, երկինքը բացուեցաւ և Հոգին սուրբ աղաւնու կերպարանքով Քրիստոսի վրայ իջաւ և երկնքից ձայն լսուեցաւ, թէ «Դա է իմ սիրելի որդին, որին հաւանեցայ»։

ՏԱՂ ՀՐՕՐՀՆԵԱՑ.

Այսօր ձայնըն հայրական լերկնից իջեալ հաճոյական, սիրեցեալոյ Որդւոյ վկայն. այ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան. յորդորական ձայնիւ երգեր մեծ կարապետըն Յովհաննէս։

Այսօր եկեալ Աստուածորդին ՚ի Յորդանան խոնարհութեամբ, ջրով մկրտիլ ՚ի Յովհաննէ...

Այսօր մկրտիչըն Յովհաննէս ՚ի մկրտիլըն հրաժարեր,

Այսօր հայրական հաճութիւն տուող ձայնը իջնում է երկնքից երբեւ վկայ Իւր սիրելի Որդւոյն. այ յորդորում է, գետն յորդորում է, գետն Յորդանան. յորդորող ձայնով երգում է Յովհաննէս մեծ կարապետը։

Այսօր Աստուածորդին խոնարհութեամբ գալիս է Յորդանան, Յովհաննէսից ջրով մկրտուելու...

Այսօր մկրտող Յովհաննէսը

թէ ինձ պարտ է ’ի Քէն մըկըրտիլ...

Այսօր գոչէր քաղցը ձայնիւ Աստուածորդին Կարապետին՝ պարտ էր զօրէնսըն կատարել...

Այսօր Հոգին աղաւնակերպ իջեալ յերկնից ’ի Յորդանան, Իւր փառակցին վկայելով... հրաժարվում է մկրտելուց ասելով, թէ ես պէտք է Քեզանից մկրտուիմ...

Այսօր Աստուածորդին քաղցը ձայնով ասում է Կարապետին՝ պէտք է օրէնքը կատարել...

Այսօր Հոգին աղաւնու կերպարանքով երկնքից իջնում է Յորդանան, իբրև Իւր փառակցի վկան...

---

44. ՔՐԻՍՏՈՍԻ ՍԱՏԱՆԱՑԻՑ ՓՈՐՁՈՒԻԼԸ.

Մատ. Գ. 13—17.

Քրիստոսը մկրտուելուց յետոյ անապատ գնաց, ուր քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահեց և աղօթքով անցկացրեց։ Քառասներորդ օրը Նա քաղց զգաց։ Այն ժամանակ սատանան եկաւ Նորա մօտ և ասաց. «Թէ որ Դու Աստուծոյ որդին ես, ասա՛ որ այս քարերը հաց լինին»։ Յիսուս Քրիստոսն ասաց Նորան. «Գրուած է, որ ոչ թէ մենակ հացով կապրի մարդ, այլ ամեն խօսքով, որ Աստուծոյ բերանից է դուրս գալիս»։ Սատանան Յիսուս Քրիստոսին տարաւ Երուսաղէմ, կանգնացրեց տաճարի աշտարակի վրայ և ասաց «Թէ որ Աստուծոյ որդին ես, այստեղից Քեզ վայր ձգիր, որովհետև գրուած է, թէ Իւր հրեշտակներին հրամայել է Քեզ համար, որ Քեզ պահպանեն և ձեռների վրայ առնեն Քեզ, որպէս զի ոտներդ երբեք քարի չդիպցնես»։—Յի-

սուս Քրիստոսը պատասխանեց Նորան. «Այս ևս գրուած է, թէ մի՛ փորձիր Քո Տէր Աստուածդ». Սատանան Յիսուս Քրիստոսին տարաւ մի շատ բարձր սար, ցոյց տուաւ Նորան աշխարհի ամեն թագաւորութիւնները և ասաց. «Այս ամենը Քեզ կըտամ, թէ որ ընկնելով ինձ երկրպագութիւն անես»։ Յիսուս Քրիստոսը պատասխանեց Նորան. «Հեռացիր ինձանից, սատանայ, որովհետև գրուած է, թէ Քո Տէր Աստուածդ պէտք է երկրպագութիւն անես և միայն Նորան պաշտես»։ Այն ժամանակ սատանան հեռացաւ Յիսուսից և ահա հրեշտակները մօտ եկան և ծառայութիւն էին անում Նորան։

Եւ մի՛ տանիր զմեզ ’ի փորձութիւն, այլ փրկեա՛ ’ի չարէն։

45. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՑ ՏՈՒԱԾ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ։

Յով. Ա. 19—40. *Գ.* 22—30. *Մատ. ԺԴ.* 3—11

Քրիստոսը՝ անապատի մէջ փորձուելուց յետոյ, Յորդանան գետի եզերքն եկաւ, ուր Յովհաննէսը մկրտում էր։ Յովհաննէսը Նորան տեսնելով՝ ասաց ժողովրդին. «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի». այսինքն՝ ահաւասիկ Նա, որ Իւր կեանքը բոլոր աշխարհիս մեղքի համար պիտի զոհէ։ Յովհաննէսի աշակերտներից մի քանիսը Քրիստոսի ետևից գնացին։

Քիչ ժամանակից յետոյ Յովհաննէսն ստիպուեցաւ իւր քարոզութիւնները վերջացնել, որովհետև Գալիլիացոց Հերովդէս թագաւորին յանդիմանում էր՝ որ նա իւր եղբօր կենդանութեան ժամանակը նորա կին Հերովդիադայի հետ ա-

մուսնացել էր։ Այս յանդիմանութեան համար չար Հերովդիադան շատ բարկացաւ և Հերովդէսին յորդորեց, որ Յովհաննէսին բանտարկէ, յետոյ խնդրեց և Յովհաննէս Մկրտչի գլուխը կտրել տուեց։

46. ՅԻՍՈՒՍԸ ԳՆՈՒՄ Է ԳԱԼԻԼԻԱՑԻ ԿԱՆԱՑ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ.

Յովհ. Բ.1—11

Յիսուսը՝ Յովհաննէսի Իւր վրայ վկայութիւն տալուց յետոյ, Գալիլիա գնաց։ Այնտեղ Աստուածամօրը, Նորան և Նորա աշակերտներին կանայ քաղաքի մէջ հարսանիքի հրաւիրեցին։ Հարսանեաց խնջոյքի ժամանակ գինին պակասեցաւ։ Աստուածամայրը՝ տեսնելով տանտիրոջ շփոթութիւնը, ասաց Յիսուսին. գինի չունին։ Յիսուսը պատասխան տուաւ Նորան թէ՝ դեռ իմ ժամանակս չէ հասել, այսինքն դեռ ժամանակը չէ, որ ցոյց տամ Իմ Աստուածային փառքը։ Բայց Մարիամը հաստատ գիտէր, թէ Իւր ողորմած որդին կօգնէ կարօտեալներին, վասն որոյ ասաց ծառաներին. ինչ որ ձեզ հրամայէ, կատարեցէք։ Սենեակի մէջ եօթը մեծ քարեղէն ջրի ամաններ էին դրուած։ Յիսուսը հրամայեց որ նրանց ջրով լցնեն, յետոյ այն ջուրը հիւրերին բաժանեն։ Ծառաները Նորա հրամանը կատարեցին և տեսան որ ամանների միջի ջուրը լաւ գինի է դարձել։ Այս կերպով Յիսուսը առաջին հրաշքը գործեց և աշակերտները հաւատացին Նորան։

Այդ առիթով Աստուածամայրը օգնութիւն ցոյց տուաւ դէպի մարդիկ և եղաւ նոցա համար Իւր որդուն բարեխօս։ Այս պատճառով մենք դէպի Նա դիմում ենք աղօթքներով իբրև դէպի մեր պաշտպանը և բարեխօսը, որ ամենայն ժամանակ օգնէ մեզ։

Անկանիմք առաջի Որ, Սուրբ Աստուածածնին, և աղաչեմք զկոյսդ՝ բարեխօսեա վասն անձանց մերոց և աղաչեա զմիածին Որդիդ՝— փրկել զմեզ ’ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Ընկնում ենք Որ առաջ, Սուրբ Աստուածածնին, և աղաչում ենք անարատ կուսիդ, բարեխօսութիւն արա մեր անձի համար և խնդրիր Որ միածին Որդուց, որ ազատէ մեզ փորձանքից և ամեն տեսակ վտանգներից։

47. ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Քիչ ժամանակում Քրիստոսի գործած հրաշագործութիւնների լուրը տարածուեցաւ Հրէաստանի մէջ, և ժողո-



վուրդը խուռն բազմութեամբ գնում էր Նորա յետևից։ Նա Իւր մէկ խօսքով սաստիկ փորձրիկը դադարեցրեց, ջրի վրա-

յով իբրև գետնի վրայ ման եկաւ, հինգ հացով և երկու ձկ-
նով հինգ հազար մարդ կերակրեց, և միայն հրամայելով մե-
ռած մարդկանց յարութիւն տուաւ։

Դժբախտ մարդիկ մեծ ուրախութեամբ Քրիստոսին մօ-
տենում էին, և ո՛չ մէկը առանց օգնութիւն և մխիթարու-
թիւն առնելու մօտից չէր հեռանում. կոյրերին լուսաւորում
էր, խուլերին լսողութիւն էր տալիս, անդամալոյծներին բը-
ժշկում էր, բորոտներին սրբում էր, դիւահարներին ազա-
տում։ Ամեն մարդու ընդունում էր Իւր մօտ, ուրիշներից
ատելի եղած մեղաւոր և հեթանոս մարդիկ Նորանից օգնու-
թիւն էին գտնում։ Մարդիկներից Նա միայն այս էր պահան-
ջում, որ Իրան հաւատան։ Բժշկուածներին արձակում էր
այս խրատը տալով թէ՝ «այլ ևս մի մեղանչիր, որ աւելի վատ
չլինի քեզ»։

Այս գործերով Քրիստոսը պարզապէս ցոյց էր տալիս, որ
երկրիս վրայ Աստուծոյ արքայութիւնն սկսուել է։ Ժողովուրդ-
ներից շատերը հաւատում էին Քրիստոսի գործած հրաշքնե-
րը տեսնելով, և ամեն կողմից ասում էին թէ՝ մեծ մարգա-
րէն երևացել է մեր մէջ, Աստուած Իւր ժողովրդեան այցե-
լութիւն է արել։

48. ՔՐԻՍՏՈՍԸ ԾՈՎԻ ՎՐԱՑ ՓՈԹՈՐԻԿԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԵՒ ՋՐԻ ՎՐԱՑ ՄԱՆ Է ԳԱԼԻՍ.

Ղուկ. Ը. 22—25. *Ցովհ.* Զ. 18—21.

Մէկ անգամ Քրիստոսը Իւր աշակերտների հետ նաւով
մի ծովակի վրայից պիտի անցնէր։ Ինքը նաւի յետևի կող-
մը քնել էր։ Սաստիկ հողմ բարձրացաւ և ալիքները վերկա-
ցան, այնպէս որ նաւը լցուելու վրայ էր։ Աշակերտները վա-
խեցած զարթեցրին Քրիստոսին, ասելով՝ «Տէր, ահա մենք
կորչում ենք, ազատի՛ր մեզ»։ Քրիստոսը նոցա պատասխանեց.

«Ի՞նչու այդպէս վախկոտ էք, թերահաւատներ»։ Յետոյ վեր-
կացաւ և փոթորկին ու ալեկոծութեանը սաստեց, իսկոյն հան-
գարտութիւն տիրեց։ Ամենքը զոլի մէջ ընկած հիանում էին
և ասում. «Ով է սա, որ հողմին և ջրին հրաման է տալիս
և Իրան լսում են»։

Մէկ անգամ Քրիստոսի աշակերտները նաւով գնում էին
ծովակի վրայ, սաստիկ փոթորիկ վերկացաւ, և նոքա շատ վա-
խեցան, որովհետև Յիսուսը նոցա հետ չէր։ Յանկարծ տե-
սան, որ մէկը ջրի վրայ մանգալով իրանց մօտն է գալիս, և
չճանաչելով թէ Քրիստոսն է, սաստիկ վախեցած աղաղակե-
ցին, թէ՝ «այս երևոյթ է»։ Քրիստոսը նոցա ահը տեսնելով,
ասաց. «Մի՛ վախենաք, ես եմ»։ Յետոյ Նորա աշակերտներից
մէկը՝ Պետրոսը ասաց. «Հրաման տո՛ւր, որ ես մօտ գամ
ջրի վրայից»։ Քրիստոսը պատասխանեց. «եկ», և Պետրոսը
նաւից դուրս գալով՝ ջրի վրայ կանգնեցաւ և սկսաւ երթալ,
բայց ծովակի ալեկոծութիւնը տեսնելով վախեցաւ և քիչ
մնաց, որ խեղդուէր, ուստի աղաղակեց. «Տէր, փրկիր ինձ»։
Քրիստոսը մօտեցաւ նորան, ձեռքից բռնեց և ասաց. «Ի՞նչ-
չու երկմտեցար, թերահաւատ»։ Յետոյ երկուսն էլ նաւը մը-
տան, և իսկոյն հողմը հանդարտուեցաւ։

49. ՀԻՆԳ ՀԱՑՈՎ ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՄԱՐԴ ԿԵՐԱԿՐԵԼԸ.

Ցովհ. Զ. 7—11

Մէկ անգամ Քրիստոսը ժողովրդին քարոզում էր. քա-
րոզութիւնը մինչև երեկոյ տևեց։ Այս տեսնելով՝ աշակերտ-
ներն ասացին. «Տէր, այստեղ անապատ տեղ է և ժամանակն
անցել է. ժողովրդին արձակիր, որ գիւղը երթան և իւրեանց
համար կերակուր գնեն»։ Քրիստոսը հարցրեց նոցա. «Նայեցէք,
տեսէք, քանի՞ հաց ունիք»։ Աշակերտները պատասխանեցին
թէ. «Այստեղ մէկ տղայ կայ, որ հինգ հաց և երկու ձուկն

ունի, բայց այն ինչպես պիտի բաւականանայ այս բազմութեանը»։ Քրիստոսը հրամայեց որ այն հացերը և ձկները բերեն. առաւ հացը և ձուկը, օրհնեց, կտրեց և Իւր աշակերտներին տուաւ, և նոքա կտոր-կտոր բաժանեցին ժողովրդեան։ Ամենքը կերան և կշտացան, յետոյ հացի կտորները հաւաքեցին, որով տասներկու զամբիւղ լցուեցաւ։ Իսկ ժողովուրդը հինգ հազար հոգու չափ էին. բացի կանանց և տղայոց։ Նոքա այս հրաշքը տեսնելով, ուզում էին Նորան իւրեանց աշխարհի վրայ թագաւոր դնել, բայց Նա թողեց նրանց ու գնաց։

ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ.

Աչք ամենեցուն ՚ի Քեզ, Տէր, յուսան և Դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու։ Բանաս զձեռն Քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք Քովք։

Ամենքի աչքերը դէպի Քեզ են նայում, Տէր, և Դու ես տալիս նորանց կերակուր ժամանակին։ Բաց ես անում Քո ձեռքը և լիացնում ես ամեն արարածներիդ Քո ողորմութեամբը։

ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԵՏՈՑ.

Տէր Յիսուս, լցաք ՚ի բարութենից Քոց։ Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Լիութիւն սեղանոյս անհատ և աննուազ ա-

Տէր Յիսուս, լիացանք Քո բարութիւնով։ Ուրեմն շնորհակալ լինինք մեր Տէր Աստուծուց՝ Հօրից, Որդուց և սուրբ Հոգուց։ Քրիստոս մեր Աստուածը, որ մեզ այս կե-

րասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց, Նմա փառք յաւիտեանս. ամէն։

րակուրը տուեց, թող անպակաս անէ այս սեղանի լիութիւնը։ Նորան է վայելում փառքը յաւիտեանս. ամէն։

50. ՔՐԻՍՏՈՍՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ Է ՏԱԼԻՍ.

Ղուկ. Է 12—17

Մէկ անգամ Քրիստոսը Նային քաղաքն էր մտնում. քաղաքի դռան մօտ տեսաւ որ մէկ երիտասարդ տանում էին թաղելու. մեռեալը մի այրի կնոջ միամօր որդին էր։ Խղճաց դժբախտ մօր վրայ և ասաց մեռեալին. «Մանո՛ւկ դու, քեզ եմ հրամայում, վե՛ր կաց»։ Ննջեցեալը վերկացաւ, նստեց և սկսաւ խօսել։ Ժողովուրդը փառք էր տալիս Աստուծուն և ամեն կողմից ասում էին. «Մեր մէջ յայտնուել է մի մեծ մարգարէ, Աստուած այցելութիւն արաւ Իւր ժողովրդեան»։

51. ՔՐԻՍՏՈՍԸ ԲԱՐԿՈՒՄ Է ԱՆԴԱՄԱԼՈՒՆԻՆ.

Մատ. Ը. 3. *Ղուկ.* Ե. 18.

Մէկ անգամ Քրիստոսը կափառնաում քաղաքը գնաց և մէկ տուն մտաւ, ուր Նորա մօտ այնքան ժողովուրդ հաւաքուեցան, որ դռան մօտն անգամ տեղ չկար։ Քրիստոսը Աստուածային վարդապետութեամբ քարոզում էր ժողովրդեան։ Այն ժամանակ Նորա մօտ բերում էին մէկ անդամալոյծ, որին չորս մարդ վերցրել էին, բայց ժողովրդի բազմութեան պատճառով անհնար լինելով տուն մտցնել, տան կտուրը բարձրացան, և առաստաղը քանդելով անդամալոյծը մահճի մէջ դրուած Քրիստոսի առաջ իջուցին։ Քրիստոս տես-

նելով նոցա հաւատը, ասաց անդամալուծին. «Ներուած լինին մեղքերդ»։ Դպիրները մտածում էին իրանք իրանց մէջ և ասում. «Սա ինչու է հայհոյում. Աստուծուց զատ ո՞վ կարող է մեղքերի թողութիւն տալ»։ Քրիստոսը՝ իմանալով նոցա միտքը հարցրեց նոցա թէ՝ «այս երկու խօսքերից որը աւելի հեշտ է, ասելը՝ ներուած լինին մեղքերդ, թէ ասելը՝ վեր կաց և գնա։ Բայց որպէսզի իմանաք, թէ Մարդու Որդին իրաւունք ունի աշխարհիս մեղքերին թողութիւն տալու, քեզ եմ ասում (անդամալուծին), վեր կաց, անկողինդ առ և տունդ գնա»։ Հիւանդն իսկոյն վեր կացաւ, առաւ անկողինը և գնաց։ Ամենքն աղաղակում էին. «Այսպիսի հրաշալի բան երբէք չենք տեսել»։

52. ՔՐԻՍՏՈՍԸ ԲԱՐԿՈՒՄ Է Ի ԾՆԷ ԿՈՑՐԻՆ.

Ցով. Թ. 1—17

Քրիստոսը Երուսաղէմի մէջ մէկ անգամ ի ծնէ կոյր մարդու պատահեցաւ, որ ողորմութիւն էր խնդրում։ Հրէայք այնպիսի կարծիք ունէին, թէ մարդուս պատահած ամենայն դժբախտութիւնները իւր մեղքի պատիժն են։ Իսկ եթէ փոքր տղայոց պատահէր դժբախտութիւնը, կարծում էին թէ նորա ծնողաց մեղքի պատիժն է։ Քրիստոսի աշակերտներն ևս այն կարծիքի էին, և տեսնելով ի ծնէ կոյր մարդուն, հարցրեցին Քրիստոսին. «Սա ի՞ւր, թէ ծնողաց մեղքի համար կոյր ծնուած է»։ Քրիստոսը պատասխանեց. «Ո՛չ իւր մեղքի և ո՛չ իւր ծնողաց, մեղքի համար է, բայց այն պատճառով կոյր է ծնուել, որ Աստուծոյ հրաշալի գործերը յայտնուին»։ Այս ասելով, գետնի վերայ թքեց, կաւ շինեց և կոյրի աչքերին քսելով՝ հրամայեց որ երթայ Սելովամ աւազանի մէջ լուանայ։ Կոյրը կատարեց այս հրամանը և աչքերը բացուած՝ յետ դարձաւ այնտեղից։

---

53. ՏԱՍՆ ԲՈՐՈՏՆԵՐԻ ԲԱՐԿՈՒԻԼԸ.

Ղուկ. ԺԸ 11—19.

Քրիստոսը մի գիւղ մտնելով, տասն բորոտների պատահեցաւ (որ փոխադրական և անբուժելի ցաւ էր)։ Նորանից էին հոգի Հրէայ էին, և մինը Սամարացի։ Երբ հեռուից տեսան Քրիստոսին, աղաղակեցին. «Վարդապետ, օգնիր մեզ»։ Քրիստոսը տեսնելով նոցա հաւատը, ասաց. «Գնացէք, ցոյց տուէք ձեր անձը քահանային»։ Այս բանս ասաց այն պատճառով, որ Հրէից մէջ օրէնք կար, որ բորոտութիւնից առողջացող մարդը պէտք է յայտնուէր քահանային և շնորհակալութեան զոհ մատուցանէր։ Այս պատճառով բորոտի քահանայի մօտ երթալը առողջանալու նշան էր։ Բորոտները գնացին և ճանապարհին առողջացան։ Բայց էնն Հրէայք մոռացան այն բարերարութիւն անողին, և միայն Սամարացին եկաւ Քրիստոսին շնորհակալութիւն մատուցանելու։ Քրիստոսը Իւր աշակերտներին ցոյց տուաւ Սամարացուն և ասաց. «Այս Սամարացին, որ աղանդաւոր է համարվում, աւելի լաւ է Հրէաներից, որոնք իրանց արդարութեան վրայ պարծենում են»։ Եւ ապա Սամարացուն դառնալով, ասաց. «Զէ որ տասն հոգի առողջացան, այժմ էնն հոգին ո՞ւր են, ինչու նոքա չվերադարձան փառք տալու Աստուծուն»։ Եւ ապա ասաց նորան. «Գնա, հաւատքդ փրկեց քեզ»։

54. ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ.

Յիսուս Քրիստոսը Իւր վարդապետութիւնը քարոզում էր քաղաքներում, գիւղերում և Երուսաղէմի տաճարում։ Նորա քարոզների գլխաւոր բովանդակութիւնն այս էր՝ «Ապաշխարեցէք և հաւատացէք աւետարանին»։

Աւետարան խօսքը նշանակում է աւետիք կամ բարի լուր այն մասին, թէ Աստուած ներում է մարդիկների մեղքերը և շնորհում է նոցա երկնքի արքայութիւնը Քրիստոսի ձեռքով։

Ապաշխարել նշանակում է զղջալ, ատել մեղքը, խոստովանել նորան, Աստուծուց թողութիւն խնդրել և հաստատապէս վճռել այնպէս ապրել, ինչպէս ուսուցանում է Աստուածային օրէնքը։

Մարդիկների մէջ աւետարանը տարածելու համար Յիսուս Քրիստոսը Իւր բազմաթիւ աշակերտներից ընտրեց տասն և երկուսին, որ նրանց ուղարկէ զանազան տեղեր քարոզելու համար։ Սորա համար էլ նոցա առաքեալ անուանեց, որ նշանակում է ուղարկուած։ Նոցա անուններն են՝ Պետրոս և Անդրէաս, Յակոբոս և Յովհաննէս, Փիլիպպոս և Բարթուղիմէոս, Մատթէոս և Թովմաս, Յակոբոս Ալփեայ և Սիմէոն Նախանձայոյզ, Յուդայ Յակովբեան և Յուդայ Իսկարիովտացին։

55. ՅԻՍՈՒՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ԹԷ ԻՆՔՆ Է ՔՐԻՍՏՈՍԸ.

Մատ. Ա. 14—15.

Քրիստոսը Իւր քարոզութիւնը Գալիլիայի մէջ սկսաւ։ Մէկ անգամ գնաց Նազարէթ քաղաքը, ուր մեծացել էր։ Այն օրը շաբաթ էր։ Շաբաթ օրերը բոլոր Հրէայք ժողովարան էին գնում։ Ժողովարան ասւում էին այն տները՝ ուր նոքա հաւաքւում էին աղօթք անելու, Սաղմոս երգելու և Սուրբ գիրք կարդալու համար։ Քրիստոսը ժողովարանը մտաւ, Եսայի մարգարէի գիրքը առաւ և կարդաց այն տեղը, ուր Քրիստոսի գործերի վրայ խօսում էր մարգարէն *), և ասաց

*) Հոգի սուրբ ի վերայ Իմ վասն որոյ և էօծ Զիս...

թէ՝ այս խօսքերը Իմ վրայ կատարուեցան, որովհետև Ես եմ Քրիստոսը, այսինքն՝ Աստուծոյ օծեալը։ Նազարէթի բնակիչները կասկածանքով լսում էին Նորա խօսքերը։ Այն ժամանակ Քրիստոսը ասաց նոցա. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, թէ ոչ մի մարգարէ իւր գաւառի մէջ չի ընդունւում», և յիշեցրեց նոցա թէ ինչպէս երբեմն Աստուած օգնում էր հեթանոսներին, իսկ Իսրայէլացիներին Իւր օգնութիւնից զրկում։ Լսողները զայրացան Քրիստոսի վրայ այն քարոզութեան պատճառով։ Բռնեցին Նորան, քաղաքից դուրս հանեցին և ուզում էին մէկ ժայռից վայր ձգել, բայց Նա նոցա միջից անցաւ ու գնաց։

56. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԾՈՑ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ. ԱՆԱՌԱԿ ՈՐԴՒՈՑ ԱՌԱԿԸ.

Մատ. Թ. 10—13. *Ղուկ. ԺԵ.* 11—32.

Քրիստոսը քարոզում էր, թէ Հայրն Աստուած ողորմած է և ուրախութեամբ ընդունում է Իրան դիմող ամենայն ապաշխարող մարդիկներին։

Մէկ անգամ վարիսեցիք հարցրին Քրիստոսի աշակերտներին. «Ի՞նչու ձեր վարդապետը մեղաւոր մարդկանց հետ ուտում է և խմում»։ Քրիստոսը նրանց պատասխանեց թէ՝ «առողջներին բժիշկ հարկաւոր չէ, այլ հիւանդներին։ Ես եկել եմ ոչ թէ արդարներին դեպի ապաշխարութիւն կոչելու, այլ մեղաւորներին»։ Քրիստոսը՝ ուզելով որ Իւր վարդապետութիւնը ժողովուրդը լաւ հասկանայ, անառակ որդու առակը պատմեց նոցա, թէ՝ «մի մարդ երկու որդի ունէր. փոքր որդին իւր հօրից խնդրեց հայրական ստացուածքից իրան ընկած բաժինը, և հօր տանից հեռանալով՝ հեռու աշխարհ գնաց։ Այնտեղ վատնեց իւր բոլոր ունեցածը և բոլորովին աղքատութեան մէջ ընկաւ։ Այն աշխարհը սով

ընկաւ և անառակ որդին իւր աղքատութեան պատճառով մէկի մօտ ծառայութեան մտաւ, որ նորա խոզերն արածացնէր։ Սաստիկ կարօտութեան ժամանակ յիշեց հօր տունը, և միտքը դրաւ, որ երթայ և իւր հօր մօտ մշակութիւն անէ։ Հայրը մեծ ուրախութեամբ ընդունեց նորան իբրև որդի, և այդ պատճառով մեծ խնջոյք արաւ։ Այն միջոցին նորա մեծ



որդին դաշտից դարձաւ և երգերի ձայն լսելով տան մէջ, հարցրեց, թէ «այս ինչ ուրախութիւն է»։ Պատասխանեցին, թէ «եղբայրդ եկաւ և հայրդ նորան ողջ և առողջ տեսնելու համար մեծ խնջոյք է պատրաստել»։ Մեծ որդին նեղացաւ և չէր ուզում տուն մտնել։ Հայրը դուրս եկաւ, որ նորան ներս կանչէ։ Նա պատասխանեց. «Ես երբէք մի ուլ գոնէ ինձ չտուիր, որ բարեկամներիս հետ ուրախանայի, իսկ այդ որդուդ համար մորթեցիր պարարտ եզը, որ բոլոր ունեցածդ

անառակութեամբ վատնեց»։ Հայրը պատասխանեց նորան. «Որդեակ, դու միշտ մօտս ես, և բոլոր ունեցածս քոնն է, իսկ այս եղբայրդ, որ մեռած էր, կենդանացաւ. ինչպէս չուրախանամ սորա վրայ»։

Հայր ասելով Աստուած պիտի իմանանք, փոքր որդին մեղաւոր մարդն է, մեծ որդին օրինապահն է, որ իւր բարի գործերով պարծենում է։

Քրիստոսը մեզ իրաւունք տուաւ Աստուծուն մեզ Հայր անուանելու. այս պատճառով մենք Աստուծուն աղօթք անելու ժամանակ Նորան երկնաւոր Հայր ենք կոչում, եւ նորանով յայտնում ենք, թէ Նորա հայրական խնամքին ապաւինած ենք, և ցանկանում ենք Նորա կամքը կատարել այնպէս, ինչպէս որ երկնքում հրեշտակները կատարում են։

Հայր մեր, որ յերկինս ես։

57. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ՝ ԹԷ ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՎԱՐՈՒԻՆ, ՈՐ ԱՐԾԱՆԻ ԼԻՆԻՆ ԱՍՏՈՒԾՈՑ ՈՐԴԻՔ ԿՈՉՈՒԵԼՈՒ. ՔՐԻՍՏՈՍՆ ՕՐՀՆՈՒՄ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ.

Մատ. Ը. 2—16. 48. Ղուկ. Զ. 20—26. 36. Ղուկ. ԺԸ. 15—17.

Քրիստոսն ասաց Իւր աշակերտներին թէ՝ «ողորմած և կատարեալ եղէք ձեր Երկնաւոր Հօր նման»։

Իւր կեանքի մէջ մի օրինակ տուաւ, որին մարդիկ պիտի հետևեն, և երանելի (բարեբախտ, Աստուծոյ արքայութեան արժանի) անուանեց այն մարդկանց, որոնք Նորա օրինակին են հետևում։ Նա հեզ էր և սրտով խոնարհ և մարդկանց մեղքի վրայ արտասվում էր։ Արդար ու ողորմած էր, և սրտով այնպէս մաքուր էր, որ ամենևին մեղք չունէր։ Ոչ մէկի դէմ թշնամութիւն չունէր։ Կային

մարդիկ, որ նորան ատում էին և հալածում և մինչև իսկ զրպարտում էին, բայց Նա համբերում էր բոլոր զրպարտութիւններին և աղօթում էր թշնամիների համար։ Քրիստոսն ասաց.

1) Երանի՛ հոգով աղքատներին (այսինքն նոցա, որ իւրեանց պակասութիւնները ճանաչում են և իրանք իրանց մեղաւոր են համարում), որովհետև երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժառանգեն։

2) Երանի սգաւորներին (որ լաց են լինում և ցաւում են իւրեանց մեղքի համար), որովհետև նոքա պիտի մխիթարուին։

3) Երանի հեզ մարդկանց (որ ո՛չ իրանք են բարկանում և ո՛չ ուրիշներին բարկանալու պատճառ են լինում), որովհետև նոքա պիտի ժառանգեն երկիրը։

4) Երանի՛ նորանց, որոնք արդարութեան համար քաղցած ու ծարաւ են (որ արդարութիւնն այնպէս են սիրում ինչպէս քաղցած մարդը կերակուրը), որովհետև նոքա պիտի կշտանան։

5) Երանի՛ ողորմութիւն տուող մարդկանց, որովհետև նոքա էս ողորմութիւն պիտի գտնեն։

6) Երանի՛ մաքուր սիրտ ունեցողներին, որովհետև նոքա Աստուծուն պիտի տեսնեն։

7) Երանի՛ խաղաղարար մարդկանց (որ իրանք չեն կըռւում, աշխատում են ուրիշներին հաշտեցնել), որովհետև նոքա Աստուծոյ որդիք պիտի կոչուին։

8) Երանի՛ արդարութեան համար հալածուող մարդկանց, որովհետև երկնքի արքայութիւնը նոքա պիտի ժառանգեն։

9) Երանի՛ ձեզ, երբ Իմ պատճառով ձեր վրայ ամեն տեսակ բամբասանք կանեն. խնդացէ՛ք, ուրախացէ՛ք, որովհետև երկնքում ձեր վարձքը շատ կը լինի։ Դուք էք աշխարհիս լոյսը. ուրեմն, թո՛ղ ձեր լոյսն այնպէս լուսաւորէ

(այսինքն՝ այնպէս կեանք անցկացրէ՛ք) մարդկանց առաջև, որ նոքա տեսնեն ձեր բարի գործերը և փառք տան ձեր երկնաւոր Հօրը։

Քրիստոսը ուրիշ մի օրինակ էս ցոյց տուաւ, որին մենք պիտի հետևենք երկնքի արքայութեանը հասնելու համար։ Նորա մօտ մի անգամ բերին շատ մանուկներ, որ ձեռք դնէ նոցա վրայ և օրհնէ։ Քրիստոսի աշակերտները, կարծելով թէ տղայքն անարժան են Նորա օրհնութեանը, և որպէսզի նոքա իւրեանց վարդապետին նեղութիւն չտան՝ չէին թողնում, որ տղայքը Քրիստոսին մօտենան։ Քրիստոսը՝ այս տեսնելով, բարկացաւ և ասաց Իւր աշակերտներին. «Թողէ՛ք այդ մանուկներին և մի՛ արգելէ՛ք դոցա Ինձ մօտ գալ, որովհետև դոցա նմաններինն է երկնքի արքայութիւնը։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ ո՛վ որ տղայի պէս չի ընդունիլ երկնքի արքայութիւնը, կարող չէ նորա մէջ մտնել»։ Յետոյ մանուկներին գիրկն առաւ, ձեռքը դրաւ նոցա վրայ և օրհնեց նորանց։

Մենք ինչպէս Աստուծոյ որդիք, պէտք է աշխատենք Աստուծոյ անունը փառաւորել, բայց շատ անգամ չար գործերով Աստուծոյ անունն անպատուում ենք անհաւատ մարդկանց առաջ։ Այս պատճառով օգնութիւն ենք խնդրում Աստուծուց սրբութեամբ ապրելու համար, այնպէս որ ուրիշ մարդիկ էս տեսնելով մեր բարի գործերը, փառք տան մեր երկնաւոր Հօրը, որի համար էլ ասում ենք աղօթելով՝ *«սուրբ եղիցի անուն Քո»*։

58. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԻՒՐ ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Մատ. ժԳ. 4—9. 19—32. 36—43.

Քրիստոսը քարոզում էր, թէ Իւր թագաւորութիւնը (այսինքն՝ իրան հաւատացող ժողովուրդը) պիտի տարածուի բոլոր ազգերի մէջ, և մինչև վերջին դատաստանի օրը այն թագաւորութեան մէջ արդար և մեղաւոր մարդիկ միասին պէտք է լինին։ Քրիստոսը թագաւորի հարսանիքի համար պատրաստուած խնջոյքի առակով սովորեցրեց, թէ Իւր աքայութիւնը Հրէաներից զատ հեթանոսներն էլ պիտի ժառանգեն. և այսպէս ասաց. «Թագաւորի մէկը խնջոյք պատրաստեց իւր որդու հարսանիքի համար և շատ մարդիկ հրաւիրեց։ Երբ ամեն բան պատրաստ էր, ուղարկեց իւր ծառաներին, որ հրաւիրեալներին կանչեն. բայց նոքա չկամեցան գալ և թագաւորի ծառաներից ոմանց ծեծեցին և ոմանց էլ սպանեցին։ Թագաւորը բարկանալով՝ նոցա դէմ զօրք ուղարկեց, իւր ծառաների սպանողներին կոտորեց, այրել տալով նոցա քաղաքները, և հրամայեց որ խնջոյքի հրաւիրեն բոլոր այն մարդկանց, որոնց կըգտնեն քաղաքից դուրսը և ճանապարհի վրայ»։

Թագաւորն է Աստուած, թագաւորի որդին է Յիսուս Քրիստոսը, քաղաքն է Հրէից թագաւորութիւնը, հարսանիքի հրաւիրեալներն են Աբրահամի սերունդ՝ Հրէաները, թագաւորի ծառաներն են քահանաները և մարգարէները, քաղաքից դուրս ճանապարհների վրայ եղածներն են հեթանոսները, որ մոլորուած էին կռապաշտութեան և մեղքի մէջ։ Այս առակից հասկանում ենք, թէ Աստուած Հրէից փոխանակ Իւր արքայութեան մէջ ընդունեց հեթանոսներին, որոնք իրան չէին հաւատում։

Սովորեցրեց թէ Աստուծոյ արքայութեան մէջ մինչև

վերջին դատաստանի օրը մեղաւորները ևս պիտի ապրին արդարների հետ։ Քրիստոսը ցորենի և *որոմի* առակով այսպէս ասաց. «Երկնքի արքայութիւնը նմանում է այն մարդուն, որ արտի մէջ լաւ սերմ սերմանեց, բայց յետոյ նորա մէջ ցորենի հետ *որոմն* ևս բուսաւ։ Ծառայք իւրեանց տիրոջ մօտ եկան և ասացին. «Տէր, դու լաւ սերմն ցանեցիր, որոմը ո՞րտեղից բուսաւ»։ Տէրը պատասխանեց. «Թշնամի մարդու արած բան է այդ»։ Ծառայք ասացին. «Կուզես, գնանք որոմը քաղենք»։ Բայց տէրը պատասխանեց. «Ո՛չ, չլինի թէ որմի հետ ցորենն ևս քաղէք. թողէք ցորենի հետ որոմն ևս *աճի* մեծանայ մինչև հնձի ժամանակը։ Հընձի ժամանակ հնձողները ցորենը *շտեմարանի* մէջ կըհաւաքեն, իսկ որոմը կայրեն»։ Քրիստոսն այս առակը Իւր աշակերտներին այսպէս բացատրեց. «Բարի սերմն ցանող—Մարդոյ Որդին է (Քրիստոս Ինքն-իրան անուանում էր որդի մարդոյ). դաշտը—աշխարհս է. բարի սերմը արքայութեան որդիքն են. որոմը ցանող—թշնամին—սատանան է. հունձը—աշխարհիս վերջն է. իսկ հնձողները—հրեշտակներն են։ Ինչպէս որ հնձից յետոյ որոմը կայրեն, այնպէս ևս աշխարհիս վերջը պիտի լինի։ Մարդոյ Որդին կուղարկէ Իւր հրեշտակներին, որոնք կըհաւաքեն Նորա արքայութեան միջից այն բոլոր մարդկանց, որոնք անօրէնութիւն են գործել, Նորանց գեհենի կրակի մէջ կըձգեն, ուր նոքա պիտի լան և ատամները կրճտեն։ Իսկ արդարներն արեգակի նման երկնքի արքայութեան մէջ պիտի փայլին»։

Քրիստոսը բոլոր Իրան հաւատացողներին ընդունեց Իւր՝ երկրիս վրայ հաստատած արքայութեան մէջ. բայց մենք շատ անգամ մեր չար գործերի պատճառով այն արքայութիւնից դուրս ենք գալիս, սատանայի ծառայ ենք դառնում և զրկվում ենք Քրիստոսի արքայութիւնից։ Այս պատճառով խնդրում ենք Աստուծուց, որ օգնէ մեզ Նորա արքայութեան

մէջ մնալու և թագաւորի նման մեր վրայ իշխէ, և աղօթելով ասում ենք. «*Եկեսցէ արքայութիւն քո*»։

59. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԹԷ՝ Ի՞ՆՉՊԷՍ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ՀԱՒԱՏԱ ԵԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ. ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ.

Մատ. ԺԳ. 4—9. 19—32. 36—43.

Քրիստոսը ուսուցանում էր, թէ այն մարդը միայն փրկութիւն կը գտնէ, ո՛վ որ բոլոր սրտով կընդունի Իւր քարոզութիւնը և կրկատարէ, այսինքն՝ նա միայն կփրկուի, ով որ իրան կրհաւատայ և իւր հաւատքը ցոյց կրտայ բարի գործերով։ Այս բանը Քրիստոսը բացատրեց սերմանացանի և քարի վրայ տուն շինողի առակներով։ Նա ասաց. «Ա՛հա սերմանացանը դուրս եկաւ սերմանելու. սերմերից ոմանք ճանապարհի վրայ ընկան և պտուղ չբերին, որովհետև անցնող գարձողներից ոտնակոխ եղան ու թռչուններըը նորանց կերան։ Ոմանք քարոտ տեղ ընկան, և արմատ բռնեցին, բայց որովհետև արմատը ամրանալու տեղ չունէր, չորացան։ Ոմանք փշերի մէջ ընկան, ծլեցան, բուսան և փշերից խեղդուեցան։ Ոմանք ևս լաւ հողի վրայ ընկան և առատ պտուղ տուին։

Սերմանացանը Քրիստոսն է. սերմը—նորա քարոզութիւնն է. հողը—մարդու հոգին է։ Ոտքի տակ ընկնող սերմերը—կընշանակեն անհոգ և անուշադիր մարդկանց հոգիքը. քարոտ հողը—կընշանակէ թեթևամիտ մարդկանց հոգիքը, որ ուրախութեամբ ընդունում են նորա քարոզութիւնը, բայց վտանգ և նեղութիւն հասնելուն պէս մէկէն թողնում են նորան։ Փշերով շրջապատուած հողն օրինակ է այն մարդուն, որ զբաղուած է կենսական հոգսերով, որով նորա միջի բարի գործերը խեղդվում են։ Բարի հողն է ուշադիր մարդու

հոգին որ ազատ և հեռու է ունայնութիւններից, նա Աստուծոյ խօսքը կընդունէ և իւր բարի գործերը իբրև պտուղ կրբերէ։

«Ամեն մարդ, որ ինձ կոչում է՝ Տէր, Տէր, կարող չէ երկնքի արքայութիւնը մտնել. բայց նա միայն արքայութեան արժանի կըլինի, ո՛վ որ Իմ երկնաւոր Հօրս կամքը կրկատարէ։ Այն մարդը, որ Իմ խօսքերս լսում է և չէ կատարում, նման է այն անմիտ մարդուն, որ իւր տունը շինեց աւազի վրայ (այսինքն՝ առանց ամուր հիմքի)։ Անձրև եկաւ, գետերը դուրս եկան ափերից, քամին փչեց և տունը քանդուեցաւ։ Իսկ այն մարդը, որ Իմ խօսքերս լսում է և կատարում, նման է այն իմաստուն մարդուն, որ իւր տունը քարի վրայ շինեց, և ո՛չ քամին և ոչ ջուրը չկարողացան կործանել»։

Աստուծոյ երկրաւոր արքայութեան մէջ տպրելուց և մեռնելուց յետոյ Նորա երկնաւոր արքայութիւնը մտնելու համար պէտք է հնազանդունք Աստուծոյ կամքին։ Այս պատճառով խնդրում ենք Աստուծուց, որ օգնէ մեզ կատարել Իւր սուրբ կամքը այնպէս, ինչպէս որ հրեշտակները կատարում են երկնքում, և ասում ենք. «*Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի*։

60. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Մատ. ԻԸ. 35—40. Ի. 12.

Օրէնսգէտ մարդու մէկը հարցրեց Քրիստոսից թէ՝ «Օրէնքի մէջ ամենամեծ պատուիրանը ո՞րն է»։ Քրիստոսը պատասխանեց, «Սիրիր քո Տէր Աստուծուն բոլոր հոգովդ, բոլոր սրտովդ և բոլոր մտքովդ։ Ա՛հա սա է մեծ և առաջին պատուիրանը։ Երկրորդն էլ սորա նման է. «Սիրիր ընկերոջդ

քո անձիդ պէս։ Այս երկու պատուիրանքի վրայ հաստատուած են բոլոր օրէնքները և մարգարէութիւնները»։ (Հրէայք օրէնք էին անուանում Մովսիսի գրքերը, իսկ մարգարէութիւն անուանում էին միւս մարգարէների գրուածքները)։

Մէկ անգամ ևս ասաց. «Ինչպէս որ ուզում էք, որ մարդիկ ձեզ հետ վարուին, այնպէս էլ դուք նոցա հետ վարուեցէք, որովհետև այս իսկ են օրէնքները և մարգարէութիւնները»։ Ուրեմն Աստուծուն և ընկերներին սիրելու մէջ պարունակվում են բոլոր օրէնքները։

61. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԷ Ո՞Վ Է ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄԸ.

Ղուկ. ժ. 29—37. *Մատ.* Ե. 43—48.

Օրէնսգէտ մարդու մէկը հարցրեց Քրիստոսից, թէ «Ո՞վ է իմ ընկերս»։ Քրիստոսը այն խօսքին պատասխանելով, ողորմած Սամարացու առակը պատմեց, թէ «Մարդու մէկը գընում էր Երուսաղէմից Երիքով. ճանապարհին նորա վրայ աւազակները *յարձակուեցան*, ծեծեցին նորան, *կողոպտեցին* և կիսամեռ ձգեցին գնացին։ Պատահեցաւ որ այն ճանապարհի մօտով անցկացաւ մի քահանայ, նա թէև տեսաւ այն *ղըժ-ղախտ* մարդուն, բայց առանց նորան օգնելու, անցկացաւ գնաց։ Նոյն ճանապարհով անցկացաւ մի Ղևտացի, նա ևս նոյն կերպով վարուեցաւ։ Յետոյ անցնում էր մի Սամարացի։ Սա տեսնելով այն *վիրաւորեալ* մարդուն, նորա վէրքերը փաթաթեց, իւր իշի վրայ դրաւ, *պանդոկը* տարաւ, և պանդոկից հեռանալու ժամանակ՝ պանդոկապետին փող տուեց ու խնդրեց որ հոգս ունենայ հիւանդի վրայ, և ասաց. «Եթէ աւելի ծախք անես, յետ դառնալու ժամանակ *կըվճարեմ* քեզ»։ Ուրեմն այն երեք մարդկանցից վիրաւորեալ մարդու ընկերն *ո՛վ* էր», հարցրեց Քրիստոսը։ Օրէնսգէտը պատասխանեց. «Ի հարկէ նա, որ օգնեց նորան»։ Քրիստոսն ասաց. «Ուրեմն գնա՛, և դու այնպէս արա՛»։ (Այս ինքն՝ օգնիր ամենայն կարօտեալներին, և մի՛ որոշիր, թէ նա քո ընկերն է, թէ օտար)։

Քրիստոսը սովորեցնելով, թէ ինչպէս պէտք է վարուինք մեր թշնամիների հետ, որ մեզ չար են կամենում, ասաց. «Սիրեցէք ձեր թշնամիներին, բարի արէք ձեզ *ատողներին* և աղօթք արէք նոցա համար, որ ձեզ նեղացնում են և *հալածում*, այս կերպով ձեր երկնաւոր Հօր որդի կըլինիք, որովհետև Նա իւր արեգակը ծագում է արդարների և մեղաւորների վրայ և անձրևն ուղարկում է չար և բարի մարդկանց համար։

62. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԹԷ Ի՞ՆՉՊԻՍ ՊԻՏԻ Է ՍՈՒՐԲ ՊԱՀԵԼ ՇԱԲԱԹ ԵՒ ՏՕՆ ՕՐԵՐԸ.

Մատ. Գ. 1—5. *Մատ.* ԺԲ. 1—8

Քրիստոսը քարոզում էր, թէ տօն օրերը պէտք չէ պարապ անցկացնել, այլ պէտք է բարեգործութիւն անել։

Շաբաթի տօնին Երուսաղէմ եկաւ։ Այնտեղ տաճարի մօտ մէկ աւազան կար, ուր տանում էին զոհի կենդանիները լուանալու համար։ Աստուծոյ հրեշտակը ժամանակ-ժամանակ այն աւազանն իջնելով ջուրը խառնում էր. և ով որ առաջին անգամ խառնուած ջրի մէջ էր մտնում, առողջանում էր իւր հիւանդութիւնից։ Այս պատճառով աւազանի մօտ միշտ շատ հիւանդներ կային պառկած, և նոցա համար հինգ սրահ կար շինուած։ Քրիստոսը մի շաբաթ օր այնտեղ մտաւ, անդամալոյծ մարդուն մօտեցաւ, որ 38 տարի հիւանդ էր և հարցրեց նորան. «Կամենո՞ւմ ես առողջանալ»։ Հիւանդը պատասխանեց. «Այո՛, Տէր, բայց մարդ չունիմ, որ ջուրը խառնուած ժամանակն ինձ աւազանի մէջ ձգէ, և ես դեռ չմօտեցած

ուրիշն ինձանից առաջ ջուրն է մտնում»։ Քրիստոսն ասաց. «Վեր կաց, անկողինդ ա՛ռ և գնա՛»։ Հիւանդն իսկոյն վերկացաւ, անկողինն առաւ և Աստուծուն փառք տալով՝ գնաց։ Այս բանը մի շաբաթ օր պատահեցաւ. ուստի Հրէից ծերերը հալածում էին Քրիստոսին. և մինչև անգամ կամենում էին Նորան սպանել, այն պատճառով, որ Նա շաբաթ օրերը հրաշքներ էր գործում։ Այն միջոցին Քրիստոսը տաճարը գընաց, առողջացած մարդուն պատահեցաւ և ասաց. «Ահա դու առողջացար, գնա՛, այլ ևս մի՛ մեղանչիր, որ նորից չհիւանդանաս»։

Մէկ շաբաթ օր էլ կրկին Քրիստոսը ժողովարանումն էր. այնտեղ տեսաւ ձեռքը չորացած մի մարդու և ասաց Նորան. «Դուրս արի, մէջտեղը կանգնի՛ր»։ Բազմութեան միջից մէկը հարցրեց. «Մի՞թէ կարելի է շաբաթ օրը բժշկութիւն անել»։ Այն ժամանակ Յիսուսը դարձաւ հարցրեց ժողովրդեան, թէ «Շաբաթ օրը բարի՞ գործ պէտք է անել, թէ չար գործ. կեանք ազատե՞լ պէտք է, թէ կորցնել»։ Ամենքը լռեցին։ Քրիստոսը շարունակեց, ասելով. «Եթէ ձեզանից մէկի ոչխարը փոսի մէջ ընկած լինի, մի՞թէ շաբաթ օրը չի ազատիլ Նորան։ Իսկ մարդը ոչխարից որքան աւելի գերազանց է։ Ուրեմն, շաբաթ օրը կարելի է բարի գործ անել»։


Ուրիշ անգամ ևս դարձեալ շաբաթ օրը Քրիստոսը Իւր աշակերտներով արտի միջից անց էր կենում։ Աշակերտները ճանապարհին ցորենի հասկեր էին քաղում, ափերի մէջ շփում էին և ուտում։ Փարիսեցիք Քրիստոսին ասացին. «Տես, աշակերտներդ շաբաթ օրն արգելուած բաներ են անում»։ Քրիստոսը պատասխանեց նոցա. «Ապա ինչո՞ւ քահանաները շաբաթը խանգարում են տաճարի մէջ զոհ մատուցանելու ժամանակ։ Շաբաթն ստեղծուած է մարդու համար և ո՛չ թէ մարդը շաբաթի համար»։ Ուրեմն տօն օրերին ևս կարելի է հասարակ օրերի գործն անել, եթէ շատ հարկաւոր բարի գործ լինի։

63. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ, ԱՑՍԻՆՔՆ՝ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ, ՊԱՀՔԻ, ԱՂՕԹՔԻ ԵՒ ԼՈՒԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ, ՓԱՐԻՍԵՑՈՑ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԻ ԱՌԱԿԸ.

Մատ. Զ. 1—7. *Ղուկ.* ԺԸ. 9—14.

Հրէից օրէնսգէտները սաստիկ խստութեամբ պահանջում էին ողորմութիւն, պահք, աղօթք և լուացումն։ Բայց այս ամեն բանը անում էին միայն ի ցոյց մարդկան, որպէս զի ուրիշները տեսնեն նոցա արածները և իրանց փառաւորեն։ Քրիստոսը որ քարոզում էր, թէ բարեգործութիւնը այն ժամանակ միայն Աստուծուն ընդունելի և փրկարար է, երբ այն կատարում ենք ո՛չ թէ մարդիկներից վարձ սպանալու յուսով, այլ Աստուծուն և ընկերոջ սիրելու մտքով, ասաց՝ «Երբ ողորմութիւն ես անում, յայտնի կերպով մի՛ անիր, ինչպէս որ կեղծաւորներն անում են այն նպատակով, որ մարդիկներից փառաւորուին։ Իսկ դու երբ որ ողորմութիւն ես տալիս, թո՛ղ ձախ ձեռքդ չիմանայ, թէ աջդ ի՞նչ է անում, որ քո ողորմութիւնը ծածուկ լինի. և Հայրդ, երբ կըտեսնէ քո ծածուկ ողորմութիւնը, քեզ յայտնապէս կըհատուցանէ։ Նմանապէս երբ պահք էք պահում, կեղծաւորների պէս տրտմած մի՛ լինէք, որ երեսները տխրեցնում են, որպէս զի մարդիկներին երևին իբրև պահեցող։ Իսկ դու, երբ պահք ես պահում, օծի՛ր գլուխդ և երեսդ լուա՛, որ մարդիկ չտեսնեն քո պահելը, այլ քո երկնաւոր Հայրդ միայն գիտենայ։ Եւ աղօթք անելու ժամանակդ կեղծաւորների պէս մի՛ լինիր, որ ժողովարանների մէջ և փողոցների անկիւններումը սիրում են աղօթք անել, որպէսզի մարդկանց երևին։ Իսկ դու աղօթք անելու ժամանակ սենեակդ մտիր, դուռդ փակի՛ր և աղօթք արա՛ Հօրդ. և Հայրդ տեսնելով քո

ծածուկ աղօթքը, քեզ կըհատուցանէ յայտնապէս։ Աղօթք անելու ժամանակ հեթանոսների մէջ շատախօսութիւն մի՛ անէք, որովհետև նոքա այնպէս են համարում, թէ շատախօսութեամբ լսելի կըլինին իրանց աղօթքները»։ Քրիստոսն ասում էր նաև, թէ աղօթքը այն ժամանակ զօրաւոր կըլինի, երբ խոնարհութեամբ և հաստատ յուսով է լինում։ Այս բանս բացատրեց Նա անիրաւ դատաւորի և մաքսաւորի ու փարիսեցու առակներով։ Նախ ասաց թէ «Խնդրեցէք և



կառնէք, դուռը բաղխեցէք և կըբացուի»։ Յետոյ ասաց. «Մէկ քաղաքի մէջ մի դատաւոր կար, որ ոչ Աստուծուց էր վախենում և ոչ մարդիկներից էր ամաչում։ Նոյն քաղաքի մէջ բնակվում էր մի խեղճ այրի կին ևս, որ շատ անգամ իւր գործի համար գնում էր դատաւորի մօտ։ Վերջապէս դատաւորը մտածեց ինքն իրան և ասաց. «Այս կինն ինձ հան-

գըստութիւն չէ տալիս, ազատեմ սորան, որ այլևս չգայ և ինձ չձանձրացնէ»։ Լսում էք արդեօք, թէ ինչ է ասում այն անիրաւ դատաւորը։ Հաւատացէք որ Աստուած աւելի շուտով ձեզ կօգնէ։ Խօսքն առաջ տանելով, ասաց. «Մէկ անգամ մի փարիսեցի և մի մաքսաւոր տաճարը մըտան աղօթք անելու։ Փարիսեցին հպարտութեամբ ասում էր. «Շնորհակալ եմ Քեզանից, Աստուած իմ, որ ես ուրիշ մարդկանց նման չեմ. և կամ այս մաքսաւորի նման։ Շաբաթը երկու օր պահք եմ պահում, և իմ աշխատանքի տասներորդ մասը Քեզ եմ ընծայում»։ Այն միջոցին մաքսաւորը հեռուն կանգնած, չէր համարձակվում աչքերը դէպի երկինք բարձրացնել, այլ անդադար իւր կուրծքը ծեծելով ասում էր. «Ցէր Աստուած, ողորմիր ինձ մեղաւորիս»։ Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ մաքսաւորն արդարացած իւր տունը գնաց, իսկ միւսը՝ ոչ»։

Հրէից օրէնսգէտները պահանջում էին լուացումն. ով որ չէր կատարում, մեղաւոր էր համարվում և Աստուծոյ արքայութիւնը մտնելու անարժան։ Քրիստոսը այս աւանդութեան ծուռ լինելը տեսնելով, հերքում էր այն ասելով. «Լսեցէք և հասկացէք. բերան մտած բանը, անլուայ ձեռքով հաց ուտելը երբէք չի պղծիլ մարդուն։ Այլ բերանից դուրս եկած բանները, այսինքն՝ չար մտքերը, սպանութիւնները, շնութիւնները, սուտ վկայութիւնները և հայհոյութիւններն են, որ պղծում են մարդուն»։

64. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ՝ ԹԷ ՄԱՐԴ Ո՞ՐՔԱՆ ՀՈԳՍ ՊԻՏԻ ՔԱՇԷ ԿԵՐԱԿՐԻ ԵՒ ՀԱԳՈՒՍՏԻ ՀԱՄԱՐ.

Մատ. Զ. 25 – 34.

Քրիստոսը քարոզում էր. «Մի՛ հոգաք թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խմէք։ Նայեցէ՛ք երկնքի թռչուններին. նոքա ո՛չ ցանում են, ո՛չ հնձում են և ո՛չ հաւաքում շտեմարանների մէջ, և ձեր Հայրը կերակրում է նրանց։ Մի՞թէ դուք նոցանից գերազանց չէք։ Հագուստի համար ևս ի՞նչու էք հոգս քաշում։ Նայեցէ՛ք դաշտի շուշանին, թէ ի՞նչպէս աճում է, որ ո՛չ աշխատում է և ո՛չ մանում։ Հաւատացնում եմ ձեզ, որ Սողոմոնն անգամ իւր բոլոր փառքի մէջ չհագաւ այն խոտերից մինի նման։ Առաջ Աստուծոյ արքայութիւնը և Նորա արդարութիւնը խնդրեցէ՛ք և այն ամենայն առաւելութեամբ կըտրուի ձեզ (այսինքն՝ աշխատեցէ՛ք լինել արդար և ողորմած, այն ժամանակ Աստուած ձեզ առատապէս կըտայ ձեր կենսական պիտոյքը)։ Այսպէս ևս հոգս մի՛ քաշէք վաղուան համար (այսինքն՝ այսօրուան անելու գործերդ վաղուան մի՛ ձգէք, այսօր իսկ արէք և բոլորովին նորա վրայ հոգացէ՛ք, վաղուան համար մտածութեան մէջ չընկնելով)։ Իւրաքանչիւր օրուայ համար բաւական է այն օրուայ տառապանքը»։

Քրիստոսը քարոզում էր, թէ ողորմածն Աստուած մեր կեանքը պահպանելու ամեն պիտոյից համար հոգս է քաշում և մեր ամենօրեայ հացը տալիս է մեզ։ Այս պատճառով մենք դիմում ենք դէպի Աստուած այս խնդրուածով. «*Տո՛ւր մեզ հանապազորդ տո՛ւր մեզ այսօր*»։

---

65. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՀԱՐԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Մատ. ԻԲ. 15—21. ԻԷ. 24 – 27.

Քրիստոսը քարոզում էր, թէ պէտք է թագաւորական հարկերը և եկեղեցական տուրքերը վճարել։ Մէկ անգամ փարիսեցի՛ք կամենալով խօսքով բռնել Քրիստոսին, կապել և դատաստանի մատնել, հարցրին Նորանից թէ՝ «Հարկաւոր է կայսեր տուրք տալ, թէ ո՛չ»։ Այն ժամանակ Հրէաստանին տիրապետում էին Հռովմայեցոց թագաւորները, որ կայսր էին կոչվում։ Փարիսեցի՛ք մտածում էին. եթէ սա պատասխանէ, թէ հարկ տալ պէտք է, ժողովուրդը Սորան Քրիստոսի տեղ չի ընդունիլ, որովհետև կայսեր հարկ տալն օրէնքի հակառակ կըհամարուի. իսկ եթէ ասէ՝ հարկ տալ պէտք չէ, այն ժամանակ Նորան, իբրև ժողովրդեան մոլորեցնող, կայսերը կըմատնենք։ Քրիստոսը պատասխանեց նոցա։ «Ո՛վ կեղծաւորներ, ի՞նչու էք ինձ փորձում, ցոյց տուէ՛ք ինձ այն դահեկանը, որով հատուցանում էք հարկը»։ Տուին մի դահեկան։ Քրիստոսը հարցրեց. «Սորա վրայինը ո՞րի պատկերն է կամ գիրը»։ Փարիսեցի՛ք պատասխանեցին. «կայսերը»։ Քրիստոս այն ժամանակը ասաց. «Ուրեմն գնացէ՛ք կայսեր հարկը կայսեր տուէ՛ք, և Աստուծոյ պատիւը Աստուծուն»։ Այստեղից պարզապէս երևում է, թէ ամենայն մարդ պարտական է ծառայել Աստուծուն և թագաւորին։

Օրէնքի համեմատ իւրաքանչիւր Հրէայ պարտաւոր էր ամեն տարի տաճարին մի մի մնաս (43 կոպէկ) տուրք տալ։ Մէկ անգամ Պետրոսին մօտեցաւ այն հարկը հաւաքող մարդը և ասաց. «Ձեր վարդապետը չի՞ տալ արդեօք երկդրամեան հարկը»։ Պետրոսը պատասխանեց, թէ կըտայ։ Երբ տուն մտան, Քրիստոսը հարցրեց Պետրոսին. «Դու ի՞նչպէս ես կար-

ծում, աշխարհիս թագաւորներն ումից են հարկ առնում, իրանց որդկերանցից, թէ օտարներից»։ Պետրոսը պատասխանեց. «օտարներից»։ «Ուրեմն որդիքն ազատ են, ասաց Քրիստոսը (այսինքն՝ ես իբրև Որդի Աստուծոյ, ազատ եմ այդ հարկից)։ Բայց որպէսզի ժողովուրդը չգայթակղուի, գնա ծովը կարթ ձգիր, և առաջին բռնած ձկան բերանը բաց արա և մի սատեր (86 կոպէկ) կըգտնես, այն առ և տուր իմ և քո փոխանակ»։ Այսպէս ահա Քրիստոսը, որ հարկ չտալու իրաւունք ուներ, տուեց այն՝ մարդկանց օրինակ տալու համար։

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻ

Տէր Աստուած մեր, կեցո՛ զամենաբարեպաշտ Թագաւորն և զԿայսրն ամենայն Ռուսաց զՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉՆ։ Զօրացո՛ զնա, օգնեա՛ զաւակաց և զօրաց Նորա՝ պահելով զամենեսին ի խաղաղութեան։

Թագաւոր յուսացաւ ի Տէր. յողորմութենէ Բարձրելոյն նա մի սասանեսցի. ամէն։

Տէր Աստուած մեր, կեանք տո՛ւր ամենաբարեպաշտ Թագաւորին և ամենայն Ռուսաց կայսը ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԻՉԻՆ։ Զօրացրո՛ւ Նորան, օգնի՛ր Նորա զաւակներին և զօրքերին և ամենքին էլ խաղաղութեան մէջ պահպանի՛ր։

Թագաւորը, որ իւր յոյսը դնում է Աստուծոյ վրայ, երբէք չի զրկուիլ Նորա ողորմութիւնից. ամէն։

---

66. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՄԵՂՔԻ ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Մատ. Զ. 14—15. ԻՐ. 21—36.

Քրիստոսը մեղքի թողութիւն խոստացաւ միայն այն մարդկանց, որոնք իրանք ևս ներում են իրանց ընկերոջը։ Այսպէս ասաց. «Եթէ դուք ներէք մարդկանց իրանց մեղքերը, ձեր երկնաւոր Հայրն ևս ձեզ կը ներէ. իսկ եթէ դուք չէք ներիլ մարդկանց իրանց մեղքերը, ձեր Հայրն ևս չի ներիլ ձեր մեղքերը»։

Պետրոսն այս լսելով, հարցրեց. Տէր, եթէ եղբայրս իմ դէմ մեղանչէ, քանի՞ անգամ պէտք է ներեմ նորան։ Կարելի՞ է մինչև եօթն անգամ ներել»։

Քրիստոսն ասաց. «Ո՛չ թէ եօթն անգամ միայն, այլ եօթանասուն անգամ եօթն»։ Այս խօսքի վրայ երկու պարտապանների առակը պատմեց, թէ՝ «Մէկ թագաւորի մօտ բերին մի մարդ, որ նրան պարտական էր 10,000 քանքար։ Որովհետև պարտապանը չէր կարող այն ահագին պարտքը վճարել, թագաւորը խստիւ հրամայեց, որ ծախեն նորան իւր ընտանիքով և բոլոր ստացուածքովը։ Պարտապանը ոտքն ընկաւ և աղաչելով ասաց. «Տէր, համբերի՛ր, ժամանակ տո՛ւր ինձ, բոլոր պարտքս կըհատուցանեմ։ Թագաւորը խղճաց վրան և բոլոր պարտքը ներեց։ Պարտապանը թագաւորի մօտից դուրս գալով, ընկերներից մէկին պատահեցաւ, որ իրան 100 դահեկան պարտական էր. բռնեց նորան և պահանջում էր որ շուտով հատուցանէ։ Պարտապանն ոտքն ընկաւ, աղաչում էր, ասելով՝ «փոքր ինչ համբերի՛ր, բոլոր պարտքս կըհատուցանեմ»։ Բայց նա նորա աղաչանքին չլսեց, և բանտարկել տուաւ։ Ընկերներն այս պատահմունքը տեսնելով, գնացին պատմեցին թագաւորին։ Այն ժամանակ թագաւորը նորան իւր մօտ կանչեց և ասաց. «Ո՛վ չար ծա-

ռայ, ես քո աղաչանքիդ զիջանելով՝ բոլոր պարտքդ ներեցի, պէտք չէր, որ դու ևս ընկերոջդ ներէիր»։ Այս ասելով թագաւորը դահիճներին կանչեց և հրամայեց, որ այն պարտապանին բանտ դնեն, մինչև որ բոլոր պարտքը հատուցանէ։ Այսպէս ևս իմ երկնաւոր Հայրս կվարուի ձեզ հետ, եթէ ձեզանից իւրաքանչիւրը սրտանց չներէ իւր եղբօր մեղքերը»։

Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։

67. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ղուկ. ԺԱ. 1 — 4. Մատ. Զ. 9 — 13.

Մէկ անգամ Քրիստոսի աշակերտներն եկան Նորա մօտ և աղաչելով ասացին. «Տէր, սովորեցրո՛ւ մեզ աղօթք անել»։ Քրիստոսն ասաց. «Ահա այսուհետև այսպէս աղօթք արէք. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ’ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ’ի չարէ. Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն.— «*Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո անունը, գայ քո թագաւորութիւնը, քո կամքը լինի երկրիս վրայ՝ ինչպէս որ լինում է երկնքումը։ Մեր ամենօրեայ հացը տուր մեզ այսօր. եւ թո՛ղ մեզ մեր պարտքերը՝ ինչպէս որ մենք ևս մեր պարտք ունեցողներին թողնում ենք։ Փորձանքի մէջ ևս մի՛ ձգիր մեզ, այլ ազատեն չար բանից փրկիր մեզ։ Վասնզի թագաւորութիւն, ոյժ, փառք, ամենն ևս քո են յաւիտեան. ամէն*»։ Այս

աղօթքը Տէրունական է ասվում, որովհետև մեզ սովորեցրեց Տէրն մեր Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդին։

Այս աղօթքի մէջ Աստուծուն մենք անուանում ենք *մեր երկնաւոր Հայր*, որովհետև նա իւր ողորմութիւնով մեզ — քրիստոնեաներիս — Իւր որդիք անուանեց, սիրում է մեզ հօր պէս և պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու։ Դէպի Աստուած ուղղած *առաջին* խնդրուածքն է՝ «Սուրբ եղիցի անուն քո», այսինքն թող Քո անունը սուրբ լինի։ Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած մեզ՝ Նորա որդուցս, օգնէ սրբութեամբ ապրել և բարի գործերով մարդոց մէջ տարածել Նորա անուան փառքը։ *Երկրորդ* խնդրուածք. «Եկեսցէ արքայութիւն քո». այսինքն թող գայ մեզ համար Քո արքայութիւնը։ Այս խօսքերով խնդրում ենք Աստուծուց, որ Նա օգնէ մեզ՝ լինել ճշմարիտ հպատակներ Նորա արքայութեանը այս երկրիս վրայ,— լինել քրիստոնեաներ ոչ միայն խօսքով, այլ և գործով։ *Երրորդ* խնդրուածք. «Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի»։ — Այս խօսքերով խնդրում ենք, որ նա օգնէ մեզ՝ Նորա կամքը կատարել այս երկրիս վրայ այնպէս, ինչպէս երկնքում կատարում են Նորա սուրբ հրեշտակները, և յայտնում ենք միանգամայն, որ պատրաստ ենք ընդունել Նորանից այն ամենը, ինչ որ Նա կը բարեհաճի մեզ տալու։ *Չորրորդ* խնդրուածք. «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած տայ մեզ ամենօրեայ համար հարկաւոր եղած ապրուստը։ *Հինգերորդ* խնդրուածք. «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Այստեղ պարտքերը իբրև մեղք պէտք է ընդունենք, որովհետև մենք պարտաւոր ենք Աստուծոյ օրէնքը կատարել, և երբ մեղանչում ենք, ասել է թէ պարտական ենք մնում Աստուծոյ առաջ։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած ներէ մեզ մեր մեղքերը։ Այս խնդրուածքի հետ աւելացնում ենք. ներիր մեր մեղքերը, ինչպէս և մենք ևս

ներում ենք մեր պարտապաններին՝ այսինքն այն մարդոց, որոնք մեղաւոր են մեր դէմ. ըստ որում Աստուած խոստացաւ մեզ ներել մեր մեղքերը այն դէպքում միայն, երբ մենք ևս մեր կողմից կներենք մեր դէմ մեղանչողներին։ *Վհցերորդ* խնդրուածք. «Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձուԹիւն» Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած հեռացնէ մեզանից փորձանքները, այսինքն կեանքի այնպիսի դէպքերը, որոնք կարող են մեզ դէպի մեղքը տանել (ինչպէս կարօտուԹիւն, վտանգ), իսկ եԹէ կամենում է փորձանքներով անդրդուելի պահել մեզ բարուԹեան մէջ, այն ժամանակ խնդրում ենք, որ օգնէ մեզ այն փորձանքներին յաղԹելու։ *ԵօԹներորդ* խնդրուածք. «Այլ փրկեա զմեզ ՚ի չարէն»։ Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած ազատ պահէ մեզ խորամանկուԹիւնից, այսինքն հոգեկան անմաքրուԹիւնից, և պաշտպանէ մեզ խորամանկ սատանայի դէմ, որը միշտ գայԹակղեցնում է մեզ դէպի չարը։ Մեր խնդրուածքները վերջացնում ենք Աստուծոյ փառաբանուԹեամբ, որով յայտնում ենք նաև մեր շնորհակալուԹիւնը և յոյսը այն մասին, Թէ Աստուած կըտայ մեզ մեր խնդրածը։ «Զի Քո է արքայուԹիւն և զօրուԹիւն և փառք յաւիտեանս». այսինքն՝ Տէր, մենք այս ամենայն բարիքը նորա համար ենք խնդրում Քեզանից, որ Քեզ է պատկանում արքայուԹիւնը, ասել է, Թէ Քո արքայական իշխանուԹեան ներքոյ է գտնվում այն ամենը, ինչ որ մենք խնդրում ենք. Դու ունիս այժ մեր խնդրածը մեզ տալու և Քեզ է պատկանում յաւիտենական փառքը։

---

68. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ՝ ԹԷ ԻՆՔԸ ՊԻՏԻ ՉԱՐՉԱՐՈՒԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԵԻ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԱՒՆԻ.

Ցով. Բ. 13—23. *Գ.* 1—2. 14—15. *Մատ. Ի.* 17—19. *Ղուկ. ԺԸ.* 31—33.

Քրիստոսը Զատկի տօնին Երուսաղէմ գնաց և տաճարը մտնելով՝ այնտեղ շատ անկարգուԹիւններ տեսաւ։ Տաճարի կառավարիչները թողել էին որ վաճառականները զոհի անասուններ վաճառեն, առևտուր անեն տաճարի մէջ, որ Աստուծուն աղօԹք անելու տեղն էր։ Քրիստոսը բարկանալով վաճառականներին արտաքսեց և ասաց. «Վերցրէք այստեղից այդ բոլորը և Հօրս տունը առուտուրի տուն մի՛ շինէք»։ Այն ժամանակ տաճարի կառավարիչներն եկան Քրիստոսի մօտ և բարկանալով հարցրին Նորանից. «Ի՞նչով ես հաստատում Թէ Դու իշխանուԹիւն ունիս այդպէս վարուելու»։ Քրիստոսը մարգարէացաւ, որ Հրէից իշխաններն Իրան պիտի նախատեն և սպանեն. ուստի այսպէս պատասխանեց. «Այս տաճարը քանդեցէ՛ք և ես երեք օրուայ մէջ կըշինեմ» (այսինքն՝ երբ դուք Իմ մարմինս կըսպանէք՝ որ նման է Աստուծոյ տաճարին, Ես երրորդ օրը յարուԹիւն կառնեմ, այն ժամանակ դուք կըտեսնէք, որ Ես իրաւունք ունիմ այսպէս վարուելու)։ Փոքր ինչ յետոյ մօտն եկաւ Նիկոդիմոս Փարիսեցին, որ իմանայ ԹէՆ նա ինչպէս պիտի մարդկանց ազատէ։ Քրիստոսն ասաց. «Ինչպէս որ Մովսէսն անապատի մէջ օձ բարձրացրեց, այնպէս ևս պիտի բարձրանայ Մարդոյ Որդին, որպէսզի Նորա հաւատացողները չկորչեն, այլ յաւիտենական կեանք ունենան»։

Քրիստոսը Իւր մահուանից փոքր ինչ առաջ Իւր աշակերտներին ուղղակի ասաց. «Ահա մենք գնում ենք Երուսաղէմ և Մարդոյ Որդու վրայ մարգարէների գրուածները

պիտի կատարուին։ Մարդոյ Որդին պիտի մատնուի քահանայապետների և դպիրների ձեռքը, որոնք Նորան ի մահ պիտի դատապարտեն, հեթանոսների ձեռքը պիտի մատնեն՝ հայհոյելու, ծեծելու և խաչելու համար.—Իրան կրսպանեն և Նա երրորդ օրը յարութիւն կառնի»։

69. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՑ.

Մատ. ԻԱ. 23—33. Յով. Ը. 28—29.

Հրէից մէջ Սադուկեցի անունով աղանդաւորներ կային, որոնք մեռելների յարութեան և յաւիտենական կեանքին չէին հաւատում, ասելով թէ՝ Մովսէսը սորա վրայ ոչինչ չէ ասել։ Քրիստոսն ասաց նոցա. «Դուք գրուածքները չհասկանալով՝ մոլորւում էք։ Այս կեանքի մէջ կին են առնում և մարդու են գնում, իսկ այն կեանքի մէջ ո՛չ կին կառնեն և ո՛չ մարդու կերթան և ոչ իսկ մեռնել կարող են, այլ կապրին այնպէս, ինչպէս որ երկնքումն ապրում են Աստուծոյ հրեշտակները։ Իսկ գալով մեռելների յարութեանը, մի՞թէ չէք կարդացել Մովսէսի գրքի մէջ թէ ինչպէս խօսեց մորենու միջից և ասաց Նորան. «Ես եմ Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ Աստուածը»։ Աստուածը մեռելների Աստուած չէ, այլ կենդանիների, որովհետև Նորա մօտ ամենքը կենդանի են (այսինքն՝—եթէ Աբրահամը, Իսահակը և Յակովբը յաւիտեանս մեռած լինէին, այն ժամանակ Աստուած Ինքնիրան նոցա Աստուած չէր անուանիլ)։

Մեռելների յարութիւնն այն է, որ բոլոր մեռած մարդոց հոգիքը կրմիանան իրանց մարմնի հետ և անապական ու անմահ կըլինին։ Իսկ այն մարդիկ, որոնք մինչև մեռելների յարութիւնը կապրին, նոցա ապականացու մարմիններն իսկոյն անապական կըդառնան. մեռելների յարութիւն առնելուն պէս բոլոր աշխարհն ևս կըփոխուի, նոր երկինք և նոր երկիր կըլինի։ Եւ յարութիւնից յետոյ եղած կեանքը յաւիտենական կեանք կրկոչուի։

Մեռելների յարութեան և յաւիտենական կեանքի վրայ ունեցած հաւատը մենք յայտնում ենք այսպէս.

Հաւատամք ՚ի յարութիւն մեռելոց եւ ՚ի կեանսն յաւիտենականս։

70. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ԻՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎՐԱՑ. ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ ԸՌԱԿԸ.

Մատ. ԻԲ. 31—46.

Մէկ անգամ Քրիստոսի աշակերտները հարցրին Նորան. «Վարդապետ, ասա մեզ, ե՞րբ պիտի լինի Քո գալուստը և աշխարհիս վերջը»։ Քրիստոսը պատասխանեց նոցա. «Այն օրը և ժամը ոչ ոք չգիտէ և ո՛չ իսկ հրեշտակները, միայն Հայրս գիտէ։ Զգո՛յշ կացէք որ ձեր սրտերը չծանրանան որկրամոլութեամբ, արբեցութեամբ և աշխարհային հոգսերով, և նայեցէք, որ այն օրը յանկարծ չհասնի ձեր վրայ։ Այն ժամանակ երկնքի արքայութիւնը կընմանի տասն կուսանաց, որ լապտերներով փեսային և հարսին ընդ առաջ եկան։ Նոցանից հինգը իմաստուն էին, իսկ հինգը յիմար։ Յիմարները հետները ձէթ չառան։ Փեսայի գալստեանն սպասելով, կուսանքը ննջեցին։ Կէս գիշերին յանկարծ ձայն լսուեցաւ. «Ահա փեսան գալիս է, եկէք Նորա առաջը»։ Կուսանքը վերկացան և իրանց լապտերները պատրաստեցին։ Այն ժամանակ յիմար կուսանքն ասացին իմաստուններին. «Ձեր իւղից փոքր ինչ մեզ տուէք, որովհետև մեր լապտերները

հանգչելու վրայ են»։ Իմաստուններըը պատասխանեցին. «լաւ է, որ գնաք ձեզ համար գնէք, որովհետև եթէ մեր ունեցածիցը ձեզ տանք, ո՛չ մեզ կըբաւէ և ո՛չ ձեզ»։ Յիմարներըը գնացին իւղ առնելու։ Այն միջոցին փեսան եկաւ, իմաստուն կուսանքը նորա առաջը գնացին և փեսայի հետ մտան հարսանիքի տունը։ Երբոր միւս կուսանքն ևս եկան և դուռը փակուած գտան՝ սկսան բաղխել և խնդրում էին, որ բաց անեն։ Փեսան պատասխանեց. «Ես ձեզ չեմ ճանաչում»։ Ուրեմն արթուն կացէք, որովհետև չգիտէք թէ ո՛ր օրը և ո՛ր ժամին կըգայ Մարդոյ Որդին»։

Այս առակի մէջ փեսան է *Քրիստոսը*, կուսանքն են *մարդոց հոգիքը*, իւղն *ողորմածութեան գործերն* են, հարսանիքի տունն է՝ *երկնքի արքայութիւնը*։

Քրիստոսը Իւր երկրորդ գալուստը և դատաստանը այսպէս նկարագրեց. «Երբոր Մարդոյ Որդին Իւր փառքով և հրեշտակներով կըգայ, փառքի աթոռի վրայ կընստի, և նորա առաջև կըժողովուին բոլոր ազգերը, իրարից կըբաժանէ նոցա այնպէս, ինչպէս հովիւը ոչխարներին այծերից է բաժանում. ոչխարներին Իւր աջ կողմը կըկանգնացնէ, իսկ այծերին ձախ կողմը։ Եւ թագաւորը կասէ Իւր աջակողմը եղողներին. «Եկէք, իմ Հօրիցս օրհնուածներ, և ժառանգեցէք աշխարհիս սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը։ Որովհետև Ես քաղցած ու ծառաւ էի, և դուք Ինձ կերակրեցիք և ջուր տուիք։ Օտար էի և դուք ընդունեցիք Ինձ, մերկ էի և դուք հագցրիք Ինձ, հիւանդ և բանտի մէջ էի և Ինձ այցելութեան եկաք»։ Արդարներըը պիտի ասեն Նորան. «Տէր, ե՞րբ տեսանք Քեզ քաղցած և կերակրեցինք, կամ ծարաւի՝ և ջուր տուինք։ Ե՞րբ տեսանք Քեզ օտար և ընդունեցինք, կամ մերկ և հագցրինք։ Ե՞րբ տեսանք Քեզ հիւանդ կամ բանտարկեալ, և Քեզ այցելութեան եկանք»։ Այն ժամանակ թագաւորը պիտի ասէ նոցա. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որովհետև Իմ փոքր եղբայրներիցս մէկին արիք. Ինձ արած եղաք»։

Յետոյ ձախակողմեաններին կասէ. «Հեռացէք Ինձանից, անիծեալներ, և գնացէք յաւիտենական կրակը, որ պատրաստուած է սատանայի և նորա հետևողների համար։ Որովհետև քաղցած էի և Ինձ չկերակրեցիք, ծարաւ էի՝ ջուր չտուիք, օտար էի՝ Ինձ չընդունեցիք, մերկ էի՝ չհագցրիք՝ հիւանդ և բանտարկեալ էի, դուք Ինձ այցելութեան չեկաք»։ Նոքա պիտի պատասխանեն. «Տէր, ե՞րբ տեսանք Քեզ քաղցած կամ ծարաւի, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ և կամ բանտարկեալ, և չծառայեցինք Քեզ»։ Եւ Քրիստոսը պիտի պատասխանէ նոցա. «Որովհետև Իմ փոքր եղբայրներիցս մէկին չարիք, Ինձ ևս չարած եղաք»։ Նոքա կերթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները յաւիտենական կեանքը»։

Այնտեղ՝ ուր կըհաւաքուին արդարների հոգիքը, դրախտ և երկնքի արքայութիւն կըկոչուի, իսկ մեղաւորների չարչարանքի տեղը՝ դժոխք։

Մեր հաւատն այն մասին՝ թէ Քրիստոսը վերստին գալու է փառքով, դատելու է բոլոր մարդիկներին և հաստատելու է Իւր յաւիտենական թագաւորութիւնը, մենք յայտնում ենք այսպէս.

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

71. ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԻՈՑՆ ՍՐԲՈՑ ՎՐԱՑ.

Ցով. ԺԴ.

Քրիստոսը Իւր չարչարանքից առաջ աշակերտների հետ խօսելով Իւր մահուան մասին, խոստացաւ նոցա ուղարկել Իւր տեղը մխիթարիչ սուրբ Հոգին և այս խօսքերով հրաժարական ողջոյն տուաւ նոցա. «Ես ձեզ որբ չեմ թողնիլ, այլ կաղաչեմ Իմ Հօրս, որ ուրիշ մխիթարիչ տայ ձեզ, որ յաւիտեան ձեզ հետ լինի, այն է՝ Հոգին ճշմարտութեան, որ Հօրից է բղխում: Նա ձեզ կը սովորեցնէ ամեն բան, և ձեր միտքը կը ձգէ այն ամեն բանները, ինչ որ խօսել եմ ձեզ հետ: Ուրիշ շատ բաներ ունեմ ձեզ հետ խօսելու, բայց այժմ դուք չէք կարող ասածներս հասկանալ, երբոր կը գայ Հոգին ճշմարտութեան, նա ձեզ կ՚առաջնորդէ ամենայն ճշմարտութիւն»: Քրիստոսը նաև յայտնեց, թէ մարդ նոր կեանք կստանայ միայն Հոգւոյն Սրբոյ զօրութեամբ, ասելով՝ «Ո՛վ որ չի ծնուիլ ջրից և Հոգուց, չէ կարող մտնել երկնքի արքայութիւնը»:

72. ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՑԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ՎԱՐԴԱՎԱՌ.

Մատ. ԻԸ. 1—8. *Ղուկ. Թ.* 2—36.

Յիսուս Քրիստոսը շատ անգամ ասել էր Իւր աշակերտներին, որ մարդկների փրկութեան համար Նա պիտի չարչարուի, մեռնի և ապա յարութիւն պիտի առնի: Որպէսզի Նորա չարչարանքը չվախեցնէ Իւր աշակերտներին, նոցանից մի քանիսներին Նա ցոյց տուեց Իւր Աստուածային փառքը: Իւր չարչարանքից մի քանի օր առաջ, Նա Իւր հետ վերցրեց երեք աշակերտներին՝—Պետրոսին, Յակոբին և Յովհաննէսին և նոցա հետ միասին բարձրացաւ Թափօր լեռը: Լեռան գլուխը հասնելով, Նա սկսեց աղօթք անել, իսկ Նո-



րա աշակերտները յոգնածութիւնից քնեցան: Յանկարծ սաստիկ լոյսը զարթեցրեց նոցա և նոքա տեսան, որ Յիսուս Քրիստոսի երեսը փայլում է արեգակի պէս, իսկ հագուստը սպիտակացել էր ձիւնի նման: Նոցա երևեցան Մովսէս և Եղիա մարգարէները: Յիսուս խօսում էր նոցա հետ Իւր ա-

ռաջիկայ չարչարանաց և մահուան մասին։ Երբ որ Մովսէսը և Եղիան հեռանում էին այնտեղից, Պետրոս առաքեալն ասաց. «Վարդապետ, մեզ այստեղ լաւ է, եթէ կամիս, այստեղ երեք վրան կըշինենք, մէկը քեզ, մէկը Մովսէսին և մէկն էլ Եղիային»։ Երբ որ նա այս ասում էր, մի լուսաւոր ամպ ինքաւ երկնքից և ծածկեց նոցա։ Երկնքից ձայն լսուեցաւ. «Դա է Իմ սիրելի Որդին, Որին Ես հաւանեցայ. Դորան լսեցէք»։ Աշակերտները վախեցան և գետինն ընկան. Յիսուս Քրիստոսը մօտեցաւ նոցա և ասաց. «Վեր կացէք և մի վախենաք»։ Նոքա վերկացան և Յիսուսին առաջուայ կերպարանքովը տեսան։

ԺԱՄԱՄՈՒՏ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Երևի Տէրդ այսօր աշակերտացդ 'ի թափօրական լերինն և աշակերտացդ զարհուրեալ աղաղակէին, ասելով. արասցուք երիս տաղաւարս՝ մի Տեառնդ, և մի Մովսիսի և մի Եղիալի։ Արդ և մեք քանաւոր հօտքս երգեմքընդ Քո ճշմարիտ վկայիցդ. առաքեա 'ի մեզ զլոյս Քո շնորհացդ 'ի Քո միւս անգամ գալըստեանդ և կեցո։

Դու՝ Տէր, այսօր Թափօր լեռան վրայ երևեցար աշակերտներիդ, որոնք զարհուրած աղաղակում էին և ասում. «Երեք վրան շինենք այստեղ՝ մէկը քեզ, մէկը Մովսէսին և մէկը Եղիային»։ Արդ մենք ևս, Քո քանաւոր հօտը, ճշմարիտ վկաներիդ հետ երգում ենք՝ Քո երկրորդ գալստեան օրը ուղարկէը դէպ 'ի մեզ լուսոյդ շընորհը և ապրեցրու։

---

73. ՔՐԻՍՏՈՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.

Յով. ՃԱ. 17—57.

Հպարտ փարիսեցիք Քրիստոսի քարոզութեանը չէին հաւանում. այս պատճառով ատում էին Նորան և արհամարհելով մեղաւորների բարեկամ էին անուանում և ասում էին, թէ նա Աստուծուց ուղարկուած չէ, որովհետև շաբաթ օրը սուրբ չէ պահում։ Իսկ Նորա հրաշալի գործերի համար



ասում էին, իբր թէ սատանայի զօրութեամբ է անում. բայց ժողովուրդը նոցա չարախօսութիւններին չլսելով՝ բազմութեամբ Քրիստոսին հետևում էր։ Այն ժամանակ փարիսեցիք խորհուրդ արին, որ Քրիստոսին սպանեն։

Զատկի տօնից քանի մի օր առաջ՝ Քրիստոսը Երուսաղէմի մօտ գտնուած Բեթանիա գիւղը գնաց, ուր բնակվում


էր Նորա բարեկամ Ղազարոսը իւր Մարթա և Մարիամ երկու քոյրերի հետ։ Ղազարոսը մեռած և չորս օրից առաջ թաղուած էր, երբ Քրիստոսը Բեթանիա գիւղն եկաւ։ Քրիստոսը Նորա գերեզմանը գնաց, հրամայեց որ քարը վերցնեն և բարձր ձայնով գոչեց. «Ղազարէ, արի, ել արտաքս»։ Մեռեալը իսկոյն դուրս եկաւ գերեզմանից։ Այս հրաշքի վրայ ժողովուրդը զարմացաւ և նոցանից շատերը Քրիստոսին հաւատացին։ Երբոր Հրէից ծերերը Երուսաղէմի մէջ լսեցին այս բանս, իսկոյն հաւաքուեցան, և սկսան մտածել, թէ ինչ անեն Քրիստոսին, և ատենի մէջ ասում էին. «Այս մարդը շատ հրաշքներ է գործում, եթէ թողնենք, ամենքը կհաւատան Նորան. Հռովմայեցիք ևս կըգան և մեզ կըջնջեն»։ Դատարանի նախագահն էր Կայիափայ քահանայապետը, որ խորհուրդ տուաւ թէ՝ «աւելի լաւ է, որ մէկը մեռնի ժողովրդեան համար, քան թէ ամբողջ ազգը կորչի»։ Նորա այս խորհրդին լսեցին և վճռեցին սպանել Քրիստոսին։ Իսկոյն հրաման հանեցին թէ՝ «ով որ իմանայ Քրիստոսի ուր լինելը, թող մեզ յայտնէ, որ սպանենք Նորան»։ Քրիստոսը հեռաւոր անապատը քաշուեցաւ։

74. ՔՐԻՍՏՈՍԻ ՑԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ.

Մատ. ԻԱ. 1—11.

Չատկից վեց օր առաջ՝ Քրիստոսը Բեթանիա եկաւ, և այն տեղից դէպի Երուսաղէմ ճանապարհ ընկաւ. Նորա յետևից գնում էր ժողովրդեան խուռն բազմութիւն։ Քրիստոսը երբ Զիթենեաց լեառը հասաւ, հրամայեց աշակերտներին, որ մերձակայ գիւղից մի աւանակ բերեն։ Աշակերտները աւանակի վրայ գցեցին իրանց հագուստը և Քրիստոսին Նորա վրայ նստեցրին։ Շատերը հաւատացին, որ Քրիստոսը

Դաւթի ցեղից խոստացեալ Փրկիչն է և սկսան պատուել Նորան։ Ոմանք արմաւենու ճիւղեր էին կտրում և ճանապարհի վրայ ձգում, ոմանք ևս իրանց հագուստներն աւանակի ոտքերի տակն էին տարածում և այս փառաբանական երգը երգում. «Ովսաննա (փրկութիւն) Որդւոյ Դաւթի. օրհնեալ եկեալ յանուն Տեառն. Ովսաննա ի բարձունս»։ Քաղաք մըտնելու ժամանակ ժողովրդեան նոր բազմութիւն ևս Քրիստոսի առաջ դուրս եկաւ. և ով որ Նորան չէր տեսած, հարցնում էր թէ՝ ո՞վ է սա։ Ժողովուրդը Ղազարոսի հրաշալի յարութիւնը պատմելով, պատասխանում էր. «Սա է Գալիլիայի Նազարէթ քաղաքից եկած մարգարէն Յիսուսը»։ Փարիսեցիք կամենում էին Նորան բռնել, բայց ժողովրդից վախենում էին։



ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ

Թագաւոր գոլով Ի՛ւ յաշխարհ՝ մտեր ՚ի քաղաքն Երուսաղէմ. նստեալ ՚ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչեցեալ զՀեթանոսս յերկրպագութիւն։

Ծերքն ոստովք ձիթենեօք և տղայքն ոստովք արմաւենեօք, և երամ երամ դասուքն աղաղակէին. «Ովսաննա օրհնեալ եկեալ ՚ի յանունն Տեառն».

Յընծացաւ սուրբ սիօն, բերկրեցան սուրբ եկեղեցիք. և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ. օրհնէին զգալուստ Ի՛ւ Փրկիչ յաշխարհ։

Դու աշխարհ գալով իբրև թագաւոր, աւանակի վրայ նստած մտար Երուսաղէմ քաղաքը, որպէսզի Հեթանոսներին կանչես Քեզ երկրպագանելու։

Ծերերը ձիթենու ոստերով և տղայք արմաւենու ճիւղերով խումբ խումբ ընթանալով, աղաղակում էին. «Ովսաննա, օրհնեալ ես Դու, որ գալիս ես Տիրոջ անունով»։

Յընծացաւ սուրբ սիօնը, ուրախացան սուրբ եկեղեցիքը, և մեծ խնդութեամբ դուրս գալով Փրկչիդ առաջ, օրհնում էին Ի՛ւ աշխարհ գալը։

75. ՅՈՒԴԱՑԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ.

Մատ. ԻԶ. 3—5. 14—16. Իէ. 3—5.

Քրիստոսի թշնամիները չկարողացան Նորան բռնել ո՛չ երկուշաբթի և ո՛չ երեքշաբթի օրը, որովհետև Նա միշտ շրջապատուած էր լինում ժողովրդեան բազմութեամբ. այս պատճառով փարիսեցիք և գպիրները վճռեցին որ ոտնից չետոյ բռնեն Նորան, երբոր ժողովուրդը Երուսաղէմից կըհեռանայ *)։ Քրիստոսի աշակերտներից մէկը, Յուդա Իսկարիովտացի, Հրէից իշխանների մօտ գնաց և խոստացաւ, որ երեսուն արծաթով (25 մանէթ 80 կոպէկ) նոցա ձեռքը կըմատնէ իւր վարդապետին։ Յուդան, արծաթասիրութեամբ կուրացած, այն ամօթալի գործն յանձն առաւ, բայց չհաբըստացաւ։ Երբ Քրիստոսին ՚ի մահ դատապարտեցին, խղճմըտանքն սկսաւ տանջել Նորան, որ այն արդար մարդուն մատնեց։ Նա գնաց քահանայապետների մօտ, ձգեց արծաթը նոցա առաջ, յուսահատութիւնից ինքնիրան կախեց։

76. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐԸ.


Ծով. ԺԳ. 21—30. *Մատ.* ԻԶ. 17—30. *Մատ.* ԺԳ. 12—26.

Հինգշաբթի երեկոյին Քրիստոսը տասներկու աշակերտների հետ Երուսաղէմ գնաց, ուր մէկ տան մէջ Նորա համար մի վերնատուն էր պատրաստուած Զատկի ոտնը կատարելու։

Քրիստոսը այն վերնատունը մտաւ, աշակերտների ոտքերը լուաց, յետոյ նոցա հետ սեղան նստաւ զատկական գառն ուտելու, որով աշակերտների հետ Իւր վերջին ընթ-

*) Բայց մէկ անակնկալ հանգամանք օգնեց Նորանց չորեքշաբթի օրը։

ըիքն արաւ։ Խօսակցութեան ժամանակ Քրիստոսն ասաց նոցա. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ տասներկուսիցդ մէկը, որ իւր պատառը Իմ ամանիս մէջ թաթախում է, Ինձ պիտի մատնէ»։ Աշակերտները սարսափած մէկը միւսի յետևից ասում էին. «Մի՞թէ ես եմ»։ «Այո՛ դու ես», ասաց Քրիստոսը Յուդային, բայց այնպէս կամաց, որ ո՛չ ոք չլսեց. յետոյ մի պատառ ամանի մէջ թաթախելով նորան տուաւ։ Այն պատառի հետ սատանան մտաւ Յուդայի սրտի մէջ, որով նո-



րա խղճմտանքը նեղվում էր և չէր թողում որ սուրբ աշակերտների հետ մնայ։ Քրիստոսն ասաց նորան. «Ի՞նչ անելու ես, գնա՛, շուտով արա՛»։ Յուդան իսկոյն դուրս եկաւ. իմացաւ թէ Քրիստոսը ուր պիտի անցկացներ այն գիշերը և գնաց խոստացեալ արծաթին ստանալու։ Յուդայի դուրս գալու վրայ աշակերտներն ուշադրութիւն չդարձրին։ Որովհետև Յուդան գանձապետ և ծախսարար էր, ուստի կարծեցին, թէ

կարելի է Քրիստոսը հրամայել է նորան մի բան գնել կամ ողորմութիւն բաժանել։ Ճատկի գառն ուտելուց յետոյ՝ Քրիստոսը բաղարջ հացն առաւ, օրհնեց, կոտրեց և աշակերտներին բաժանելով ասաց. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է Իմ մարմինս, որ ձեր և մարդկանց մեղքի թողութեան համար բաշխվում է»։ Այսպէս ահա աշակերտները հացի տեսակով իրանց Ուսուցչի և Տիրոջ մարմինը ճաշակեցին։ Յետոյ բաժակն առաւ և աշակերտներին տալով, ասաց. «Խմեցէ՛ք այս տեղից ամենքդ, այս է Իմ նոր ուխտի արիւնը, որ ձեր և շատերի մեղքի համար է թափվում»։ Աշակերտները գինու տեսակով Քրիստոսի արիւնը ճաշակեցին։ Յետոյ ասաց. «Այս կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար»։ Այսպէս՝ Քրիստոսը հաստատեց Հաղորդութեան խորհուրդը։ Այնուհետև Իւր վերջին ողջոյնը տուաւ աշակերտներին և յիշեցրեց նոցա Իւր գլխաւոր պատուէրը, ասելով. «Սիրեցէ՛ք միմեանց այնպէս, ինչպէս Ես ձեզ սիրեցի։ Եթէ դուք միմեանց սիրէ՛ք, ամենքը կիմանան, թէ դուք Իմ աշակերտներս էք»։ Ընթրիքը վերջանալուց յետոյ Զիթենեաց լեռան Գեթսեմանի պարտէզը գնաց։

Աւագ հինգշաբթի օրը, երեկոյեան ժամին, Հայաստանեայց եկեղեցին կատարում է ոտնալուայի կարգը։ Եպիսկոպոսը կամ պատուաւոր քահանաներից մէկը զգեստաւորուելով վերցնում է ղենջակը (փեշտմալ) և ծունկ իջեալ (չոքած) լուանում է ամենքի ոտները՝ մեծերից սկսեալ մինչև փոքրերը։ Բայց երբ զգեստաւորուած եպիսկոպոսը կամ քահանան հանդիսով դուրս է գալիս խորանից, այդ միջոցին դպիրները երգում են հետևեալ շարականը.

Այսօր կանգնեցաւ աւազան Այսօր կանգնեցաւ (հաստիկրտութեան 'ի թողութիւն տառուեցաւ) լուացման աւա-

մեղաց մերոց։

Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս՝ ասելով.

Մի ոմն ’ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ’ի մահ և որոշի յաշակերտացդ։

Զայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝ հարցանել թէ ով իցէ։

Բանն, զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զԻուր զաշակերտսն և խռովեցան ամենեքեան։

զան մեր մեղքերի թողութեան համար։

Այսօր մեր Տէրը լուանում էր աշակերտների ոտները և նոյնը պատուիրելով՝ ասում էր.

«Եղբարք, ձեզանից մէկը մահի է մատնելու ինձ և ահա նա բաժանվում է աշակերտներից»։

Երբ այդ լսեց Պետրոսը, աչքով արաւ Յովհաննէսին, որ հարցնէ, թէ ո՞վ է։

Յիսուսի ասած խօսքը սրտմեցրեց Նորա աշակերտներին և նոքա ամենքը շփոթուեցան։

77. ՔՐԻՍՏՈՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՏԵԱՆԸ ԴԱՏՈՒԵԼՈՒ.

Մատ. ԻԶ. 47—68. Իէ. 1. *Ղուկ.* ԻԲ. 66. ԻԳ. 1.

Յուդայ Իսկարիովտացին գիշերը քահանայապետների ծառաներին Գեթսեմանի պարտէզը տարաւ. և այնտեղ Քրիստոսին մօտենալով, համբուրեց և ասաց. «Ո՛ղջ լեր, Վարդապե՛տ». որով ցոյց տուաւ ծառաներին, թէ ում պէտք է բռնեն։ Երբոր ծառաները սկսան Քրիստոսին կապել, Պետրոսը կամեցաւ իւր վարդապետին պաշտպանել, հանեց սաբը և կտրեց քահանայապետի ծառայի ականջը։ Յիսուսն ասաց

նորան. «Թուրդ պատենի մէջ դիր. ո՛վ որ սուր վերցնէ, որով կըմեռնի։ Մ’թէթ կարծում ես, թէ Ես չեմ կարող Հօրիցս խնդրել, որ տասներկու գնդից աւելի հրեշտակ ուղարկէ»։ Յետոյ մօտեցաւ Մաղքոսին և առողջացրեց Նորա ականջը։ Ծառաները կապեցին Քրիստոսին և Կայիափայ քահանայապետի տունը տարան։ Այնտեղ ժողով կազմեցին Հրէից ճերբերը, որ ըստ տեղւոյն և ըստ ժամանակին հակառակ էր օ-



րինաց (որովհետև ժողովը պիտի կազմուէր ցերեկ ժամանակ տաճարի մէջ)։ Քրիստոսի դէմ դուրս եկան շատ սուտ վկաները, բայց նոքա չկարողացան մի այնպիսի բան ասել, որով կարելի լինէր Քրիստոսին ’ի մահ դատապարտել։ Այն ժամանակ Կայիափան հարցրեց Նորան թէ՝ «Երդուեցնում եմ Քեզ կենդանի Աստուծոյ անուամբ, ասա՛ մեզ, Դո՞ւ ես Աստուծոյ Որդի Քրիստոսը»։ Քրիստոսը պատասխանեց. «Այո՛, Ես եմ, և

ասում եմ ձեզ, թէ այսուհետև պիտի տեսնէք Մարդու Որդուն նստած Հօր ա՛ջ կողմը, որ պիտի գայ երկնքի ամպերի վրայից»։ Կայիափան պատառեց իւր հանդերձը և աղաղակեց. «Այլ ևս վկաներ ի՞նչ հարկաւոր են մեզ. արդէն լսեցինք նորա հայհոյութիւնը. ի՞նչ կասէք»։ Ծերերի ժողովը, լի դժոխային չարութեամբ, աղաղակեց՝ «մահու արժանի է»։ Յետոյ Կայիափայից հեռացան, իսկ Քրիստոսը դուրսը մնաց քահանայապետների ծառաների մէջ։ Ծառաներն սկսան նորան ծաղրել, յետոյ այն ծաղրը գանահարութեան փոխեցին։ Ոմանք ապտակ էին խփում Քրիստոսին և երեսին թքում. շատերն ևս փակում էին նորա աչքերը և երեսին խփելով ասում էին. «Իմացիր, Քրիստոս մարգարէ, ո՞վ էր քեզ խփողը»։ Իսկ Քրիստոսը համբերութեամբ լռում էր։

Որևիցէ յանցաւորի վերջնական վճիռը տալու համար, ըստ օրինի, ծերերի ժողովը երեք օրից յետոյ երկրորդ անգամ պիտի հաւաքուէր, բայց այս անգամ երեք չորս ժամ միայն սպասեցին, և առաւօտը նորից Կայիափայի մօտ հաւաքուեցան և Քրիստոսին ևս այնտեղ բերին։ Կայիափան հարցրեց Նորանից. «Դո՞ւ ես Աստուծոյ Որդին»։ Քրիստոսը պատասխանեց.—Այո՛։ Այն ժամանակ Նորան մահուան արժանի դատապարտեցին այն պատճառով միայն, որ Նա Ինքնիրան անուանեց Աստուծոյ որդի։

78. ՔՐԻՍՏՈՍԸ ՊՈՆՏԱՑԻ ՊԻԼԱՏՈՍԻ ԱՌԱՋ.

Ցուվ. ԺՀ. 28—40. ԺԹ. 1—16. *Մատ.* ԻԷ. 1—31.

Քրիստոսի ժամանակ Հրէայք Հռովմայեցոց իշխանութեան տակն էին, և կառավարվում էին Պոնտացի Պիղատոսի ձեռքով, որ Հրէից դատաւոր էր համարվում. այս պատճառով ծերերը չէին կարող Քրիստոսին մեռցնել. այլ պար-

տական էին Պիղատոսի մօտ տանել Նորան։ Ուրբաթ օրը, վաղ առաւօտեան, նոքա Քրիստոսին դատաւորի մօտ տարան։ Երբ դատաւորը հարցրեց թէ՝ ինչո՞ւ էք դատապարտում այս մարդուն, նոքա պատասխանեցին. «Սա մոլորեցնում է ժողովրդին և արգելում է կայսեր հարկ տալ, և Ինքնիրան թագաւոր է անուանում»։ Պիղատոսը առանձին հարցուփորձ անելով Քրիստոսին, դուրս եկաւ և ասաց. «Ես այս մարդու վրայ յանցանք չեմ գտնում»։ Ծերերն աւելի չարախօսիլ սկսան Քրիստոսի վրայ։ Պիղատոսը չգիտէր, թէ ինչ անէ։ Հրէից մէջ սովորութիւն կար, որ Զատկի տօնին ազատում էին որևիցէ մահապարտի։ Այս պատճառով Պիղատոսը հարցրեց ժողովրդեան. «Ո՞ւմն էք կամենում, որ արձակեմ, Բարաբբայ՞ն, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչվում»։ Բարաբբան աւազակ էր։ Ժողովուրդը, ծերերից դրդուած լինելով աղաղակեց. «Արձակիր Բարաբբային»։ Պիղատոսը հարցրեց. «Հապա ի՞նչ անեմ այս մարդուն, որին դուք Հրէից Թագաւոր էք անուանում»։ Ժողովրդեան մէջից աղաղակեցին. «Խաչ հանիր Դորան». Պիղատոսն ասաց. «Ես մահուան արժանի ո՛չինչ չեմ գտնում Նորանում, ծեծելով կը թողատեմ և կարձակեմ»։ Պիղատոսի հրամանով Քրիստոսին գանեցին։ Հռովմայեցոց զինուորները՝ Քրիստոսին մարակով ծեծելուց յետոյ, սկսան Նորան ծաղրել։ Ծիրանի պատմուճանը ձգեցին վրան (կարմրըագոյն կարճ հանդերձ), գլխին փշեայ պսակ դրին, և թագաւորական գաւազանի տեղ ձեռքը մի եղէգ տուին. յետոյ ծունր դնելով Նորա առաջև ասում էին. «Ո՛ղջ լեր, արքայդ Հրէից»։ Երեսին թքում էին և եղեգեայ գաւազանով գլխին խփում։ Պիղատոսն այս կերպով Քրիստոսին ժողովրդի առաջ դուրս բերաւ, կարծելով՝ թէ Հրէայք կը խղճան Նորա վրայ, որ անճեղ տեղը չարչարվում էր. բայց քարասիրտ ժողովուրդը կրկին աղաղակեց. «Խաչիր Դորան։ Իսկ եթէ թող կըտաս, կայսեր բարեկամ չես»։ Պիղատոսը տեսնելով, որ ո՛չ մէկ բան օգուտ չունի և ժողովրդեան մէջ խռովութիւնն առաւել

սաստկանում է, ջուր առաւ և ձեռքերը լուանալով ասաց. «Ես այդ արդար մարդու արիւնից քաւեալ եմ»։ Ժողովուրդն աղաղակեց. «Իորա արիւնը մեզ վրայ և մեր որդոց վրայ թող լինի»։ Այն ժամանակ Պիղատոսը զիջաւ Հրէից պահանջման, և դատապարտելով Քրիստոսին՝ նոցա ձեռքը տուաւ, որ խաչեն։

79. ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻ ՎՐԱՑ ՁԱՐՁԱՐՈՒԻԼԸ ԵՒ ՄԱՀԸ.

Մատ. ԻԷ. 31—54. *Ղուկ.* ԻԳ. 26—48. *Յով.* ԺԹ. 16—30.

Զինուորները Քրիստոսին կառափելու՝ այսինքն՝ գլխատման տեղը տարան, որ Եբրայեցերէն Գողգոթայ էր ասվում. այնտեղ խաչեցին Նորան և Նորա աջակողմը և ձախակողմը խաչեցին երկու աւազակներ։ Գլխի վերևը խաչի վրայ մի տախտակ դրին, որի վրայ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից»։ Երբոր Քրիստոսին խաչում էին, Նա աղօթք էր անում Իւր չարչարողների համար, ասելով. «Հայր, ներիր սոցա, որովհետև չգիտեն, թէ ինչ են անում»։

Քրիստոսի թշնամիները խաչի վրայ անգամ հանգիստ չէին թողնում Նորան. այլ ծաղրածութեամբ ասում էին. «Եթէ Աստուծոյ Որդի ես Դու, փրկիր Քեզ և խաչից իջիր, որ Քեզ հաւատանք»։ Զինուորներն ևս հետևում էին նոցա։ Մինչև անգամ խաչուած աւազակներից մէկն ևս ծաղրելով ասաց Քրիստոսին. «Եթէ Դու Քրիստոսն ես, Քեզ և մեզ ազատիր»։ Բայց միւս աւազակը պատասխանեց Նորան. «Աստուծուց չես վախենում. չէ որ դու ևս նոյն պատժի մէջ ես։ Մենք իրաւացի կերպով դատապարտուած ենք, բայց Սա ոչինչ չարութիւն չէ արել»։ Այս ասելով, աղօթքով դարձաւ դէպի Քրիստոսը և ասաց. «Տէր, լիշիր ինձ, երբոր գաս Քո արքայութեամբդ»։ — «Ճշմարիտն եմ ասում քեզ, այսօր ինձ հետ պիտի լինիս դրախտի մէջ», պատասխանեց Քրիստոսը։

Յերեկուան վեցերորդ (մեր հաշուով երկոտասաներորդ) ժամին երկրիս երեսը խաւար պատեց, այնպէս որ աստղերը երևեցան։ Ծաղրածութիւնները դադարեցան, և շատերը վախենալով՝ խաչելութեան տեղից հեռացան։ Քրիստոսի խաչի մօտ մնացին Տիրամայրը, Յովհաննէս առաքեալը և քանի մի Գալիլիացի կանայք։

Քրիստոսը տեսաւ Իւր մօրը և Յովհաննէսի վրայ ցոյց տալով ասաց. «Ահա Քո որդին». յետոյ նայեց Իւր սիրելի աշակերտին և ասաց նորան. «Ահա քո մայրը»։ Ինն ժամի մօտ (մեր հաշուով երրորդ ժամին զկնի ճաշու) Քրիստոսն աղաղակեց. «Աստուած Իմ, Աստուած Իմ, ընդէ՞ր թողեր զիս»։ Քանի մի րոպէից յետոյ ասաց. «Ծարաւի եմ»։ Զինուորներից մէկը սպունգը թաթախեց քացախի մէջ, եղեգի ծայրն անցկացրեց և Նորա բերանին մօտեցրեց։ Քրիստոսը քացախն ընդունելով ասաց. «Ամենայն ինչ կատարեալ է, Հայր, Իմ հոգիս Քո ձեռքդ եմ աւանդում»։ Յետոյ գլուխը խոնարհեցրեց և հոգին աւանդեց։ Այսպէս ահա Փրկիչը Իւր անձը զոհելով մարդկանց մեղքի համար, մեզ հաշտեցրեց Աստուծոյ հետ։ Այն ժամանակ արեգակը խաւարեցաւ, վարագոյրը, որով Սրբոց Սրբութիւն Սրբոցը բաժանվում էր տաճարի միւս մասից, երկու կտոր պատառուեցաւ, գետինն այնպէս շարժուեցաւ, որ քարերը պատառուեցան և շատ մեռեալներ յարութիւն առան և գերեզմանից դուրս եկան։ Այն հարիւրապետը, որ խաչի մօտ կանգնած էր, ասաց. «Ճիրաւի այս մարդն Աստուծոյ Որդի և արդար էր»։ Ժողովուրդը զարհուրելով և կուրծքը բաղխելով խաչի մօտից հեռացաւ։

Յաչի զո Քրիստոս երկիրպագանեմք. եւ զսուրբ խաչելութիւնդ զո մեծացուցանեմք եւ զսուրբ թաղումնդ զո փառաւորեմք։ Եկայք, հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն ի ծառն խաչին իւ-

րոյ շնորհեաց պարգեւս աշխարհի։ Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։


80. ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.

Յով. ԺԹ. 31—42. Մատ. ԻԷ. 57—61. Ղուկ. ԻԳ. 50—56. Մատ. ԻԸ. 1—15. Մարկ. ԺՋ. 1—8. Ղուկ. ԻԳ. 1—8 Յով. Ի. 1—2.

Ուրբաթ երեկոյեան Պիղատոսի մօտ եկաւ Յովսէփ Առեմաթացին՝ Յիսուսի ծածուկ աշակերտը, և խնդրեց որ թոյլ տայ Յիսուսին խաչից իջեցնելու և թաղելու։ Պիղատոսը, իմանալով որ Յիսուսն արդարև մեռել է, թոյլ տուեց։ Golgothայ եկաւ նաև Նիկոդիմոս՝ նոյնպէս Յիսուսի ծածուկ աշակերտը։ Յովսէփը պատրաստեց մաքուր կտաւ, իսկ Նիկոդիմոսը բերեց հարիւր լիտրի չափ անուշահոտ իւղ։ Golgothայի մօտ Յովսէփը մի պարտէզ ունէր։ Պարտէզի մէջ կար մի այր։ Յովսէփը և Նիկոդիմոսը Յիսուսի մարմինն իջեցրին խաչից, օծեցին անուշահոտ իւղով, պատեցին կտաւով և դրեցին այրի մէջ. իսկ գերեզմանի դռանը դրեցին մի մեծ քար։

Շաբաթ առաւօտեան Հրէից իշխանները հաւաքուեցան Պիղատոսի մօտ և ասացին. «Ձեր, մեր միտն եկաւ, որ Յիսուսը, մինչ կենդանի էր, ասում էր. «Երեք օրից յետոյ յարութիւն կառնեմ»։ Հրամայիր գերեզմանը պահպանել, մինչև երրորդ օրը, թէ չէ աշակերտները կգողանան Նորա մարմինը և ժողովուրդին կասեն, թէ Նա յարեաւ ի մեռելոց»։ Պիղատոսն ասաց. «Ունիք զինուորներ, ինքներդ պահապանները դրէք և հսկեցէք գերեզմանին»։ Նոքա գնացին, կնքեցին գերեզմանի քարը և պահապաններ դրին։

Անցկացաւ շաբաթը. վրայ հասաւ գիշերը. վաղ առաւօտեան Քրիստոսի գերեզմանի մօտ մի մեծ շարժ եղաւ։ Տիրոջ հրեշտակն իջաւ երկնքից, գերեզմանի քարը գլորեց և նստաւ նորա վրայ։ Նորա կերպարանքը փայլակի նման էր, շորերը ձիւնի նման։ Յիսուս Քրիստոսը յարեաւ ի մեռելոց։ Պա-



հապանները երկիւղից գետինն ընկան ինչպէս մեռեալներ։ Երբոր ուշքի եկան, նոքա շտապեցին դէպի քաղաքը։ Նոքա այնտեղ Հրէից իշխաններին պատմեցին բոլորը, ինչ որ պատահել էր։ Իշխանները հաւաքուեցան և միաբան խորհրդով՝ շատ փող տուին պահապաններին և ասացին նոցա. «Ամեն-

քին ասացէք, որ դուք յոգնածութիւնից քնեցաք, իսկ Յիսուսի աշակերտները գիշերով եկան, և գողացան Նորա մարմինը»։ Բայց եթէ իրանց անհոգութեան համար Պիղատոսը պատժելու կըլինի, նոքա կըպաշտպանեն նոցա։ Պահապաններն այնպէս վարուեցան, ինչպէս խրատեցին իշխանները։ Եւ այս սուտ համբաւը տարածուեցաւ Հրէից մէջ մինչև այսօր։

—

Մեր հաւատը առ այն, թէ Քրիստոսը մեր մեղաց համար չարչարուեցաւ և թաղուեցաւ, մենք յայտնում ենք այսպէս.

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։

Քրիստոսի յարութեան օրը մենք աւելի շքեղութեամբ ենք տօնում քան թէ միւս օրերը, որովհետև Քրիստոսը Իւր յարութիւնով շատ պարզ ցոյց տուեց Իւր Աստուածութիւնը և հաւաստի արեց մեզ, որ մենք ևս յարութիւն կառնենք։ Այս տօնը մենք անուանում ենք *զլուխ ամենայն տօնից*։ Սա կոչվում է Զատիկ կամ Պասէք, որովհետև օրինակ է Հրէական Պասէքի։ Բացի սորանից Քրիստոսի յարութեան յիշատակին մենք նուիրում ենք ամեն եօթնեկի առաջին օրը զկնի շաբաթու, որին ասում ենք *Կիւրակէ*։

Քրիստոսի յարութեան վրայ ունեցած մեր հաւատը յայտնում ենք այսպէս.

Ցերրորդ աւուր յարուցեալ։

Իսկ մեր հաւատը մեռեալների յարութեան մասին մենք յայտնում ենք այսպէս.

Հաւատամք ՚ի յարութիւն մեռելոց։

Յարութեան Ժամամուտ.

Քրիստոս յարեաւ՚ի մեռելոց, ժահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս. ամէն։

---

81. ԵՐԵՒՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Ղուկ. ԻԴ. 8—48. Յովհ. Ի. ԻԱ. Մատ. ԻԸ. 16—20.

Լոյս կիւրակէ Քրիստոսը Յովսէփի պարտիզի մէջ Մարիամ Մագդաղինացուն երևեցաւ։ Յետոյ Իւր երկու աշա-



կերտներին Ճանապարհորդակից եղաւ մինչև Եմմաուս գիւղը. իսկ երեկոյին Երուսաղէմի մէջ երևեցաւ բոլոր աշակերտներին Թովմասից զատ, որ այնտեղ չէր։ Բայց մէկ շաբաթ

յետոյ, երբ Թովմասը ևս աշակերտների հետ էր, դարձեալ երևեցաւ։ Ջատկի տօնից յետոյ Քրիստոսի աշակերտները Երուսաղէմից Գալիլիայ գնացին, և այնտեղ Գալիլիացոց ծովի եզերքի մօտ իրանց Վարդապետին տեսան։ Գալիլիայի լեռներից մէկի վրայ հինգ հարիւրից աւելի մարդկանց երևեցաւ։ Բացի սորանից երևեցաւ նաև Պետրոսին և Յակոբոսին։

Այսպէս ահա քառասուն օրուայ մէջ աշակերտները քանի մի անգամ տեսան յարուցեալ քրիստոսին։ Այն ժամանակ Քրիստոսը հաւատացրեց նոցա, թէ Ինքն իսկապէս յարութիւն առաւ մեռելներից. ցոյց էր տալիս նոցա Իւր վէրքերը և նոցա հետ կերակուր էր ուտում. բայց աշակերտները նկատում էին որ Նորա մարմինն առաջուան նման չէր, որովհետև դռները փակ ժամանակ ևս երևում էր իրանց։ Աշակերտները տարակուսած էին Նորա չարչարանքի և մահուան վրայ։ Այս պատճառով Քրիստոսը Իւր աշակերտներին երևում էր Իւր յարութիւնից յետոյ, յիշեցնում էր նոցա, թէ այն մարգարէութիւնների համեմատ պիտի չարչարուէր Նա և Իւր փառքը պիտի մտնէր։

82. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ.

Ղուկ. ԻԴ. 49—53. *Գործ.* ա. 4—14.

Քրիստոսի յարութիւնից քառասուն օր յետոյ աշակերտները մի տան մէջ հաւաքուեցան։ Քրիստոսն այնտեղ երևեցաւ նոցա և ասաց. «Ես կուղարկեմ ձեզ Իմ Հօրս խոստացած Սուրբը Հոգին. իսկ դուք Երուսաղէմի մէջ մնացէք, մինչև որ 'ի վերուստ զօրութիւն առնուք։ Յովհաննէսը ջրով էր մկրտում, իսկ քանի մի օրից յետոյ Հոգով սրբով պիտի մկրտուիք»։ Աշակերտները ուրախացան և ասացին Քրիստոսին. «Տէր նոյն ժամանակին պիտի նորոգէս Իսրայէլացոց թա-

գաւորութիւնը»։ Քրիստոսը պատասխանեց թէ՝ «Ձեզ հարկաւոր չէ գիտենալ այն ժամանակները, որ Հայր Աստուած սահմանել է։ Բայց դուք զօրութիւն կ'առնուք, երբոր Հոգին Սուրբը ձեզ վրայ կիջնէ, և բոլոր աշխարհիս երեսին դուք Ինձ համար վկայ կըլինիք»։ Յետոյ Քրիստոսը նոցա հետ Բեթանիա գիւղը գնաց և Ձիթենեաց լերան վրայ կանգնելով, օրհ-



նեց նորանց, և նոցա աչքերի առաջ երկինք համբարձաւ և Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ (այսինքն Իւր *մարդկութեամբն ևս Աստուածային փառք եւ պատիւ առաւ*)։

Աշակերտներն ապշած դէպի երկինք էին նայում, մինչև որ տեսան երկու հրեշտակ, որոնք նոցա ասացին. «Ի՞նչ

էք կանգնել և դէպի երկինք էք նայում։ Այս Յիսուսը, որ համբարձաւ, դարձեալ պիտի գայ այնպէս, ինչպէս տեսաք Նորա համբառնալը դէպի երկինք»։ Առաքեալք մեծ ուրախութեամբ լցուած, Երուսաղէմ դարձան։

Մեր Հաւատը Քրիստոսի համբարձման և նորա երկրորդ գալստեան մասին մենք յայտնում ենք այսպէս.

Ելեալ յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՝ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

83. ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատ. ԻԸ. 1—8. ԻԹ. 18—20. Մրկ. Զ. 12—13. Ղուկ. Ե. 13—16. Յով. Ի. 21—23.

Քրիստոսը, համբառնալուց յետոյ, աշխարհիս մէջ թողեց Իւր աշակերտներին, որոց անուանեց առաքեալ, որ կը նշանակէ ուղարկուած։ Սոքա տասներկու հոգի ընտրուած էին, բայց մինը, Յուդա Իսկարիովտացին, Քրիստոսի մատնիչն եղաւ։

Քրիստոսը դեռ աշխարհիս վրայ եղած ժամանակ քարոզելու ուղարկեց նորանց, և իշխանութիւն տուաւ նոցա, որ Իւր անունով բժշկութիւններ անեն։ Այն ժամանակ շատ տկարներին իւղով էին օծում և նոքա բժշկվում էին։ Քրիստոսը Իւր համբառնալուց առաջ նոցա երևալով, ասաց. «Գնացէք բոլոր աշխարհ, քարոզեցէք աւետարանը ամենայն արարածոց, մկրտեցէք նորանց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա պահել այն ամեն բաները, ինչ որ Ես ձեզ պատուիրեցի։ Ո՛վ որ կըհաւատայ և կըմկրտուի,

փրկութեան կըհասնի. իսկ ո՛վ որ չի հաւատալ, կըդատապարտուի։ Ա՛ւ ահա Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհիս վերջը։ Առէք Հոգին Սուրբը. որոնց մեղքերը որ ներէք, ներուած լինի նոցա, և որոնց որ չներէք՝ նոքա իրանց մեղքի մէջ մնան»։ Այսպէս ահա Քրիստոսն իրաւունք տուաւ առաքեալներին որ քարոզեն, մկրտեն, մեղքերի թողութիւն տան, և հիւանդները բժշկեն, նոյնպէս հրամայեց նոցա, որ արթուն կենան, որ Իրան հաւատացողները ճշտիւ կատարեն Իւր պատուիրանները։

84. ԳԱԼՈՒՍՏ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՎՐԱՅ.

Գործ. Բ. 1—41.

Քրիստոսի համբառնալուց յետոյ աշակերտները Երու-



սաղէմում մնացին, ուր վերնատան մէջ հաւաքուեցան և ժամանակը անց էին կացնում աղօթքով, Սուրբ Հաղորդու-

թեան խորհուրդը կատարելով և անդադար մխիթարիչ Սուրբ Հոգւոյն սպասելով։ Պէնտէկոստէի օրը հասաւ. բոլոր հաւատացեալները մի տան մէջ հաւաքուեցան։ Ցերեկուան երրորդ ժամին (ըստ մեր հաշւոյն առաւօտեան իննն ժամին) յանկարծ մի մեծ շարժում եղաւ, որ սաստիկ հողմոյ յուզման էր նմանում։ Հաւատացեալների սիրտը գերբնական ուրախութեամբ լցուեցաւ։ Իւրաքանչիւրի գլխի վրայ հրեղէն լեզուներ երևեցան. այն Հոգին Սուրբն էր, որ իջաւ նոցա վրայ և Աստուածային զօրութեամբ հաստատեց նորանց։

Ժողովուրդը այն աղմուկը լսելով, խուռն բազմութեամբ հաւաքուեցան վերնատան մօտ։ Հաւատացեալներն սկսան խօսել զանազան լեզուներով, որի վրայ ամենքը զարմանում էին։ Այն ժամանակ Պետրոսն ասաց ժողովրդեան. «Քրիստոսը, որին Հրէայք խաչեցին՝ յարութիւն առաւ մեռելներից և Իւր Սուրբ Հոգին մեր վրայ ուղարկեց»։ Պետրոսի քարոզութիւնից յետոյ երեք հազար մարդ հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան։ Այսպէս ահա հաստատուեցաւ երկրիս վրայ Աստուծոյ արքայութիւնը, այսինքն՝ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին։

Մեր հաւատը դէպի ամենասուրբ Երրորդութեան Երրորդանձը, այն է դէպի Սուրբ Հոգին, մենք յայտնում ենք այսպէս.

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն եւ քնարկեցաւ ի սուրբսն։

ԱՂՕԹՔ Ի ԴԷՄՍ ՍՈՒՐԲ ՀՈԳՒՈՅՆ.

Հոգի Աստուծոյ Աստուած ճշմարիտ՝ որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Աստուծոյ Հոգի ճշմարիտ Աստուած, որ իջար Յորդանան և վերնատունը և ինձ մկրտութեան սուրբ աւազանով լուսաւորեցիր, մեղանչեցի երկնքի դէմ և Քո առաջ. նորէն Քո Աստուածային կրակով մաքրիր ինձ, ինչպէս մաքրեցիր առաքեալներին կրակէ լեզուներով և ողորմիր Քո արարածներին և ինձ բազմամեղիս։

85. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ.

Քրիստոսի երկինք համբառնալուց յետոյ, Աստուածամօր կեանքը երկար չտևեց։ Գաբրիէլ հրեշտակապետը յայտնեց, թէ մօտեցել է Նորա մահուան ժամանակը և Նա մեծ ուրախութեամբ պատրաստվում էր դէպի մահը։—Մեռնելուց առաջ Նա կամեցաւ տեսնել առաքեալներին, որոնք ցրուած էին զանազան երկիրներում՝ Քրիստոսի խօսքը քարոզելու։ Տէր Աստուածը կարգադրեց այնպէս, ինչպէս Նորա կամքն էր՝ Նորա մահուան օրը զանազան երկիրներից հաւաքուեցան բոլոր առաքեալները, բացի Բարթուղիմէոսից, նոքա տեսան Նորա երանական վախճանը. տեսան, թէ ինչպէս երևեցաւ Քրիստոսը, հրեշտակներով շրջապատուած, վեր առաւ Նորա ամենամաքուր հոգին և երկինք վերացրեց Նորան։

Վառուած լապտերներով և սաղմոսերգութեամբ առաքեալները Աստուածամօր մարմինը տարան Գեթսեմանիա և այնտեղ մէկ այրի մէջ ամփոփեցին։ Նորա թաղման երրորդ օրը Երուսաղէմ եկաւ Բարթուղիմէոս առաքեալը։ Նորա խընդրանքով առաքեալները բաց արին այրը, որի մէջ ամփոփած էր Աստուածամայրը և ոչինչ չգտան այնտեղ, բացի նորա զգեստից. առաքեալները մնացին տարակուսած։ Այն ժամանակ երկնային լուսով երևեցաւ նոցա ամենասուրբ Կոյսը և յայտնեց, թէ Աստուած յարութիւն տուեց Նորան մեռածներից։

Սուրբ Աստուածածնի Վերափոխման յիշատակը միշտ տօնում ենք օգոստոս ամսի 15-ին մօտիկ հանդիպող կիրակէ օրը. և այս տօնախմբութիւնը մեր եկեղեցին կատարում է իննօրեայ։

86. ԳԻՒՏ ԽԱՉԻ ԵՒ ԽԱՉՎԵՐԱՑ.

1. Այս, բոլոր քրիստոնեաների համար, ուրախալի անցքը կատարուեցաւ Քրիստոսի Համբարձումից երեք դար յետոյ մեծն Կոստանդիանոսի մօր—Հեղինէ թագուհուոյ աշխատանքով։ Երբոր բարեպաշտ թագուհին 326 թուին այցելեց այն տեղերը, որոնք սրբագործուած էին Աստուածորդուոյ կեանքով և չարչարանքով, Սուրբ Հոգին ներշնչեց նորանում ցանկութիւն Քրիստոսի խաչը գտնելու։ Քրիստոնեաների դէմ յարուցած հալածանքների պատճառով սուրբ խաչափայտը անյայտացած էր. թագուհու համար շատ դժուար էր նորան ի յայտ ածելը, որովհետև Հրէայք և հեթանոսները չկարողանալով տանել Խաչուածին մատուցած երկրպագութիւնը, աշխատում էին նորա կեանքի բոլոր հետքերը անհետացնել։ Քրիստոսի խաչը աւազակների խաչերի հետ թաղուած էր Golgotha սարի վրայ և վրէն հռովմայեցիք

առանձինն կատուն էին կառուցել։ Բայց թագուհուոյ ջերմեռանդութիւնը յաղթեց բոլոր դժուարութիւններին։ Խաչափայտի տեղը, ըստ ցուցման Յուդա անունով մի ծերունի Հրէայի, գտնուեցաւ և կատունը քանդուեցաւ։ Երբոր սկսեցին հողը փորել, այն տեղը մի սքանչելի անուշահոտութեան բուրմունքով լցուեցաւ, յետոյ երևեցան երեք խաչեր ու Պիղատոսից գրել տրուած տախտակը։ Որովհետև յայտնի չէր, թէ որն է Փրկչական խաչը, այն ժամանակուայ Երուսաղէմի Պատրիարք Մակարիոսը գործ դրեց մի այնպիսի միջոց, որը կարող էր ներշնչել միայն կենդանի հաւատը։ Նրա հրամանով բերուեցաւ մերձ՝ի մահ եղած հիւանդը. Սրբազանը դիպցրեց հիւանդին նախ մէկ խաչը, յետոյ երկրորդը, բայց երբոր մօտեցրեց երրորդը, հիւանդը իսկոյն առողջացաւ։ Յետոյ խաչերը մէկը միւսի ետևից դրին մէկ մեռեալի վրայ. երկուսը ոչին, ներգործութիւն չունեցան, իսկ երբոր դրուեցաւ երրորդը—մեռեալը կենդանացաւ։

Այս հրաշքները ամենքին համոզեցին, որ երրորդ խաչը պատկանում է Նորան, որ ասաց, թէ —«ես իսկ եմ յարութիւն և կեանք»։ Այս կերպով գտնուած խաչը մեծ հանդիսով դրուեցաւ Երուսաղէմայ տաճարում. և այն տեղ պատրիարքը բեմի վրայ կանգնած բարձրացրեց կամ վերացրեց՝ի տես ահագին բազմութեան։ Ժողովուրդը զգացուած այս Աստուածային հրաշքով՝ի ծունկ իջաւ Փրկչական խաչի առաջ և սկսեց երկրպագութիւն մատուցանել Նորան։

---

2. Քրիստոսի խաչը գտնւում էր Երուսաղէմի սուրբ Յարութեան տաճարում, որը կառուցած էր Կոստանդիոս Մեծ թագաւորը 614 թուին յարձակուեցաւ Երուսաղէմ քաղաքի վրայ, կողոպտեց նորան, այրեց Յարութեան տաճարը և ուրիշ շատ գերիների հետ Պարսկաստան տարաւ և Քրիստոսի խաչափայտը։ Յունաց Հերակլէս

թագաւորը յաջող պատերազմ ունեցաւ պարսիկների դէմ և 628 թուին ձեռնտու պայմաններով, խաղաղութեան դաշն կապեց, որի հիման վրայ պարսիկները յետ դարձրին Յոյներին Փրկչի խաչը: Հերակլէս թագաւորը սուրբ խաչափայտը անձամբ բերում է Երուսաղէմ. իւր վրայից հանում է արքայական զգեստը, խաչը դնում է ուսերի վրայ և բոկոտն տանում է Golgotha լեառը: Այստեղ Փրկչական խաչը վերըստին մեծ հանդիսով բազմեցնում են իւր առաջուայ տեղը:

Խաչվերացը տօնում է Հայոց եկեղեցին սեպտեմբերի 14-ին մօտիկ հանդիպող կիւրակէ օրը. իսկ խաչ գիւտը—խաչի տօնից յետոյ եօթներորդ կիւրակէին, որ լինում է հոկտեմբեր ամսին:

87 ԵՐԵՒՈՒՄՆ Ս. ԽԱՉԻ

351 թուի մայիսի 7-ին Պենտեկոստէի օրը Երուսաղէմ քաղաքում Քրիստոսի պատուական և կենդանարար Խաչը երևում է լուսաւոր տեսլեամբ. մի անսովոր խաչաձև լոյս երկնից իջած, Golgotha սարի վրայից տարածւում է մինչև Զիթենեաց լեառը: Այս հրաշալի երևոյթը, որ բաւական ժամանակ է տևում, տեսնում են Երուսաղէմի Կիւրեղ եպիսկոպոսը և քաղաքի բնակիչները: Քրիստոնեայք զմայլուած այս Աստուածային շնորհքով՝—արք և կանայք, ծերք և երիտասարդք խուռն բազմութեամբ դիմում են եկեղեցի, միաբերան օրհնելով և փառաւորելով Փրկչի անունը: Կիւրեղ Երուսաղէմացին իսկոյն առանձինն թղթով այս հրաշքի մասին տեղեկութիւն է տալիս Հռովմայեցւոց Կոստանդ կայսերը՝ի պարծանս քրիստոնէութեան: Հայաստանեայց եկեղեցին այս անցքի տօնը կատարում է Յարութիւնից յետոյ հինգերորդ կիւրակէին: Առաւօտեան ժամին կարդացւում է և Կիւրեղ եպիսկոպոսի թուղթը:

88. ՎԱՐԱԳԱՑ ՍՈՒՐԲ ԽԱՉԸ.

Սուրբ Հռիփսիմեան կուսանք 300 թուին Հռովմայեցւոց Դիոկղետիանոս կայսեր հալածանքից փախչում են դէպի Հայաստան մի քանի բարեպաշտ քահանաների հետ: Ա՛ր ժամանակ մի հանգիստ առնելով Տոսքայ գաւառի Վարագայ լերան վրայ, այստեղ Հռիփսիմէ կոյսը իւր մօտ ունեցած սուրբ խաչի մասը յանձնում է քահանայից հսկողութեանը, ամփոփելով քարակոյտի մէջ. որպէս զի քրիստոնէական սրբութիւնը չենթարկուի անպատուութեան անհաւատների կողմից: Իսկ ինքը իւր ընկերների հետ ուղևորվում է դէպի Վաղարշապատ: Քահանաների մահուանից յետոյ սուրբ խաչի մասը մնում է անյայտ: 653 թուականին Թոդիկ Ճրգնաւորը, որ առանձնացած էր Վարագայ լերան վրայ կուսանաց վանքի մօտ, գիշերով տեսնում է տասներկու լուսեղէն սիւն և լսում է հրեշտակաց օրհներգութեան ձայնը. ապա մի լուսեղէն խաչ վերանալով այնտեղից մտնում է եկեղեցի և կանգնում սեղանի առաջ: Ճգնաւորը երկիւղածութեամբ մտնում է եկեղեցի և տեսնելով խաչափայտի մասը, երկրպագութիւն է անում նրան: Իմանալով այս Ներսէս Գ. կաթուղիկոսը և քննութեամբ վերահասու լինելով հրաշքի ստուգութեանը, կարգում է խաչի առանձին տօն, որ կոչւում է տօն յայտնութեան Վարագայ խաչի:

Վարագայ խաչի յիշատակը Հայոց եկեղեցին տօնում է Խաչվերացի տօնից յետոյ Գ. կիւրակէին:

89. ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՒ ՆՈՐԱ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՎՐԱՑ.

Սուրբը Հոգու իջնելուց յետոյ առաքեալներն իսկոյն ըսկըսեցին աւետարանի քարոզութիւնը և շատերն ընդունեցին նորան։ Քրիստոսի հաւատացեալներից կազմուեցաւ մի ժողով (հասարակութիւն), որի մէջ ամենքը սիրում էին մէկմէկու և միակերպ հաւատում էին։ Այս ժողովն ասվում էր Քրիստոնէական սուրբ եկեղեցի, իսկ նորան պատկանող մարդիկ՝ Քրիստոնեայք. Քրիստոսի եկեղեցին *մի է*, որովհետև ունի մի գլուխ—Քրիստոսը, մի հաւատ, մի օրէնք և բոլոր քրիստոնեաները, խորհուրդների միջնորդութեամբ, ստանում են Սուրբ Հոգու շնորհքը։ Մահն անգամ չէ բաժանում քրիստոնեաներին։ Մեռեալ արդարները, իրանց՝ Աստուծուն ուղղած աղօթքով, օգնում են երկրիս վրայ ապրող մարդիկներին. և սոքա ևս աղօթք են մատուցանում մեռած մարդկանց համար։ Եկեղեցին *սուրբ է*, որովհետև քրիստոնեաները մաքրուած են Քրիստոսի արիւնով, և խորհուրդների միջնորդութեամբ Սուրբ Հոգու շնորհքով սրբագործվում են։ *Ընդհանրական է*, որովհետև նորան պատկանում են բոլոր հաւատացեալները, ուր և լինին նոքա։ *Առաքելական է*, որովհետև նա պահպանում է առաքեալներից աւանդուած ուսումը և կառավարվում է առաքեալներից հաստատուած հովիւներով։

Խորհուրդ ասվում են այնպիսի սրբարար գործողութիւնները, որոնցով հաւատացեալներին գաղտնի, անտեսանելի կերպով մատակարարվում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը։ Այս իսկ շնորհքն է այն Աստուածային զօրութիւնը, որը միաւորում է քրիստոնեաներին ի ժողով և սրբագործում է նրանց։ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին առաքեալներից հետևեալ խորհուրդներն ընդունեց. Մկրտութիւն, Դրոշմ,

Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, ամուսնութիւն, կարգ քահանայութեան և Օծումն հիւանդաց։ Մկրտութեամբ ընդունում է հաւատացեալը Հոգւոյն Սրբոյ շնորհքը, ստանալով նոր կեանք։ Դրոշմով ընդունում է շնորհք—նոր, քրիստոնէական կեանքի մէջ հաստատ մնալու համար։ Ապաշխարութեամբ ստանում է շնորհք, որով թողութիւն է տրվում նորա մեղքերին։ Հաղորդութեամբ քրիստոնեայն գաղտնի կերպով միանում է Քրիստոսի հետ։ Ամուսնութեամբ օրհնվում է առն և կնոջ միաւորութիւնը։ Ձեռնադրութեամբ տրվում է Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որով ընտրեալն սրբագործելով, մատչում է եկեղեցուն ծառայելու։ Հիւանդների օծմամբը—տրվում է շնորհք, որով մարդ առողջութիւն է գտնում ծանր հիւանդութիւնից։

Հաւատը, որ ունինք դէպի Եկեղեցին և դէպի Մկրտութեան շնորհաբաշխ զօրութիւնը, այսպէս ենք յայտնում.

Հաւատամք 'ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի, 'ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց։

90. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ.

Մկրտութեան խորհրդով ընդունում է մարդ Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որով վերածնում է, այսինքն ստանում է նոր կեանք։ Այս խորհուրդը կատարվում է մկրտուողին երեք անգամ ջրի մէջ ընկղմելով, որի հետ արտասանվում են այս խօսքերը. «Մկրտվում է ծառայն Աստուծոյ (այս անուն) յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Մկրտուողն աւազան մտնելով մեղաւոր, դուրս է գալիս այնտեղից՝ Հոգւոյն Սրբոյ շնորհիւ, արդարացած իբրև մարդ Աստուծոյ։

Մկրտութիւն ընդունող մարդուց պահանջվում է, որ նա հրաժարուի իւր առաջուայ վատաբարոյ կենցաղավարութիւնից, սատանայից և ամեն չարութիւնից. յայտնէ իւր փափագը Քրիստոսի հետ միաւորուելու և դաւանէ դէպի Քրիստոսն ունեցած հաւատը: Մկրտութիւնից յետոյ նորան հագցնում են սպիտակ շոր, ի նշան նորա մաքրութեան: Մկրտութեան խորհուրդն անկրկնելի է:

Մկրտուածին նոր կեանքի մէջ դաստիարակելու համար տրվում է կնքահայր, որ ընդունելով նորան աւազանից, նորա երաշխաւորն է դառնում: Երեխայի մկրտութեան ժամանակ կնքահայրը նորա տեղ յայտնում է սատանայից հրաժարուիլը և հաւատոյ դաւանութիւնը: Նա պիտի հոգայ, որ երեխան դաստիարակուի քրիստոնէական հաւատի մէջ:

91. ԴՐՈՇՄ.

Դրոշմի խորհրդով նոր մկրտուածն ընդունում է Սուրբ Հոգու շնորհքը, որով հաստատվում է քրիստոնէական կեանքի մէջ: Դրոշմը կատարվում է իսկոյն մկրտութիւնից յետոյ: Քահանան սուրբ մեռոնով օծում է մկրտեալի ճակատը, աչքերը, հոտոտելիքը, բերանը, ականջները, ձեռքերը և ոտները, արտասանելով այս խօսքերը. «ԿՆԻՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»: Մարմնի զանազան անդամներն օծվում են ի նշան նորա, որ Հոգին Սուրբ սրբագործում է և զօրացնում մարդու ամեն զգայարանքները և գործերը:

Մեռոնն է իւղ կազմած զանազան անուշահոտ ծաղիկներից և խոտերից, որոնց մէջ գլխաւոր մասը կազմում է ձիթենու իւղը և աղնիւ բալասանը, և օրհնվում է Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսով ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսից, և այնտեղից բաժանվում է Հայաստանեայց ամենայն եկեղեցիների մէջ:

92. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ.

Ապաշխարութեան խորհրդով քրիստոնեան ստանում է Սուրբ Հոգու շնորհքը, որով սրբվում է նա մկրտութիւնից յետոյ գործած մեղքերից:

Ապաշխարութեան մատչողից պահանջվում է մեղքերի զղջումն և վարքն ուղղելու դիտաւորութիւն: Որպէս զի քրիստոնեայք միջոց ունենան իրանց մէջ զղջման զգացմունքն արթնցնելու, եկեղեցին նշանակում է ապաշխարութիւն՝ այսինքն պահք, աղօթք և առանձնութիւն: Իսկ վարքն ուղղելու դիտաւորութիւնն աւելի հաստատ պահելու համար ապաշխարողին սահմանվում է ապաշխարանքը, որի կատարումն պիտի յիշեցնէ նորան իւր միտումը դէպի չարը և օգնէ նորանից հեռանալու: Քրիստոնեան իւր զղջումը յայտնում է քահանայի առաջ, որ դառնում է նորա հոգևոր հայր, բժիշկ նորա հոգու և դատաւոր խղճի: Զղջման այսպիսի արտայայտութիւնը կոչվում է՝ խոստովանութիւն:

93. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ.

Հաղորդութեան խորհրդի մէջ քրիստոնեան հացի տեսակով ճաշակում է Քրիստոսի մարմինը և գինու տեսակով ընդունում է Նորա արիւնը, որով և միանում է Քրիստոսի հետ:

Պաշտօնը, որով կատարուում է Հաղորդութեան խորհուրդը, կոչվում է պատարագ, որ ասել է զոհ կամ նուէր: Նա կատարվում է սովորաբար ճաշու ժամին, այսինքն կէս օրից առաջ, շատ անգամ առաւօտեան ժամից յետոյ, և երկու ճրագալուցի օրերում երեկոյեան ժամից յետոյ:

Պատարագ մատուցանելիս քրիստոնեայք յիշում են իրանց Փրկչի ծնունդը, քարոզութիւնները, չարչարանքը, մա-

հը, յարութիւնը և համբարձումն։ Որոնք արժանի են Քրիստոսի հետ միաւորուելու, հաղորդվում են. իսկ անպատրաստները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշխարք) են ճաշակում։ Իւրաքանչիւր քրիստոնեայ, եկեղեցու կանոնների համեմատ, պարտաւոր է հաղորդուել տարին հինգ անգամ՝ հինգ տաղաւարաց օրերում, կամ գոնէ մէկ անգամ — անպատճառ։

94. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴՈՑ ՀԱՄԱՌՕՏ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ *)

Ն ա խ ա գ ի տ ե լ ի ք.

Պատարագի նշանակութիւնը։ — Պատարագը անարիւն զոհ է Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որը հացի և գինու տեսակով քահանաների ձեռքով մատուցանում են Աստուծոյ ինքնին Տէրն մեր Քրիստոս և Նորա հաւատացեալները՝ ի լիշատակ չարչարանաց և մահուան Քրիստոսի։

Մատուցողք պատարագի։ — Պատարագը կարող են մատուցանել միայն քահանայական կարգ ունեցողները, այսինքն՝ — եպիսկոպոսները, վարդապետները և քահանաներ, որ և նոյն օրը ժամարար են կոչվում, որովհետև առանց նոցա ներկայութեան չէ կարող ժամերգութիւնը սկսուիլ։

Հաստատութիւն խորհրդոյս։ — Պատարագի խորհուրդը հաստատեց Քրիստոս իւր չարչարանաց նախընթաց օրը, յորում հացն ու բաժակը առաւ և ասաց. «Այս է Մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի»։ — «Այս է արիւն իմ, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի։ Զայս արարէք առ իմոյ յիշատակի»։

Նպատակ։ — Պատարագի մատուցման նպատակն է՝ 1) Աստուծոյ փառաբանութիւնը. 2) մեղքերի թողութիւն ստանալը. 3) մեր շնորհակալութիւնը առ Աստուած. և 4) Աստուծոյ շնորհաց և ողորմութեան ակնկալութիւնը։

Տեղը։ — Պատարագը մատուցանվում է ամեն մարդոց համար, թէ կենդանիների և թէ մեռելների համար։ Իսկ տեղը միշտ յատկացնվում է եկեղեցիների և օրհնեալ մատուռների մէջ օծեալ վէմ ունեցող սեղանի վրայ։

Ժամանակ մատուցման պատարագի։ — Պատարագը թէ և կարելի է ամեն օր մատուցանել, բայց մեր եկեղեցւոյ ընդհանուր սովորութիւնն է աղուհացից մէջ (մեծ պասի լի օրերը) նաև բոլոր առաջաւորաց շաբաթը չպատարագել։ Իսկ ժամը սովորաբար ճաշից առաջ է յատկացնվում, թէ և կարելի է իրիկուններն էլ պատարագ մատուցանել, երբոր ստիպողական հարկն է պահանջում, զօր. հարկաւոր է վտանգաւոր հիւանդին հաղորդութիւն տալ և պատրաստ մասը չէ գտնվում, և Զատկի ու Ծննդեան ճրագալուցի օրերը, ինչպէս որ մեր եկեղեցւոյ առաքելական սովորութիւնն է։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ ԵՒ ԱՂՕԹՔ ՊԱՏԱՐԱԳԻ.

Բաժանումն պատարագի։ — Պատարագը երկու գլխաւոր մասնի է բաժանվում՝ ա. *պատարագ երեխայից* և բ. *պատարագ հաւատացելոց*։ Պատարագ երեխայից այն մասն է, որ երեխայք, այսինքն չմկրտուած անձինք, ևս և ապաշխարողք կամ թերահաւատք կարող էին տեսնել, որպէս զի այն միջոցին կարգացուած և տրուած խրատները լսեն, և այս մասն է պատարագի սկիզբից մինչև վերաբերումն։

Պատարագ հաւատացելոց է երկրորդ մասն պատարագի, որ վերաբերումից է սկսվում, որովհետև հին ժամանակնե-

*) Սոյն բացատրութիւնը կազմելիս հետևել եմ արժանայիշատակ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանի յօրինած՝ «Մեկնութիւն խորհրդոյ և արարողութեանց սրբոյ պատարագի» գաւառտերին։

րում սովորութիւն կար նոյն միջոցին—չմկրտուածներին անհաւատներին և ապաշխարողներին եկեղեցուց դուրս հանել և ներսը կարող էին մնալ միայն հաւատացեալները—Սուրբ խորհուրդը տեսնելու և հաղորդուելու։

Չգեստաւորութիւն։—Պատարագիչ քահանան մտնում է խորանը զգեստաւորուելու և այդ միջոցին դպիրները երգում են «Խորհուրդ խորին» շարականը, որի առաջին տան մէջ յիշվում է հրեշտակաց ստեղծագործութիւնը, երկրորդում Ադամայ ստեղծուիլը, երրորդում Քրիստոսի չարչարանքով եղած փրկագործութիւնը, չորրորդում—Հոգւոյն սրբոյ առաքելոց վրայ իջնելը և ապա քահանայական զգեստների յիշատակութիւնը և խորհուրդը։ Այս շարականի վերջին տունը, որ առնուած է ծաղկազարդի կանոնից, այս է՝—«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ Քում՝ պահեա ի խաղաղութեան»։

Պատարագիչ քահանայի զգեստները սոքա են.

1. *Սաղաւարտ*։—Քահանայի գլխանոցն է, որ նշանակում է Յիսուսի յաղթութիւնը ընդդէմ չարին։

2. *Շապիկ*։—Յիշեցնում է սպիտակ հանդերձը հրեշտակի, որ նստած էր Քրիստոսի գերեզմանի վրայ և այն սպիտակ հանդերձը ևս, որ Հերովդէս ծածկեց Յիսուսի վրայ, և նշանակում է սրբազան կարգի սրբութիւնը և անարատութիւնը։

3. *Փորուրար*։—Քահանան ձգում է երկու ուսից վրայ և նրանով ծածկում է կուրծքը մինչև վերջ. փորուրարը նշանակ է Քրիստոսի լծոյն, այսինքն՝ խոնարհութեան և հեզութեան, ևս և արդարութեան, որով քահանան պէտք է զարդարէ իւր սիրտը և պարանոցը։

4. *Գօտին*։—Գօտիով պնդվում է պատարագչի շապիկը և նշանակում է, որ Աստուած ամրապնդում է նորան իր զօրութեամբ, անհետացնելով նորանից անմաքուր խորհուրդներ։

5. *Բազպան*։—Նշանակում է պատրաստականութիւն տէ-

րունական սեղանին զգուշութեամբ սպասաւորելու, յիշեցնելով միանգամայն, որ եկեղեցւոյ սպասաւորը յոյս պէտք է դնի ոչ թէ իւր անձնական ուժի վրայ, այլ պիտի ապաւինի Աստուծոյ օգնութեանը։

6. *Վակաս*։—Քահանայի ուսնոցն է, որ հին օրինաց եփուդի տեղն է բռնում, և ուսի վրայ դնելիս՝ այնպէս է երևում, իբր թէ կցուած լինի շուրջառի հետ. վակասը քահանայի արդարութեան նշանակն է։

7. *Շուրջառ*։—Փիլոնաձև զգեստն է, որ նափորտ ևս է կոչվում.—նշանակ է հոգևոր զրահի, որով պատսպարվում է քահանան ընդդէմ ներգործութեանց չարին։ «Խորհուրդ խորին» շարական յօրինող արևելցի Խաչատուր վարդապետն ընծայում է նափորտին կատարեալ Աստուածսիրութեան նշանակը, որով պէտք է քահանան զարդարէ իւր անձը պայծառ զգեստից աւելի։

ՊԱՏԱՐԱԳԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Զգեստաւորուած քահանան սարկաւագի հետ դուրս են գալիս խորանից. բեմի առաջ քահանան ձեռքերը լուանում է յօրինակ ներքին մաքրութեան և ապա սուրբ Աստուածածնի բարեխօսութիւնը խնդրելով՝ հրապարակական խոստովանութիւն է անում իւր մեղքերի և թողութիւն ստանալով, սաղմոս ասելով բարձրանում է բեմը. ապա վարագոյրը քաշվում է և ընծայարանի մօտ գնալով սպաս է դնում այսպէս՝ սարկաւագի ձեռքից առնում է նշխարը (անխմոր, այսինքն բաղարջ հաց) և խաչակնքելով դնում է մաղզմայի վրայ և ասում՝ «Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». յետոյ գինին (անապակ, այսինքն անջուր) է առնում և խաչաձև ածում է սկհոյ մէջ, ասելով՝—«Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Սկիհը ծածկում է

քօղով, խաչակնքում է և ասում այս խորհրդաւոր խօսքերը։ — «Հոգին սուրբ եկեսցէ ի Քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ’ի վերայ Ք»։ և ապա խնկարկութեամբ շրջագայելով ժողովրդի մէջ՝ նորէն բարձրանում է քեմը։ Այս շրջագայութեան միջոցին դպիրները երգում են «Ցայս յարկ» շարականը, որը վերջանում է հետևեալ մաղթանքով — «Բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեայց»։

Բուն պատարագը սկսվում է քահանայի այս խօսքերով — «Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն»։ յետոյ ասվում է օրհնայ պատշաճ ժամամուտը և ապա սկսվում է

ԵՐԵՔՍՐԲԵԱՆ ՓԱՌԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ.

Երեքսրբեան փառաբանութեան հանդէսը այսպէս է կատարվում՝ նախ քահանան առանձնական աղօթքով խնդրում է Աստուծուց, որ սուրբը հրեշտակներն ևս փառաբանակից լինին մեզ, ապա սարկաւագը ասում է՝ «Պռօսխումէ» յունական բառը, որ նշանակում է ուշ դնենք և ապա ասվում է երեքսրբեան փառաբանութիւնը, որ է՝ սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար (կամ յարեար և այլն) վասն մեր, ողորմեա՛ մեզ» — երեք անգամ. այս միջոցին սարկաւագը ժամարարից առնում է սուրբ աւետարանը և բարձրացնելով՝ բերում է ժողովրդի առաջ և համբուրել է տալիս. որպէս զի դրանով զարթեցնէ նոցա հաւատը և գրաւէ նոցա ուշադրութիւնը դէպի Աստուածային խօսքը, յետոյ սկսվում է մարգարէական և առաքելական ընթերցմունքը, որ նշանակում է, թէ մարգարէից գուշակութիւնը և առաքելոց քարոզութիւնը ի միասին Քրիստոսի տնօրէնութիւնն են ծանուցանում։ Աւետարանից յետոյ ասվում է «Հաւատամքը», որպէս զի ժողովուրդը հաստատուի իւր

հաւատքի մէջ, որ ունի աւետարանի խօսքերին և պատարագի սուրբ խորհրդոյն։ Հաւատամքից յետոյ իսկոյն ժամարարը ասում է Քրիզոր Լուսաւորչից աւելացրած փառաբանական խօսքերը՝ — «Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով սրբոյ Երրորդութեան և միոյ Աստուածութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

Սորանից յետոյ սկսվում է *պատարագ հաւատացելոց*։ Քահանան օրհնում է ժողովրդոց, ասելով՝ «Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան»։ — Սարկաւագը, վերցնելով քահանայի սպասարտը, ասում է՝ «Մի՛ ոք յերախայից (չմկրտուածներից), մի՛ ոք ’ի թերահաւատից և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի (մօտենայ) յայս խորհուրդ»։ Դպիրները հետևեալ երգով յայտնում են պատճառը, թէ ինչու չմկրտուածները կամ թերահաւատները կամ ապաշխարողները պիտի չմօտենան այս խորհրդին, որովհետև՝ «Մարմին Տէրունական և Արիւն Քրիստական կայ առաջի, երկնային զօրութիւնք յաներևոյթս երգեն և ասեն անհանգիստ (անդադար) բարբառով Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց»։ — Դպիրները երգում են օրուայ պատշաճ սրբասացութիւնը։

ՎԵՐԱԲԵՐՈՒՅՆ

Հին ժամանակներում բոլոր ժողովուրդը, այսինքն եկեղեցականք և աշխարհականք, արք և կանայք այս միջոցիս թափօրով բերում էին հաց և գինին և դնում էին ընծայարան ասուած սեղանի վրայ. քահանան ընդունում էր այն ընծայքը, յետոյ նոցա մէկ կտորը տանում էր սուրբ սեղան, սրբագործում էր ’ի Մարմին և յԱրիւն Տեառն, որից հաղորդվում էին արժանաւորները, իսկ չհաղորդուողներին պատարագի վերջը բաժանվում էր այն ընծայից մնացած մասը որպէս զի նոքա ևս մի կերպով սուրբ սեղանին մասնակից

համարուին։ Յետոյ եկեղեցին ամենայն տեղ այս արարողութիւնը թեթեւացրեց և մեր ազգի մէջ սովորութիւն եղաւ միայն սրբագործելի նշխարն ու գինին թափօրապէս ժողովրդեան միջից անցնելով կամ սեղանի ետևից պտըտելով վերաբերել պատուով ու տանել տալ քահանային, որը խնկարկութեամբ ընդունելով դնում է սեղանի վրայ։ Այս արարողութիւնը երբեմն հանդիսով է կատարվում և երբեմն համառօտ։ Վերաբերումը մասնաւորապէս օրինակ է գալստեան Քրիստոսի յաշխարհ մարդեղութեամբ և գալստեան Նորա 'ի սուրբ սեղանն հաղորդութեան խորհրդով։

ՈՂՋՈՅՆ.

Վերաբերումից յետոյ լինում է ողջունի արարողութիւնը, որի խորհուրդը կայանում է հետևեալում. Եկեղեցին չի մոռանում Քրիստոսի Տեառն մերոյ այն պատուէրը, որ ասում է՝ «Թէ որ սեղանի վրայ մատուցանես քո ընծադ և այն տեղ միտքդ գայ, որ եղբայրդ սրտի մէջ քո դէմ ունի որ և իցէ անբաւականութիւն, թող քո ընծադ սեղանի առաջև, գնա առաջ հաշտուիր եղբօրդ հետ և յետոյ արի ու ընծայիր պատարագդ»։ Ուրեմն պատարագ մատուցանողները հաշտ պիտի լինին իրար հետ, ոխ չունենան մէկ մէկու դէմ և 'ի նշան նորա՝ սուրբ սիրով ողջոյն տան իրար։ Սորա համար էլ սարկաւագն ասում է. «Ողջոյն տո՛ւք (տուէք) միմեանց 'ի համբոյր սրբութեան և որ ոչ էք կարող հաղորդել (մասնակցել) Աստուածային խորհրդոյս, առ դրունս եղէք (դուրս գնացէք) և աղօթեցէք»։

Իսկ դպիրները երգում են՝

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, Որէնն Աստուածաստ բազմեցաւ, խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունիս հրաման տուաւ. եկեղեցիս մի անձն եղև. համբոյրս յօդ լրման տուաւ, թշնամութիւնն հեռացաւ, սէրն յընդհանուրս սփռեցաւ։ Արդ, պաշտօնեայք, բարձեալ զձայն, տուք օրհնութիւն 'ի մի բերան միասնական Աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբան։

Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, Որէնն Աստուածայստեղ բազմեցաւ, խաղաղութեան ձայն լսուեցաւ, սուրբ ողջունիս հրաման տրբուեցաւ. եկեղեցիս մի անձն եղաւ (հաւատացեալները իբրև մէկ անձն եղան)։ Այս համբոյրը իբրև միութեան կապ տրուեցաւ, թշնամութիւնը հեռացաւ, սէրը ամենքի մէջ տարածուեցաւ։ Արդ, պաշտօնեայք, ձայներնիդ բարձրացնելով՝ միաբերան օրհնեցէք միասնական Աստուածութիւնը, որին սրբովբէքն են օրհնաբանում։

ՍՐԲԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԱՆՈՆ ՊԱՏԱՐԱԳԻ.

Ողջունից յետոյ սկսվում է սրբագործութեան արարողութիւնը։ Առաջ սարկաւագը քարոզում է ժողովրդեան, որ ահիւ և դողութեամբ կենան, ուշադրութեամբ նայեն սուրբ պատարագի կատարման վրայ.

«Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ»։

Ժողովուրդը պատասխանում է, թէ մեր ուշադրութիւնը առ Քեզ է, Տէր Աստուած։ «Առ Քեզ Աստուած»։ Սար-

կաւագը շարունակում է՝ «Պատարագ Քրիստոսի մատչի գառն Աստուծոյ». այսինքն գիտացէք, որ Քրիստոս, գառն Աստուծոյ, պատարագ է բերվում սեղանի վրայ։ Ժողովուրդն էլ յայտնում է իւր հաւատը և յոյսը ասելով՝ «Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան». այսինքն հաւատում ենք, որ այս պատարագի զօրութեամբ ընդունում ենք Աստուծոյ ողորմութիւնը և խաղաղութիւնը։ Յետոյ դպիրները երգում են հրեշտակային երգը, որ է՝— «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք Քո, օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ Տեառն. ովսաննայ ի բարձունս»։

«Սուրբ Սուրբից» յետոյ սկսվում է կանոն պատարագի որովհետև գլխաւոր մասն է սրբագործութեան. քահանան ասում է աղօթքը, որի վերջին խօսքերը սոքա են. «Առաւ հայրը իւր Աստուածային սուրբ ձեռքը, օրհնեց, գոհացաւ, մանրեց ու տուաւ իւր աշակերտներին, այս խօսքերն ասելով. «Առէք, կերէք, այս է Մարմին Իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»։ Գինեւոյն վրայ՝

«Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է Արիւն Իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»։ Դպիրները երգում են՝ «Հայր երկնաւոր», «Յամենայնի օրհնեալ ես Տէր». իսկ երբ որ երգում են՝ «Որդի Աստուծոյ» երգը, այն ժամանակ քահանան վերցնում է քօղը սկհւոյ վրայից և երեք անգամ խաչակնքելով հացը, ասում է՝

«Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի»։

Յետոյ սկիհը խաչակնքելով, ասում է՝

«Եւ զբաժակս օրհնեալ Արիւն ստուգապէս (իսկապէս) արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի»։

«Յետոյ Հացը մաղմայով դնելով սկհւոյ վրայ միասին խաչակնքում և ասում է երեք անգամ.

«Որով զհացս և զգինիս օրհնեալ Մարմին և Արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, փոխարկելով Հոգւոյդ Քով սրբով»։ Այս միջոցիս Աստուծոյ զօրութեամբ Հացը և գինին փոխարկվում են ի Մարմին և յԱրիւն Քրիստոսի։

ՁԱՁԱՑՈՒՄՆ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ.

Սրբագործութեան արարողութիւնից յետոյ սկսվում է սուրբերի յիշատակութիւնը սեղանի աջ կողմում. յետոյ մատուցանվում է գոհութիւն սուրբ և անմահ պատարագի համար։ Սորանից յետոյ քահանան աղօթում է, որ Աստուած արժանի անէ մեզ համարձակ կերպով առ Նա, իբրև առ Հայրն, դառնալու Տէրունական աղօթքի խօսքերով. դպիրները երգում են «Հայր մեր» աղօթքը։ Ապա սարկաւագը «Պռօսխումէ» ասելով հրաւիրում է ժողովուրդի ուշադրութիւնը առաջիկայ սրբութեան վրայ. քահանան նշխարքը բարձրացնելով, ասում է՝ «ի Սրբութիւն Սրբոց», այսինքն այս սուրբ ընծային կարող են արժանանալ միայն սուրբերը։ Ժողովուրդը, զգալով իւր անարժանութիւնը. ասում է՝ «միայն սուրբ, միայն Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր»։ Յետոյ քահանան դառնում է առ ժողովուրդը սկիհը ձեռքին և ասում է՝ «ի սուրբ ի սուրբ պատուական Մարմնոյ և յԱրենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեացուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից՝ բաշխի ի մէջի մերում։ Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողութիւն մեղաց։ Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի. որ նստի ‘ի կառս (աթոռ) քերովբէականս»։ Այս

տեղ վարագոյրը քաշվում է և պատարագիչը չորս կտոր է անում մասը և բաժակի մէջ ձգելով ասում է՝ «լրումն Հոգւոյն սրբոյ». այսինքն թէ խորհուրդը կատարվում է ներգործութեամբ սուրբ Հոգւոյն։

Պատարագիչը ահիւ և դողութեամբ ճաշակում է սուրբ Մարմինը (չորս մասնից միայն մինը) և սուրբ Արիւնը, ասելով այս դաւանական աղօթքը.

«Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ՝ ի Հայր և յՈրդի և ի Հոգիդ Սուրբ»։

«Հաւատով ճաշակեմ զսուրբ, զկենդանարար և զփրկագործ Մարմինս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց»։

«Հաւատով ըմպեմ զսրբաբար և զմաքրիչ Արիւնս Քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց»։

«Մարմին Քո անապական լիցի ի կեանս, և սուրբ Արիւն Քո ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»։

Սորանից յետոյ կրկին բացվում է վարագոյրը և սարկաւագը բացականչում է՝ «Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք (առաջ եկէք) և սրբութեամբ հաղորդեցարուք» (հաղորդուեցէք)։ Եթէ հաղորդուողներ կան, ակնածութեամբ առաջ են գալիս և հաղորդվում են. իսկ անպատրաստները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշխարք) են ճաշակում։

Պատարագիչը սուրբ սկիհը ձեռքին օրհնում է ժողովրդին. ապա նորէն քաշվում է վարագոյրը և պատարագիչը գոհացողական աղօթք ասելով յանուն ամենասուրբ Երրորդութեան, ճաշակում է և մնացեալ մասերը։

Երկրպագանելով Քրիստոսին, որ վերջին անգամ երևեցաւ իւր սուրբ խորհրդով, գպիրները երգում են հետևեալ գոհացողական երգը՝

«Գոհանամք զՔէն, Տէր (շնորհակալ ենք Քեզանից, Տէ՛ր), որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քո,

բաշխելով (տալով կամ շնորհելով) զՄարմինդ եւ զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց։

95. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.

Ամուսնութեան խորհրդով Քրիստոսի եկեղեցին օրհնում է ամուսնական միաւորութիւնը և խնդրում է Աստուծուց այր և կնոջ համար այնպիսի կատարեալ սիրոյ շնորհք, որով միաւորուած է Քրիստոսը Իւր եկեղեցու հետ։ Այսպիսի շնորհքը խնդրվում է՝ զաւակ ծնանելու և նորանց քրիստոնէավայել կերպով մեծացնելու համար։

Ամուսնութեան խորհուրդը նոքա միայն կարող են ընդունել, որոնք սորա համար սահմանեալ տարիքն ունին, երբ կայ ամուսնացողների մէջ փոխադարձ համաձայնութիւն և պսակի դէմ սահմանուած արգելքներ չունին։

96. ԿԱՐԳ ԿԱՄ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Կարգի խորհրդով ձեռնադրուողին տրվում է շնորհք և իշխանութիւն՝ ժողովուրդը հովուելու և եկեղեցու սուրբ խորհուրդները կատարելու։

Կարգը եօթն բաժանումն ունի՝ առաջին երեքը մեծ, այսինքն՝ քահանայութիւնը, սարկաւագութիւնը և կիսասարկաւագութիւնը յատկապէս Կարգ են կոչվում։ Իսկ վերջին չորսը փոքր, այսինքն՝ ջահընկալութիւն, երգմնեցուցչութիւն, ընթերցողութիւն և դռնապանութիւն յատկապէս աստիճանք են կոչվում։ Եպիսկոպոսութիւնը նոր կարգ չէ, այլ գերագոյն իշխանութիւն է՝ աստիճանները և միւս կարգերը տալու։

97. ՕԾՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ.

Հիւանդաց օծման խորհրդով տրվում է Հոգւոյն սրբոյ շնորհքը, որով հիւանդն ընդունում է Աստուծուց մարմնի առողջութիւն և ներելի մեղքերի թողութիւն:

Այս խորհուրդը կատարում է քահանան այնպէս՝ որ ձեռը դնելով և իւղով օծելով, աղօթք է անում հիւանդի վրայ:

Թէև Յակոբոս առաքեալից կանոնադրուած է աղօթքը և օծումը միանգամայն կատարել, բայց որովհետև խորհրդի գլխաւոր մասն այն աղօթքն է, որ գիշերաժամ ենք անուանում, այս պատճառով Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին սովորութիւն է արել՝ առանց օծման կատարել այս խորհուրդը:

98. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ.

Սկզբում քրիստոնէութիւնը շատ թշնամիների հանդիպեցաւ: Ամեն տեղ քրիստոնեաներին հալածում էին՝ արգելում էին բանտերի մէջ, տանջում էին և սպանում: Քրիստոնէական հաւատի համար առաջին նահատակ եղաւ Ստեփանոս նախասարկաւագը՝ նորան քարկոծեցին: Բոլոր առաքեալները, բացի սուրբ Յովհաննէսից, կատարեցան մարտիրոսական մահուամբ: Սուրբն Պետրոս և Անդրէաս խաչուեցան, իսկ սուրբն Պօղոս գլխատուեցաւ: Սոքա երկուսն էլ, այսինքն Պետրոս և Պօղոս առաքեալները, Հռոմումը նահատակուեցան մի օրուայ մէջ, ինչպէս ասում է աւանդութիւնը: Թադէոս և Բարթուղիմէոսը նահատակուեցան Հայաստանի մէջ Հայոց Սանատրուկ թագաւորի իշխանութեան ժամանակ: Բայց Քրիստոսի վարդապետութիւնը՝ չնայելով բոլոր հալածանքներին, աւելի և աւելի տարածվում էր երկրիս վրայ: Այս քաշած տառապանքներից Քրիստոնէութեան

քարոզիչներն ամենևին չյուսահատուեցան և որքան աւելի չարչարվում էին, այնքան աւելի ուրախանում էին, հաստատ համոզուած լինելով՝ որ կարճատև տանջանքից յետոյ սպասում է նոցա արդարութեան պսակը երկնային թագաւորութեան մէջ: Հալածուելով մի տեղից, նոքա անցնում էին միւս տեղերը, ուր և գտնում էին իրանց հետևողները:

99. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Մինչդեռ քրիստոնէութիւնը հալածվում էր ամենուրեք, հեթանոսական Հայաստանը նորա պաշտպան հանդիսացաւ: Աբգար Հայոց թագաւորը Քրիստոսի քարոզութիւնների և հրաշագործութիւնների մխիթարական լուրն առնելով և ինքը վարակուած լինելով անբուժելի հիւանդութեամբ (բորոտութեամբ), դեսպաններ ուղարկեց Յիսուսի մօտ նամակով և խնդրեց որ գայ Եդեսիա քաղաքը, բժշկէ նորան հիւանդութիւնից և այնտեղ խաղաղական կեանք վարէ, հեռու թշնամիներից: Յիսուսը հրամայեց Թովմաս առաքեալին՝ գրել նամակի պատասխանը, որի մէջ խոստացաւ Իւր համբարձմանից յետոյ Իւր աշակերտներից մէկին ուղարկել, որպէս զի բժշկէ թագաւորին հիւանդութիւնից և միանգամայն մխիթարէ նորան երկնաւոր մխիթարութեամբ:

Աբգարև Քրիստոսի համբառնալուց յետոյ, Թադէոսը, որ Նորա եօթանասուն աշակերտներից մէկն էր, մտաւ Եդեսիա քաղաքը և իւր առաքելական քարոզութիւնն սկսեց նոյնիսկ թագաւորական պալատից: Աբգարը հաւատաց և բժշկուելով հիւանդութիւնից մկրտուեց ինքը և իւր գերդաստանը և նոցա հետ միասին Եդեսիայի բնակիչները: Շուտով փակուեցան կռատունները և նոցա տեղ փայլեց Քրիստոսի սուրբ խաչը: Թադէոսը հիմնելով եկեղեցիք, ձեռնադրելով իւր տեղ Ադդէ եպիսկոպոսին և կարգելով քա-

հանանները, ինքը գնաց Հայաստանի մէջ աշխարհները աւետարանը քարոզելու։

Աբգարի հօրաքեռ որդին Սանատրուկ, որ իշխում էր Հայաստանի Շաւարշան կամ Արտազ գաւառում, իւր Սանդուխտ դստեր հետ թէև առաջ ընդունեց քրիստոնէութիւնն, բայց յետոյ ուրանալով նահատակեց Թադէոս առաքեալին և իւր դուստր Սանդուխտին։

Թադէոսից յետոյ 65 թուականին գալիս է Հայաստան Բարթուղիմէոս առաքեալը, բերելով իւր հետ Աստուածածնի պատկերը, շատացնում է հաւատացեալների թիւը, հաստատում է եկեղեցիք և ապա նա էս նահատակվում է Սանատրուկից։ Այսպէս ուրեմն Հայաստանեայց եկեղեցին կարող է բացարձակ կոչուիլ՝ *Առաջին Քրիստոնէական Եկեղեցի*։

Թէև Աբգարի յաջորդներն ընդդիմացան քրիստոնէութեան տարածմանը, բայց Թադէոսի և Բարթուղիմէոսի առաքելական քարոզութիւնը և թափած արիւնն անօգուտ չանցան Հայաստանի մէջ, այնպէս որ մինչև Գրիգոր Լուսաւորչի օրերը (302 թ.) ոչ հովիւները պակասեցան և ոչ նահատակները։

100. ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ.

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որ հեթանոս Անակ Պահլաւունու որդին էր, ծնուեցաւ Վաղարշապատ քաղաքում 257 թ.։ Եւ երբ նորա հայրը՝ Խոսրով թագաւորին սպանելուց յետոյ, չկարողանալով վախճեամբ ազատուել, խեղտուեցաւ Երասխ գետի մէջ, իսկ նորա ընտանիքը սրով կոտորուեցան, այս կոտորածից ազատ մնաց երեք տարեկան մանուկը։ Սորան իւր դայեակ Սոփիա անունով կինը, որ հաւատով քրիստոնեայ էր, տանում է Կեսարիա, և այնտեղ մկրտել տալով՝ անունը դնում են Գրիգոր։ Նա Կեսարիա-

յում ստաւ քրիստոնէական բարեպաշտութեամբ և 18 տարեկան հասակում ամուսնանալով ունեցաւ երկու որդի՝ Վրթանէս և Արիստակէս։

Գրիգորը՝ բաժանուելով իւր կնի Մարիամից, գնաց Հռոմ, ուր այն ժամանակ գտնվում էր Խոսրով թագաւորի որդի Տրդատը, որի մօտ նա ծառայ մտաւ, որպէսզի իւր հօր յանցանքը քաւի։ Գրիգորը մնաց Տրդատի մօտ մինչև որ նա թագաւոր եղաւ ու Հռոմից վերադարձաւ Հայաստան 286 թ.։ Երբ նորա հասնում են Եկեղեաց գաւառի Երէզ ստանը, Տրդատը շնորհակալութեան զոհ է մատուցանում Անահիտ դիցուհուն և Գրիգորին պատուիրում է, որ ծաղկէ պսակ դնէ կուռքի գլխին. բայց նա չկատարելով թագաւորի հրամանը, յայտնի ցոյց է տալիս իւր քրիստոնէութիւնը, որ մինչև այն ժամանակ ծածուկ էր պահում։ Ուստի Տրդատը սարսափելի տանջանքներ է հասցնում նորան. և իմանալով, որ Գրիգորը իւր հօրն սպանող Անակի որդին է, հրամայում է ձգել Արտաշատ քաղաքի խորվիրապի մէջ, ուր միայն մահապարտներին էին ձգում։ Գրիգորը մնում է նորա մէջ 15 տարի, կերակրուելով մի բարեպաշտ կնոջ ձեռքով։

Այս միջոցին (301 թ.) Տրդատի հրամանով կատարվում է Հռիփսիմեանց Սուրբ կոյսերի նահատակութիւնը. Աստուածային պատիժն էլ իսկոյն հասնում է թագաւորի, նորա ընտանիքի և նախարարների վրայ։ Տրդատ կորցնում է բանականութիւնը և կատաղած դիմում է անմարդաբնակ տեղերը։ Յետոյ խորվիրապից հանում են Սուրբ Գրիգորին, որի աղօթքով բժշկվում է թագաւորը և բոլոր այսահարները և կրկին նորոգվում է քրիստոնէութիւնը Հայոց աշխարհում։

Այնուհետև նախարարներ, իշխաններ և հաւատացեալների բազմութիւնը հաւաքուելով Տրդատ թագաւորի մօտ՝ համակամ խորհրդով և հաւանութեամբ ընտրում են Սուրբ

Գրիգորին իրանց հովիւ և առաջնորդ և մեծ պատուով վաղարշապատ քաղաքից տանում են Փոքր Հայաստանի Կեսարիա քաղաքը, ուր Վևոնդիոս Հայրապետից, որ Թադէոս առաքեալի յաջորդն էր, ձեռնադրվում է Հայրապետ բովանդակ Հայաստանի՝ 302 թուականին Փրկչի։

Սուրբ Գրիգորը վերադառնալով Կեսարիայից Հայաստան, իւր քարոզութեամբ պատրաստում է բոլոր ժողովուրդին մկրտութիւնն ընդունելու համար. պատուիրում է աղօթել և պահք պահել և ապա Եփրատ գետի մէջ մկրտում է թագաւորին, Աշխէն թագուհուն, Խոսրովիդխտին և բոլոր բազմութեանը. պատարագ է մատուցանում և ամենքը հաղորդվում են։ Այնտեղից թագաւորի հետ գալիս է Վաղարշապատ քաղաքը և 303 թուին սկսում է Էջմիածնի հոյակապ եկեղեցու շինութիւնը։

Յետոյ Սուրբ Լուսաւորիչը շրջելով Տրդատի հետ Հայաստանի ամեն կողմերը, մկրտում է ամենքին, բաց է անում դպրոցներ, կարգում է ուսուցիչներ, ձեռնադրում է եպիսկոպոսներ և քահանաներ, շինում է շատ եկեղեցիք, վանօրայք, կուսանոցներ և հիւրանոցներ, սահմանում է տօներ։

Եւ այսպէս Հայաստան աշխարհը քրիստոնէական լուսով լուսաւորելուց յետոյ՝ Սուրբն Գրիգոր 331 թուականին առանձնանում է Սեպուհ սարի վրայ Մանիալ այրը, ուր և կնքում է իւր բազմարդիւն կեանքը։

ԺԱՄԱՄՈՒՏ Ի ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՄԵՐՈՑ.

Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր սէտ, որ հաւատը սորվեցրիր բզբանակս դիւացն հալածե- ցեր. մարդկան ուսուցեր քարոզել զերկրորդութիւնն, պսակեցար յարքայութեան. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

Գրիգոր սուրբ քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր մարդիկներին սորվեցրիր դաւանել սուրբ Երրորդութիւնը, պսակ ստացար արքայութեան մէջ. արդ բարեխօսութիւն ար՛ա մեզ համար Աստուծոյ առաջ։

’Ի պատիւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Հայոց եկեղեցին սահմանած ունի երեք տօն.

ա. Մեծի պահոց հինգերորդ եօթնեկի շաբաթ օրը կատարվում է տօն ’ի յիշատակ չարչարանաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և մահն ’ի վիրապն։

բ. Ելն նորա ’ի վիրապէն։ Սա լինում է ամառը, յունիս ամսին, շաբաթ օրը։ Իսկ մէս օրը, որ է կիւրակէն, միշտ կատարվում է տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ սրբոյ Էջմիածնի։

գ. Գիւտ նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. սա ևս լինում է ամառը յունիս կամ յուլիս ամիսներին՝ դարձեալ շաբաթ օրը։

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ.

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող, որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ ’ի պարթևական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասնորոյ բարեխօսու-

Հրաշապէս փառաւորուած և միշտ բարեխնամ Աստուած, որ առաջուց հոգալով սկիզբըն դրիր Հայաստանի փրկութեանը և պարթևական յանցաւոր ցեղից մեզ լուսաւորիչ տուեցիր. ուստի նորա

թեամբ սորա, Փրկիչ, կեցո՛ զմեզ, այժմ և ’ի Ko ահաւոր գալստեանդ։

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբը Գրիգոր զանտանելի ըզչարչարանս ’ի յանձն էառ երեք հնգօք ամօք ’ի մէջ թուննաւորացն բնակեր անդնդային տանջանօքն ’ի վիրապին, վասնորոյ...

Հրաշագործ Ko բանիւդ և մեծ ողորմութեամբ ելեալ բժշկեր զհարուածեալսն ’ի դիւաբախ սաստից, երկրըպագուս առնելով զամենեսեան սուրբը Երրորդութեանդ, վասըն...

բարեխօսութեամբ պահպաններ մեզ, Փրկիչ, այժմ և Ko ահաւոր գալստեան օրը։

Երանելի սուրբը Գրիգորը զարմանալի հրաշքով դիմացաւ գժոխային անտանելի տանջանքներին և տասնուհինգ տարի խոր վիրապում թուննաւորների (սողուններ) մէջ բնակուեցաւ, ուստի...

Ko հրաշալի խօսքով և մեծ ողորմութեամբդ նա, դուրս գալով վիրապից, սկսեց բժշկել դիւահարներին, գարձնելով նրանց ամենքին սուրբ Երրորդութեան երկրպագողներ. ուստի ..

---

101. ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՑ ԿՈՒՍԱՆԱՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ.

Քրիստոնէական հաւատը Հռովմայեցւոց կայսերութեան մէջ, իւր երեւալու իսկ օրից, ենթարկուեցաւ սաստիկ հալածանքի։ Զնայելով սորան, երբեմն Հռովմայ գահի վրայ բարձրանում էին այնպիսի առաքինասէր անձինք, որոնք ազատութիւն էին տալիս քրիստոնէութիւնը դաւանելու։ Այսպէս, երրորդ դարու վերջերում Հռովմում գոյութիւն է ունենում կուսանոց, որի մայրապետն էր սուրբ Գայիանէն։ ’Ի մէջի այ-

լոց մտնում է այս կուսանոցը Հռիփսիմէ անունով մի հրաշագեղ կոյս թագաւորական տոհմից, դաստիարակվում է քրիստոնէական հոգւով և ուխտ է գնում Աստուծոյ առաջ իւր կեանքը կուսութեամբ անցուցանելու։ Դիոկղետիանոս կայսրը, 285 թուին բարձրանալով գահը, հալածանք է յարուցանում քրիստոնեաների դէմ։ Սա, տեղեկանալով Հռիփսիմէի գեղեցկութեան մասին, կամենում է ամուսնանալ նորա հետ. բայց կոյսերը մի քանի քահանաների ուղեկցութեամբ և սուրբ Գայիանէի հսկողութեամբ 70 հոգւով փախչում են Հռովմից, գնում են Պաղեստին, այցելում են տնօրինական տեղերը և մի քանիսը մնում են այնտեղ. իսկ Հռիփսիմէն և Գայիանէն իրանց ընկերուհիներով երեք քահանաների հետ գալիս են Հայաստանի Վաստպուրական աշխարհը և իջևանում են Վարագայ լերան վրայ։ Այստեղ ս. Հռիփսիմէն թողնում է իւր կրած խաչը, որ այժմ յայտնի է Վարագայ սուրբ խաչ անունով և ապա 37 հոգւով անցնում են Արարատեան աշխարհ և բնակութիւն են հաստատում Վաղարշապատի մի հնձանում։ Սոքա օրական ապրուստը ճարում են ձեռագործով, ուլունքներ վաճառելով։ 301 թուին Տրդատ Հայոց թագաւորը նամակ է ստանում Դիոկղետիանոս կայսրից, որը յայտնում է Հռիփսիմեանց փախուստը և նկարագրելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը, առաջարկում է որ կամ յետ գարձնէ նորան և կամ ինքը ամուսնանայ նորա հետ, եթէ կամենում է։ Տրդատի խնդրակները գտնում են սուրբ կոյսերին հնձանում. Հռիփսիմէին մեծ չքով բերում են արքունական պալատը. թագաւորը յափշտակվում է նորա գեղեցկութիւնով և առաջարկում է նորան իւր հետ ամուսնանալ։ Հռիփսիմէն հաստատ մնալով իւր ուխտին, փախչում է պալատից։ Սպա հասնում է դահճապետը և Հռիփսիմէին դառն տանջանքով զրկում է կեանքից։ Միւս օրը տանջանքի է ենթարկվում և ս. Գայիանէն, որ չկամեցաւ Հռիփսիմէին համոզել թագաւորի կամքը կատարելու։ Այսպէս նահատակվում են 37 կու-

սանք. նոցա մարմինները մնացին բացօթեայ մինչև սուրբ Գրիգոր Լուսաւորչի խորվիրապից դուրս գալը: Սա սուրբ կոյսերի մարմինները ամփոփում է իրանց բնակութեան հընձանում և քանի մի ժամանակից յետոյ շինել է տալիս երեք վկայարանները՝ մեկը Հռիփսիմեի նահատակութեան տեղը, միւսը Գայիանէի և երրորդը բնակութեան հնձանի տեղը: Հայոց եկեղեցին սահմանեց տօնել սուրբ կուսանաց յիշատակը Հոգեգալստեան երկրորդ շաբաթը:

102. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՆՆԻ

Երբ որ Գրիգոր Լուսաւորչին հանեցին խորվիրապից, նորա առաջ դուրս եկան Տրդատը և նորա հետ բոլոր մոլեգնեալ իշխանները: Գրիգորի աղօթքով Տրդատը փոքր ինչ զգաստանում է և ընկնելով սուրբի առաջ իւր մեղքերին թողութիւն է խնդրում: Սուրբն Գրիգոր, խոստանալով թագաւորին Աստուծուց հայցել նրա մեղքերի թողութիւնը, հարցնում է՝ «Ո՞ւր են Աստուծոյ գառները»: Նորան ցոյց են տալիս սուրբ կոյսերի մարմինները, որոց ամփոփում է իրանց բնակած տեղումը և ամբողջ գիշեր աղօթքով անց է կացնում նոցա գերեզմանի վրայ: Այն ժամանակ նա տեսնում է երկնքից իջնող լոյս և նորա առաջ հրեշտակների գունդը: Նոցա ետևից երևում էր մարդու կերպարանքը ոսկէ-ուռը ձեռքին: Այս երևոյթը ընթանում էր դէպի Վաղարշապատ: Սորանից յետոյ ուռը բաղխում է գետնին. գետինը դղրդում է, լեռները շարժւում են և անգունդի խորքից լսվում է սանդարամետի ողբագին ձայնը: Ապա թագաւորական պալատից բարձրանում է ոսկեայ խարխիսը (պատուանդան) զոհագործութեան սեղանի նման, որից ծագում էր հրեղէն սիւնը ամպեայ թակաղատով (ծածկոցաձև զարդարանք) և որի վրայ փայլում էր խաչը: Սեղանի տակից բղխում էր կենդանի ջրոյ աղբիւրը և ուռոգում էր երկրի մեծ տարածութիւն: Այս ամբողջ շինուածը շրջապատած էր չորս սիւնով, որոնցից երեքը բարձրանում էին նահատակուած կոյսերի նշխարների վրայ: Այդ ամենը միանում էր կամարով, որի վրայ դրած էր հրեղէն աթոռը և աթոռի վրայ տէրունական խաչը: Հրեշտակը այսպէս բացատրեց սուրբ Գրիգորին այդ տեսիլքը՝ «Մարդու կերպարանքը— նոյն ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս Աստուծոյ միածին Որդին է, ասաց նա. խաչով պսակուած շինութիւնը—նշանակում է ընդհանրական եկեղեցի Քրիստոսի, որ խաչի հովանաւորութեան ներքոյ է գտնվում, որովհետև խաչի վրայ մեռաւ Աստուծոյ Որդին: Այդ տեղը աղօթքի տեղ պիտի դառնայ: Հրեղէն սիւնը և աղբիւրը նշանակն է Աստուածային մկրտութեան, որ բղխում է ընդհանրական եկեղեցուց՝ մարդկութեան վերածնութեան համար: Խոնարհի՛ր, աւելացրեց հրեշտակը, այն շնորհքի առաջ, որ ցոյց տուեց քեզ Աստուած և եկեղեցի շինիր այստեղ»: Այնտեղը ուր սուրբ Գրիգորն արժանացաւ այդ տեսլեան, Նորակաթ կոչուեցաւ, որ նշանակում է լուսոյ կաթիլ: Սուրբ Գրիգոր այն տեղը որմով պատում է և կանգնեցնում փրկչական խաչի նշանը, որպէսզի ամենքը երկրպագութիւն տան այդ սրբավայրում իրանց Արարչին: Իսկ երբ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը ձեռնադրուեցաւ ընդհանուր ազգի հայրապետ և վերադարձաւ Վաղարշապատ, իւր տեսլեան համեմատ ի պատիւ Էջման Միածնի 303 թուին շինում է այն տաճարը, որ կոչվում է Էջմիածին, որ գարձաւ ամենայն Հայոց հայրապետութեան Մայր Աթոռ: Սուրբ Էջմիածինը Հայերի հոգևոր միութեան կենդրոնն է: Այստեղ Վեհափառ Կաթուղիկոսը պաշտօնակցութեամբ ազգի եպիսկոպոսաց օրհնում է սրբալոյս մեռոնը, որը և այստեղից մասնատրվում է Հայոց բոլոր եկեղեցիներին: Այստեղ է կատարվում կաթուղիկոսների և եպիսկոպոսների ձեռնադրութիւնը և օծումը: Այստեղ են գտնվում և մեծ պատուով պահպանվում ազգային սրբութիւնները, ինչպէս՝—սուրբ գեղարդը,

որ բերեց Հայաստան սրբազան Թադէոս առաքեալը, սուրբ Գրիգոր Լուսաւորչի աջը, Մատթէոս աւետարանչի և Պետրոս առաքեալի մասունքը, Թոմա առաքեալի աջը, ճաճանչաձև մեծ խաչը, որի մէջ ամփոփուած է սուրբ կենաց փայտը, և այլն։ Սուրբ Էջմիածնի տօնը կատարվում է Հոգեգալստեան երկրորդ կիւրակէին։

Բայց յայսմանէ սուրբ Աստուածածնի պահոց եօթնեկին — շաբաթ օրը լինում է տօն Նողակաթին սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Ինչպէս Էջմիածնայ տօնի, նմանապէս և սոյն օրը առաւօտեան ժամին հոգևորականաց դասը. ի միջի այլոց, երգում է և հետևեալ շարականը.

Էջ Միածինն 'ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա, Ձայնք հնչեցին սանդարամետք անդընդոց։

Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի, պատմէր ցընծութեամբ հաւատացեալ արքային։

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի 'ի սմա ճագեաց մեզ լոյս 'ի Հայաստան աշխարհի։

Միածին որդին իջաւ Հօրից և Նորա հետ փառաց լոյս՝ անդունդի խորքերը ձայներ հանեցին։

Գրիգոր հայրապետը մեծ լոյսը տեսնելով, ուրախութեամբ պատմեց հաւատացեալ թագաւորին (Տրդատին)։

Եկէք շինենք լուսոյ սուրբը խորանը (եկեղեցին), սրովհետև այստեղ, Հայաստան աշխարհում, մեզ լոյս ծագեցաւ։

103. ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ։

Ներսէս Ա. սուրբ Գրիգոր Լուսաւորչի Յուսիկ թոռան Թոռն էր, Աթանագինէի որդին։ Սա իւր ուսումը ստացաւ նախ Բիւզանդիոնում, ապա Կեսարիայում և մտնելով զինուորական ծառայութեան մէջ, Արշակ Բ ի թագաւորութեան ժամանակ համարւում էր իբրև սենեկապետ և զինակիր թագաւորի։ Ներսիսի համեստ վարքը, քաղցր բարքը և մանաւանդ Սուրբ Գրոց հմտութիւնը ի նկատի ունենալով Փառներսեհ կաթուղիկոսի մահից յետոյ, ամբողջ ազգը, Արշակ Բ ի հաւանութեամբ, հայրապետ է ընտրում նորան։ Թագաւորի հրովարտակով և նախարարների ուղեկցութեամբ Ներսէս 364 թուին գնում է Կեսարիայ և հայրապետ ձեռնադրուելով, դառնում է Հայաստան, և իսկոյն սկսում է եկեղեցու բարեկարգութեան և ժողովրդի բարեկեցութեան համար հոգալ։ Այդ միջոցին ազգը նեղուած էր, թէ արտաքին թշնամիներից — Յոյներից և Պարսիկներից, և թէ ներքին երկպառակութիւններից և մանաւանդ քրիստոնէական կրօնի զեղծմունքներից։ — Ուստի Ներսէս իւր մարդասիրական արարքներով հանդիսանում է իբրև հայր հայրենեաց և խաղաղասիրական ընթացքով — իբրև պաշտպան հայրենեաց։ Իւր հայրապետութեան սկզբին, այն է 365 թուին, ժողով գումարելով Տարօնոյ գաւառի Աշտիշատ աւանում կանոնական սահմանադրութեամբ կարգադրում է՝ Հայոց կոշտ կեանքի մէջ մտցնել քրիստոնէական մարդասիրութեան գործադրութիւնը։ Նորա հրամանով բացւում են՝ աղքատանոցներ, հիւանդանոցներ, պատսպարաններ բորոտների համար, դպրոցներ և այլն, այնպէս որ Ներսիսի Աստուածահաճոյ հաստատութեանց թիւը հասնում է երկու հազարի։ Քրիստոնէական զեղծումները և հեթանոսական սովորութիւնները արմատախիլ անելու համար արգելում է

մերձաւոր ազգականների ամուսնութիւնը, մեռեալների վրայ յուսահատական լաց ու կոծը և սգաւորների սևազգեստիլը, և այլն։ Ներսէս, իբրև հայր գորովագութ, շրջում էր քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ և իւր հայրապետական խնամքը հաւասարապէս տարածում էր ամենի վրայ։ Ազգը ևս Ներսէսի մեծագործութիւնները տեսնելով 366 թուին ժողովով սահմանում է Հայոց կաթուղիկոսին Պատրիարք կոչումն տալ և ձեռնադրութիւնը այնուհետև ընդունել իրանց եպիսկոպոսներից և ոչ կեսարիայից։ Իւր հայրենիքի բարօրութեան համար երկու անգամ անձամբ ուղևորուեց Կոստանդնուպոլիս, մին Վաղենտիանոս կայսեր մօտ միջնորդ լինելով հաշտեցրեց նորան Արշակ թագաւորի հետ. իսկ միւս անգամ Վաղէսի մօտ, որը խոստացաւ օգնութիւն տալ, եթէ կընդունի արիոսականութիւնը։ Ներսէս իւր անուան ստորութիւն համարելով այդ առաջարկութիւնը, մերժեց բոլորովին, որի համար էլ աքսորուեցաւ մի անմարդաբնակ կղզի։ Վաղէսի մահից յետոյ Թէոդոս մեծի հրամանով դարձաւ Կոստանդնուպոլիս, ուր և 381 թուին մասնակցելով երկրորդ տիեզերական ժողովին, պատուով վերադարձաւ Հայաստան։ Բայց այստեղ ցաւով սրտի իմանում է Արշակի կատարած անկարգ և անխոհեմ գործերը և թագաւորի ու նախարարների մէջ ծագած գժտութիւնները, որի համար նախարարները ապստամբուելով, Պարսից Շապուհ թագաւորից խնդրում են ջնջել Արշակունի հարստութիւնը։—Արշակը, չկարողանալով դիմադրել Պարսից զօրութեանը, անձնատուր եղաւ և մեռաւ Անյուշ բերդում։ Ներսէս, տեսնելով Հայաստանի ցաւերը, Շապուհի անգթութիւնները և Մերուժանի ուրացութեամբ հայրենիքին հասցրած վնասները, Թէոդոսի օգնութեամբ Պապին թագաւորացնում է Հայաստանի վրայ։ Նպատ լերան մօտ Ձիրաւ դաշտի վրայ եղած պատերազմում, ուր ներկայ էր և Ներսէսը, Հայերը յաղթում են Պարսիկներին. ուրացող Մերուժանը, որ Հայաստանի թագաւոր էր ուզում լինել, եռացեալ շամփուրով պսակվում է Բագրատունի Սմբատ սպասեցից։—Ներսէս այնուհետև խրատում է Պապ թագաւորին և նախարարներին, որ սիրով լինին միմեանց հետ։ Պապը սկզբում թէև փոքր ինչ ուղղւում է, բայց շուտով անձնատուր է լինում մոլութեանց և կամենալով ազատուել Ներսէսի հայրական յանդիմանութիւններից, Եկեղեաց գաւառի Խախ գիւղում թունաւորում է իւր բարերարին։ Այսպէս հանգաւ Հայաստանի լուսատու ճրագը երեսուն երեք տարի վարելով հայրապետական աթոռը։ Անաչառ պատմութիւնն ընծայեց նորան «Մեծ» անունը։

104. ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ.

Սահակ Մեծն Ներսիսի որդին էր. իւր ուսումը ստանալով Կեսարիայում և Կոստանդնուպոլսում, հմուտ էր Յունաց լեզուի և Աստուածաբանական գիտելեաց և միևնոյն ժամանակ համարվում էր քաջ հայկաբան։ 390 թուին ազգի և Խոսրով Գ. թագաւորի հաւանութեամբ ընտրվում է Հայոց կաթուղիկոս, բայց այդ ընտրութիւնը հաւանութիւն չէ գտնում Պարսից Շապուհ թագաւորի կողմից, որովհետև Սահակի ազգասիրական եռանդը կարող էր արգելք լինել Պարսից մտադրութեան իրագործմանը, այն է Հայաստանի մէջ մօգակրօնութիւն մտցնելու. ուստի երբ Շապուհի պահանջման հակառակ Խոսրով Գ-ը և կաթուղիկոսը ընդդիմանում են Պարսից դուռը գնալու, Շապուհը մեծամեծ վնասներ է հասցնում հայերին, Սահակին գահընկէց է անում կաթուղիկոսութիւնից, իսկ Խոսրովին կալանաւորում է անյուշ բերդում, նորա տեղը թագաւորեցնելով նորա եղբօր Վռամշապուհին։— Սա իր խաղաղասիրական և խոհեմ կառավարութիւնով մեր աշխարհի համար շատ բարեաց պատճառ է լինում։ Նորա խորհրդով Սահակ Պարթևը Շապուհի

մահից յետոյ գնալով Պարսից դուռը մեծ պատուով է ընդունվում Արտաշիր թագաւորից և կրկին ստանալով կաթուղիկոսական աթոռը, դառնում է Հայաստան, իսկոյն նորոգել է տալիս Հռիփսիմեանց տաճարը, որ քանդել էր Շապուհը և խնամք է տանում եկեղեցին բարեկարգելու։ Այս միջոցին, այն է 406 թուին, աշխատութեամբ Մեսրոպի, գործակցութեամբ Վռամշապուհ թագաւորի և Սահակ կաթուղիկոսի կատարվում է Հայոց գրերի գիւտը։

Սորանից յետոյ Սահակ Պարթևը աշխատում է Մեսրոպ վարդապետի հետ թարգմանել Սուրբ Գիրքը, հրամայում է բաց անել դպրոցներ և ազգի մատաղ սերունդը դաստիարակել Հայոց գրով և լեզուով, ներշնչելով նորա սրտի մէջ կրօնական-բարոյական զգացմունքներ։

Ապագայի համար ևս արժանաւոր հովիւներ և դաստիարակներ պատրաստելու մտքով, Հայաստանից ուղարկվում են Աթէնք, Իւզանդիայ, Աղէքսանդրիայ և այլ տեղեր վաթսունի չափ ընդունակ աշակերտներ ուսման մէջ աւելի ևս կատարելագործուելու համար։ Սոքա մեծ եռանդով ուսում են առնում օտարութեան մէջ և ապա Աստուածաշունչի Յունական մի ընտիր օրինակ բերում են Հայրենիքը և մատուցանում են երանելի վարդապետներին։ Սահակ և Մեսրոպ Աստուածաշունչի նոր օրինակն ընդունելով, սկսում են նորից թարգմանել մի անգամ թարգմանածը։ Ջնայելով նորան, որ Ս. Սահակը իւր բոլոր ջանքը չէր խնայում ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար, Հայոց նախարարների ամբաստանութեամբ իւր ծերութեան վերջին օրերը Վռամշապուհի որդի Արտաշէս թագաւորի հետ անց է կացնում Պարսկաստանի բանտում։ Ի վերջոյ Հայոց նախարարները, զգալով իրանց սխալը, թէ և աղաչեցին Ս. Սահակին, երբ որ սա բանտից ազատուելով վերադարձել էր Հայաստան, որ վերստին բարձրանայ կաթուղիկոսական գահը, բայց նա հրաժարուեցաւ այդ առաջարկութիւնից և փոքր ժամանակից յետոյ սուրբ մահուամբ կնքեց իւր բազմաչարչար և բազմավաստակ կեանքը Բագրեւանդայ Իլոր գիւղում 438 թուին, 51 տարի կառավարելով կաթուղիկոսական աթոռը։ Նորա պատուական մարմինը մեծ պատուով թաղվում է Տարօնոյ Աշտիշատ աւանում։

105. ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԸ.

Սուրբն Մեսրոպ Տարօնոյ գաւառի Հացեկաց գիւղից էր Վարդան անունով մէկ բարեպաշտ մարդու որդի։ Աշակերտելով Մեծն Ներսիսի մօտ, ուսած էր Յունաց, Պարսից և Ասորոց լեզուները։ Ներսիսի կենդանութեան ժամանակ կաթուղիկոսի գործավար էր, իսկ նորա մահից յետոյ արքունի պալատի ատենադպիր եղաւ։ Համուտ էր նաև աշխարհական կարգերի և վարժուած էր զինուորական արհեստի մէջ։ Աշխարհական վայելչութիւնները չկարողացան հրապուրել Մեսրոպին, ուստի թողեց աշխարհը և աբեղայ ձեռնադրուելով առանձնացաւ Գողթան գաւառը. մտաւ վանք և կրօնական կեանք էր վարում և աշակերտներ հաւաքելով՝ կըրթում էր նրանց բարոյականութեան և Սուրբ Գրոց ուսման մէջ։

Մեսրոպի լայնածաւալ գիտութիւնը, ժողովրդին տգիտութեան խաւարից հանելու եռանդը չեն թողնում նրան վանական շրջանում մնալու։ Նա իւր կենդանի խօսքով, ազդու քարոզներով ելնում է կենսական ասպարէզը։ Սկսում է քարոզել նախ Գողթան գաւառում, ապա Սիւնեաց աշխարհում տեղական վայրենաբարոյ ժողովուրդը քրիստոնէական բարոյականութեան մէջ կրթելու նպատակով։ Բայց հանդիպում է մեծամեծ դժուարութեանց, որովհետև նոյն ժողովուրդը եկեղեցական առօրեայ ժամերգութեանց մէջոցին օ-

տար լեզուով կարգացած Սուրբ Գրքի իմաստը չըհասկանալով, չէ կարողանում արմատացնել իւր մէջ թուրքիկ խօսքերով լսածը։ Հայկական գրեր չը լինելով այն ժամանակ Սուրբ Գիրքը մեր եկեղեցիներում կարդացվում էր Յունաց և Ասորւոց լեզուներով։ Ահա այստեղ Մեսրոպի մէջ ծնվում է ցանկութիւն հայկական նշանագրերը գտնելու։ Այդ մըտքով նա գալիս է Վաղարշապատ Սուրբ Սահակ կաթուղիկոսի մօտ։ Սուրբ Սահակ, որ ինքը ևս յղացած էր իւր մէջ նոյն միտքը, շատ ուրախացաւ Մեսրոպի այս ցանկութեան վրայ։ 402 թուին կաթուղիկոսը Վաղարշապատում ժողով է գումարում հայկական նշանագրերը պատրաստելու համար, որպէս զի ազգային գրագիտութիւնը զարգանայ և ծաղկի Հայաստանի մէջ։

Ուսումնասէր Վռամշապուհ թագաւորն ևս բարեհաճում է ժողովին մասնակցելու։ Նա պատմում է, թէ Հաբէլ անունով քահանայից լսել է, որ Միջագետքում Ասորւոց Դանիէլ եպիսկոպոսի մօտ Հայոց հին նշանագրեր են գտնըվում։ Ուստի Վահրիճ անունով մէկ իմաստուն մարդու ձեռքով թագաւորը բերել է տալիս Դանիէլեան քսան երկու նշանագրերը։ Սուրբ Սահակ և Մեսրոպ փորձով համոզվում են, որ այդ գրերը հայկական հնչման չեն յարմարվում։ Ուստի Մեսրոպ քանի մի աշակերտներով անձամբ ուղևորվում է դէպի Միջագետք Դանիէլ եպիսկոպոսի մօտ։ Բաւական ժամանակ մնալով այնտեղ և սպասած օգուտը չըկարողանալով քաղել, սաստիկ մտատանջութեամբ տրտմում է. ապա դիմում է և ուրիշներին, բայց դարձեալ անօգուտ։

Մեսրոպ այնուհետև մարդկային հնարագիտութիւնից յոյսը կարելով, դիմում է Աստուածային օգնութեան. երկիւղած հոգւով խոր մտածմանց մէջ է ընկնում. յափշտակվում է տեսիլքով և իւր առաջ մի քար է տեսնում, որի վրայ աներևոյթ ձեռքը այլ և այլ տառեր էր գրում։ Այս տառերի ձևերը տպաւորվում են նորա մտքում և ձևակերպ-

վում են Հռուփանոս փիլիսոփայի ձեռքով։ Այսպէս նորագիւտ տառերի օգնութեամբ Մեսրոպը Աստուածաշունչից Սողոմոնի առակաց գիրքը և Աւետարանը թարգմանելով, ուղևորվում է դէպի Հայաստան։ Վռամշապուհ թագաւորը և Սահակ կաթուղիկոսը երբոր լսեցին նորա գալը, դուրս եկան նորա առաջ նախարարներով և ժողովրդի բազմութեամբ և մեծ հանդիսով ընդունեցին և այն օրը ուրախութեան տօն կատարեցին։ Այնուհետև բացվում են դպրոցներ և ծաղկում է հայերէն դպրութիւնը։

Այսպէս Մեսրոպ հնարում է վրաց և Աղուանից գրերը։ Յետոյ Սուրբ Սահակի հետ գնում է Հայաստանի արևմտեան երկիրը, որ Յունաց բաժնումն էր, որպէս զի այնտեղ ևս բաց անի դպրոցներ, բայց Յունաց տեղական կառավարութիւնից արգելքի հանդիպելով, սուրբ հայրապետի յանձնարարութեամբ ուղևորվում է Կոստանդնուպոլիս Թէոդոս կայսեր մօտ, որը սիրով կատարելով հայրապետի խնդիրը դպրոցների բացման մասին, Մեսրոպին ևս իւր մեծ գիտութեան համար պատվում է «Ասքիմեթէոս» կամ «Ակումիտ» գիտնական կոչմամբ, որ նշանակում է առաջին և գերազոյն վարդապետ։ Սա Սուրբ Սահակի մահից յետոյ կառավարում է հայրապետական աթոռը վեց ամիս և վախճանվում է 441 թուին։ Նորա սուրբ մարմինը Վահան Ամատունի իշխանը յուղարկաւորութեան մեծ հանդիսով թաղում է Օշական գիւղում։

106. ՍՐՌՈՑ ԱՏՈՎՄԵԱՆՑ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ.

1. Աբշակունեաց թագաւորական հարստութիւնը վերջանալուց յետոյ Հայաստանի քաղաքական ոյժը տկարանում է։ Երկու դրացի պետութիւնք՝ Յունաստան և Պարսկաստան

ձգտում են Հայաստանին տիրելու և վերջինս, ի հարկէ, աւելի ուժեղին պիտի մնար։ Պարսկաստանը ի վաղուց հետէ ցանկանում էր իւր հսկատակ քրիստոնեայ ազգերի մէջ մոգակրօնութիւնը մուցնել. բայց ակնածելով քրիստոնեայ Յունաստանից, չէ վստահանում վճռողական քայլ անելու։ Վերջապէս բացվում է յարմար դէպքը։ Պարսիկները յաղթում են Յոյներին և պատերազմական մեծ տուգանք առնելով, խաղաղութեան դաշն են կապում նրանց հետ։ Հեռացնելով այսպէս մի մեծ արգելք, Պարսից Յազկերտ թագաւորը մոգերի և Միհրներսէհ հազարապետի խորհրդով աներկիւղ գործադրում է իւր վաղուցուայ մտադրութիւնը — քրիստոնէութիւնը ջնջելու։ Գործը սկսվում է Հայերից, յուսալով թէ Վրացիք և Աղուանք ևս կըհետևեն նոցա օրինակին։ Մտադրութեան իրագործման համար հարկաւոր է հողը պատրաստել, նախ՝ նոյն իսկ երկրի մէջ գտնել մի ազդեցութիւն ունեցող անձն իրանց կամակից և գործակից (այդպիսի մարդկային արժանաւորութեան ստորացնող պարտաւորութիւնը յանձն է առնում երկրի մարզպան — գաւառակալ Վասակ-Սիւնեաց իշխանը), և ապա նիւթապէս ևս տկարացնելով Հայերին, խլել նոցանից դիմադրելու կարողութիւնը։ Սոբա համար Պարսիկները պատերազմն են սկսում Քուշանաց կամ Հոնաց դէմ, որին մասնակցում են տէրութեան հպատակ բոլոր ազգերը՝ իւրաքանչիւրն իւր այրուձիով, նախարարներով և իշխաններով դիմում են Ասպար աշխարհ և այնտեղից արշաւում են Քուշանաց վրայ։ Եօթը փարուայ պատերազմից յետոյ Պարսիկները յաղթութիւն են տանում, վերագրելով այն իրանց աստուածների օգնութեանը. ուստի հրաման է ուղարկվում Պարսկական տէրութեան բոլոր ազգերին, որ մխիթարն արեգակը պաշտեն, կրակին երկրպագանեն և մոգութիւնը ընդունեն։ Պատերազմում գտնուող քրիստոնեաներին մահուան սպառնալիքով արգելվում է հայրենիքը վերադառնալ։ Միայն Ատոմ Գնունի և Մանաճիհը

Որշտունի իշխանները, վտանգը արհամարհելով, իրանց զօրքով շտապում են Հայաստան փախչելու, բայց Պարսից զօրքը հասնելով, ամենին նահատակում են։ Սոցա յիշատակը Հայաստանեայց եկեղեցին տօնում է՝ «Ատոմեանց զօրավարաց» անունով։

---

2. Այնուհետև Միհրներսէհ հազարապետը հրովարտակ է ուղարկում Հայերին, որի մէջ մոգակրօնութիւնը գովում է, իսկ քրիստոնէութիւնը պախարակում. ուստի և առաջարկում է՝ հրաժարուիլ քրիստոնէական, ըստ նոցա կարծեաց, մոլորութիւնից և ընդունել ճշմարտաքարոզ մոգակրօնութիւնը։ Հրովարտակը վերջանում է հետևեալ խօսքերով՝ — «կամ պատասխանել նամակին բան առ բան և կամ Պարսից դուռն գնալով, ներկայանալ թագաւորական բարձրագոյն աթենին»։ Սոյն հրովարտակը գրաւում է ամբողջ ազգի ուշադրութիւնը։ Արտաշատ թագաւորանիստ քաղաքում 450 թուին գումարվում է ազգային ժողովը նախագահութեամբ Յովսէփ կաթուղիկոսի և մասնակութեամբ ազգի հոգևորական ու քաղաքական ներկայացուցիչների։ Գրվում է ազդու պատասխանը, որով ջրվում է զրադաշտական մոլար վարդապետութիւնը և հաստատվում է քրիստոնէութեան ճշմարտութիւնը։ Պատասխանը վերջանում է հետևեալ խօսքերով՝ «այս հաւատից ոչ ոք կարող է մեզ խախտել, ոչ հրեշտակներ և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր և ոչինչ աշխարհային ամենածանր տանջանք»։ Այս համարձակ պատասխանի վրայ սաստիկ զայրանում է Յազկերտ թագաւորը և ապառնալից հրովարտակով պատուիրում է Պարսկաստան ուղևորուելու՝ Վասակ մարզպանին, Վարդան սպարապետին և ուրիշ նախարարներին. նոյնպիսի հրովարտակ ստանում են նաև Աղուաններ և Վրացիք։ Այս երեք ազգերը պատգամաւորութեամբ իրարու հետ ուխտ են գնում հաստա-

տուն գաշնադրութեան մէջ մնալու։ Ս. Յովսէփ կաթուղիկոսը օրհնում է գնացողների ուղևորութիւնը։ Նախարարները գալով Պարսից դուռը և յայտնելով իրանց քրիստոնէական հաւատի մէջ հաստատ մնալու անդրդուելի դիտաւորութիւնը, ձգվում են բանտը և թագաւորի առանձնական խորհրդում վճռվում է, որ բոլոր նախարարներին կապեն ու աքսորեն շատ հեռու տեղեր, իսկ իրանք մտնեն Հայաստան և իրանց հաւատն ու օրէնքները տարածեն։ Խորհրդականներից մինը, ծածուկ քրիստոնեայն, այս վճիռը յայտնելով նախարարներին, խորհուրդ տուեց, որ առերեսս միայն ուրանան քրիստոնէութիւնը, որպէս զի ազատութիւն ստանալով կարողանան վերադառնալ իրանց երկիրը և միաբան ուժով պաշտպանեն հաւատն ու հայրենիքը։ Նախարարները համաձայնուեցան նորա խորհուրդը ընդունելու։ Յազկերտը երբոր այս իմացաւ, յանչափ ուրախացաւ, առատ պարգևներ բաժանեց նախարարներին և 700 մոգերով ուղևորեց նրանց դէպի իրանց երկիրները, պատուիրելով, հասնելուն պէս, իսկոյն մոգութեան կրօնին աշակերտել Հայերին, Վրացիներին ու Աղուաններին և ուրիշ քրիստոնեայ ազգերին։

---

3. Նախարարների ուրացութեան լուրը և մոգերով դէպի հայրենիք ուղևորուիլը կայծակի արագութեամբ հասնում է Հայաստան. ամբողջ ազգը ոտի է կանգնում, — ամենքը ուխտ են դնում Աստուծոյ առաջ՝ հաստատ մնալ քրիստոնէական հաւատին և կեանքը չխնայել եկեղեցւոյ և հայրենիքի ազատութեան համար։ Հոգևորական դասը սիրտ է առնում զանազան գաւառներ ժողովուրդը անընդհատ դիմադրութեան պատրաստելու։ Այս միջոցին նախարարները Պարսից զօրքով և մոգերով մտնում են Հայաստան և բանակ են դնում Ծաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքում։ Մէկ

կիւրակէ օր, ժամերգութեան միջոցին, մոգպետը իւր մոգերով եկեղեցի է մտնում և կամենում է գրաւել այն. Ղևոնդ երէցը, որ ուրիշ քահանաների հետ պաշտօն էր մատուցանում, հակառակվում է մոգական խմբին, ժողովուրդն էլ միացած հոգևորականների հետ բռնծեծ և գըլխապատառ դուրս են գցում ամենքին։ Մոգպետը տեսնելով Հայերի հաստատամտութիւնը և աներկիւղ դիմադրութիւնը, կամենում է թագաւորին նամակով խորհուրդ տալ, որ յետ կենայ այսպիսի վնասակար առաջարկութիւնից, բայց Վասակ Սիւնին յետ է կանգնեցնում, խոստանալով շուտով համոզելու Հայերին։ Պարսկաստանից եկած Հայ նախարարները, Վարդանի հետ ի միասին, իրանց առ երեսս ուրացութիւնը յայտնելով եպիսկոպոսներին, Նահապիվանում ժողով կազմեցին և խաչով ու աւետարանով երդուեցան քրիստոնէական կրօնը պաշտպանելու։ Ուխտապահ նախարարները կալանաւորում են ուրացող Վասակին, բայց սա եպիսկոպոսների առաջ զղջալով իւր յանցանքը ներողութիւն է ստանում։ Այնուհետև Հայերը յարձակվում են մոգերի և Պարսից զօրքի վրայ, ահագին հարուած են հասցնում, գրաւած բերդերը ետ են խլում. այսպէս սրբեցին հայրենիքը կռապաշտութիւնից և մոգութեան զօրութիւնը խորտակեցին։ Մինչ Հայերը տօնում են իրանց յաղթութիւնը, ահա Աղուանից աշխարհի եպիսկոպոսը և հազարապետը Հայերից օգնութիւն են խնդրում, յայտնելով, որ Պարսից զօրքը մտել է Աղուանք և ստիպում են մոգութիւնն ընդունելու։ Հայերը այս միջոցին օգնութիւն են խնդրում Յոյներից, բայց բացասական պատասխան ստանալով, չեն վհատում, այլ յոյսը անձնական ուժի վրայ դնելով, զօրքը երեք գունդ են բաժանում։ Վարդանը ուղևորվում է դէպի Աղուանից աշխարհ, Վասակը մնում է Արարատեան գաւառում, իսկ Ներշապուհ Արծրունի իշխանը յանձն է առնում Պարսից սահմանագլուխը պաշտպանելու։ Վարդանը մտնում է Աղուանից աշխարհ, Պարսից

գրաւած բերդերը ետ է առնում, հրամայում է կռատունները կործանել և մոգերին կոտորել։ Մինչ Վարդան շարունակում էր իւր յաղթութիւնները, յանկարծ Հայաստանից բօթաբեր է հասնում նորան և յայտնում է. որ Վասակը, ժխտելով երդումը, այրում է Հայոց գիւղերը, կործանում է բերդերը և սրի կերակուր է անում իւր եղբայրակիցներին։ Վարդանը մեծ աւար վեր առած Պարսիկներից, անսպասելի արագութեամբ հասնում է Հայաստան Վասակի աւերիչ ընթացքին վերջ տալու համար. վերջինս, երկիւղ կրելով Վարդանից, փախչում է իւր գաւառը։ Վարդան սպարապետը իւր նիզակակիցներով խաղաղացնում է աշխարհը և որովհետև ձմեռը վրայ էր հասել, զօրքը մի քանի մասն բաժանեց և ապահով տեղեր ուղարկեց ձմեռելու։

---

4. Այն ինչ Հայերը ուրախութեամբ տօնում էին զատկական օրերը, յանկարծ լուր հասաւ, որ Պարսից ահագին գունդը Հեր և Զարևանդ գաւառներից անցնելով, բանակ է դրել Արտազ գաւառի Սւարայր դաշտում, Տղմուտ գետի ափերի վրայ։ Հայոց նախարարները իրանց զօրքերով հաւաքուեցան Արտաշատ քաղաքում, որոց թիւը 66,000-ի էր հասնում, և այն տեղից ամբողջ զօրախումբը դիմեց դէպի Սւարայրի դաշտը և ամրացաւ Տղմուտ գետի այս կողմը։ Նոյն տեղը եկել էին Յովսէփ կաթուղիկոսը և Ղևոնդ երէցը ուղղիշ եպիսկոպոսներով և քահանաներով պատերազմին մասնակցելու։ Վարդան սպարապետը զօրքի առաջ կարդում է Մակաբայեցւոց գիրքը, ազդու ճառով քաջալերում է նրանց դէպի անվեհերութիւն, երկիւղը թերահաւատութեան նշան համարելով։ Ոգևորիչ ճառ է խօսում նա և Ղևոնդ երէցը։ Սպա սեղան է կազմւում, Հոգեգալստեան եօթներորդ օրը մատուցանվում է սուրբ պատարագը և հաղորդվում են թէ զօրքը և թէ զօրավարները և իրանց անձը յանձնելով Աստուծոյ խնամքին խնդրում են, որ Աստուած իւր եկեղեցին չտայ հեթանոսաց ձեռքը։ Պարսիկները արդէն պատրաստ էին։ Հայերը անցնում են Տղմուտ գետից, յարձակվում են Պարսիկների վրայ և ցրվում են նրանց զօրքը. և մինչ յաղթութիւնը Հայոց կողմն էր երևում, Պարսիկները վերջին ճիգը թափելով շրջապատում են Վարդանին իւր նիզակակիցներով։ Այստեղ Վարդանը քաջութեան հրաշքներ է գործում, ահագին վնասներ է հասցնում թշնամուն, բայց մահաբեր վերք ստանալով նահատակվում է թէ ինքը և թէ իւր քաջ նիզակակիցները։ 451 թուի յունիսի 2-ին վերջանում է այս ահռելի պատերազմը, որի մէջ Պարսիկների և Վասակի գնդից մեռնում են 3544 մարդ, իսկ Հայոց նահատակների թիւը լինում է 1036։ Այսպէս քրիստոնէական հաւատի և ազգային եկեղեցւոյ ազատութեան համար զոհեցին իրանց անձը այն ընտիր նահատակները, որոց անմահ յիշատակը տօնում է Հայոց եկեղեցին «Վարդանանց զօրավարաց» անունով ամեն տարի բուն բարեկենդանի հինգշաբթի օրը։ Իսկ Վասակ, իւր աղգակիցներից ժառանգելով դաւաճանի անարգ անունը, Պարսիկներից ևս զրկուեցաւ պատուից և դառն ցաւերով մեռաւ բանտում։

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ.

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց, վառեցար զինու հոգւոյն՝ արիաբար ընդդէմ մահու — Վարդան քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին, վարդագոյն արեան հրաշքով պսակուած (նահատակութեան պսակով) և առաքինիների զօրագլուխ սուրբ Հոգու զէնքով քաջութեամբ մահուան դէմ զինուեցար, ով Վարդան, քաջ նա-

ամբդ քո՝ պսակեցեր զեկեղեցի։

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին՝ խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս, խորէն խորհրդական՝ և ծանուցեալ անուն քարի, խաչելոյն վկայ եղեալ հեղմամբ արեան պսակեցար։

Բննական լուսով լցեալ արիացեալն քաջն Աբտակ թաթաւեալ ’ի կարմրութիւն բոսորային բղխեալ աղբերն, զփրկականն ըմպեալ զբաժակ և մկրտեալ արեամբն իւրով դասակցեալ ընդ անմարմնոցն՝ երրորդութեանն երգել զփառս։

Սրբափայլ զգեստուք պըճնեալ ’ի յերկնաւոր հանդիսադրէն երրորդութեամբն զօրացեալ վանեալ զամուրս բանսարկուին - Համայեակ Հօր ընծայեալ՝ Որդւոյ գոլով չարչարակից, Հոգւովն յաղթեալ հատակ, որ թշնամուն փախցրիր և վարդանման արիւնով պսակեցիր եկեղեցին։

Առաջնորդ քեզ ունենալով խորին իմաստութիւնդ, երկնաւոր թագաւորի գէնքովը յաղթող հանդիսացար պատերազմում, ով դու, բարի առնունով յայտնի Խորէն, խաչուածին վկայ կացար և թափած արիւնով պսակուեցար։

Աբիասիրտ քաջ Աբտակ, Աստուածային լուսով լցուածխմեցիր փրկութեան բաժակը, մկրտուեցար կարմիր արիւնով և մտար անմարմնոց (հրեշտակների) դասը, որպէս զի (նոցա հետ) սուրբ երրորդութեանը երգես փառաբանական երգը։

Սրբութեամբ փայլող զգեստով (սուրբ մկրտութեամբ) զարդարուած երկնաւոր Զօրաբեւեից, երրորդութեան հաւատովը զօրացած՝ ոչնչացրիր չարի լարած որոգայթները, ով Համայեակ, որ անձդ ընծայելով Հօրը, չարչարակից լինելով Որդւոյն և ոգևորուելով սուրբ Հոգւով՝ պատերազմը յաղթող հանդիսացար չարասէր թագաւորի դէմ։

պատերազմին՝ և չարասէր թագաւորին.

107. ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԵՒ ՀԱՒԱՏՈՑ ՀԱՆԳԱՆԱԿԸ.

Աստուածային վարդապետութիւնը պարունակվում է Սուրբ գրքի և աւանդութիւնների մէջ։ Սուրբ Գիրքը բաղկացած է շատ գրքերից, որոնք գրել են սուրբ մարդիկ, այսինքն մարգարէները և առաքեալները Սուրբ Հոգու ազդեցութեամբ։ Այս գրքերից մի քանիսը գրուած են Քրիստոսի ծնունդից առաջ և ասվում են Գիրք Հին Ուխտի, կամ *Հին կտակարան*, — միւսները Քրիստոսի ծնունդից յետոյ և ասվում են Գիրք Նոր Ուխտի կամ *Նոր կտակարան*։ Իսկ բոլորն ’ի միասին ասվում են *Աստուածաշունչ գիրք*։ Սուրբ աւանդութիւնք ասվում են Աստուածային այնպիսի վարդապետութիւնները, որոնք չեն գրուած մարգարէներից և առաքեալներից, այլ բերանացի են աւանդուած և քանի մի ժամանակից յետոյ միայն արձանագրուած են եկեղեցու հովիւներից ու վարդապետներից։

Քրիստոնեայ հասարակութեան մէջ շուտ երևեցան ճշմարտութեան թշնամիք, որոնք իրանց ազատ մեկնութիւններով աղաւաղում էին Քրիստոսի վարդապետութիւնը։ Քրիստոնեայք նորանց հերետիկոս անուանեցին։ Հաւատացեալների մէջ սկսուեցան վէճեր և անմիաբանութիւններ։ Այս տեսակ վէճերը լուծելու համար Եկեղեցու հովիւները սկսեցին միասին հաւաքուել։ Այս կերպով կազմուեցան *ժողովներ*. *Տեղական ժողով*։ ուր հաւաքւում էին մի գաւառի եկեղեցու հովիւները, և *Տիեզերական*, ուր բոլոր տիեզերքից հա-

ւաքվում էին Եկեղեցու հովիւները։ Ծողովների մէջ եկեղեցու հայրերը բոլոր տարաձայնութիւնները փարատեցին և կազմեցին հաւատոյ համառօտ բովանդակութիւնը կամ արձանագրութիւնը, որ տասներկու մասն է բաժանվում.

1. *Հաւատամք ՚ի մի Աստուած Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի երեւելեաց եւ աներեւութից։*

Մենք հաւատում ենք, որ կայ մի Աստուած,— որ մի է Աստուած երեք անձնաւորութեան մէջ, որ Ամենասուրբ Երրորդութեան առաջին անձն Հայր Աստուածն է, որ Աստուած ստեղծեց երկինքը և երկիրը, ամենայն տեսանելի և անտեսանելի բաներով, որ բոլոր ստեղծուածներին Նա պահպանում է Իւր իշխանութեան ներքոյ և կառավարում է նորանց։

2. *Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ ոչ արարած։ Նոյն ինքն ՚ի քնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ՚ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք։*

Մենք հաւատում ենք՝ թէ Ամենասուրբ Երրորդութեան երկրորդ անձն է մի Տէր Յիսուս Քրիստոսը, Աստուծոյ Որդին, թէ միածին է, այսինքն չկայ ուրիշ մէկը Նորա նման. թէ Որդին Աստուծոյ ծնուած է Հօր Աստուածուց նախ քան զյաւիտեանս, թէ Նա ծնուած է ինչպէս լոյսը լուսից՝ այսինքն ինչպէս արեգական ճառագայթը արեգակից. թէ Նա ճշմարիտ Աստուած է, ծնուած ճշմարիտ Աստուածուց, թէ Նա չէ ստեղծուած. թէ Նա համագոյակից է Հօր Աստուծոյ, այսինքն ունի Հօր Աստուծոյ հետ մի գոյութիւն. թէ ամեն

նայն բան Նորանով է ստեղծուած, և ուրեմն Նա է Արարիչ աշխարհի։

3. *Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկինից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալսէս ՚ի Մարիամայ Սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի եւ զիւր եւ զամենայն, որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։*

Հաւատում ենք՝ թէ Որդին Աստուծոյ երկնքից իջաւ մեզ՝ մարդկանցս փրկութեան համար. թէ Նա մարմնացաւ, այսինքն մարդկային բնութիւն առաւ Մարիամ կուսից Հոգւոյն սրբոյ եկաւորութեամբ, թէ Նա մարդացաւ, այսինքն եղաւ կատարեալ մարդ, չդադարելով և Աստուած լինելուց։

4. *Չարչարեալ, խաչեալ, թաղեալ։*

Մենք հաւատում ենք՝ թէ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը չարչարուեցաւ, այսինքն ցաւ էր զգում, ինչպէս ամեն մարդ. թէ Նա խաչ հանուեցաւ մեր պատճառով, այսինքն թոյլ տուեց Իրան խաչելու, որպէսզի մեր մեղքի համար մեզ սպասելի յաւիտենական պատժից ազատէ. թէ Նա մեռաւ խաչի վրայ և թաղուեցաւ։

5. *Յերրորդ աւուր յարուցեալ։*

Հաւատում ենք, թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոսը մարդկային բնութեամբ մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը յարութիւն առաւ։

6. *Ելեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր։*

Մենք հաւատում ենք, թէ Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը, մարմնով համբարձաւ երկինքը. թէ Նա նստած է Հօր Աստուծոյ աջ կողմը, այսինքն ունի Նորա հետ հաւասար զօրութիւն և պատիւ։

7. Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատում ենք՝ թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոսը վերստին կըգայ փառքով. թէ Նա կըգայ նորա համար, որ դատէ կենդանիներին և մեռելներին. թէ այս դատաստանից յետոյ կըհաստի Նորա թագաւորութիւնը, որը վախճան չունի։

8. Հաւատամք եւ ՚ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ՚ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զնոսաքեալն, եւ բնակեցաւ ՚ի սուրբսն։

Հաւատում ենք, թէ երրորդ անձն Աստուածութիւնը Երրորդութեան է Հոգին Սուրբ. թէ Հոգին Սուրբ Աստուած է, ուրեմն և պարտական ենք Հօր և Որդոյ հետ հաւասար փառք և երկրպագութիւն տալ Նորան. թէ մարգարէները և առաքեալները Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և Սուրբ Գիրքը գրելու ժամանակ՝ Հոգւոյն Սրբոյ շնչմամբ էին խօսում և գրում. թէ երբ Քրիստոսը մկրտվում էր Յորդանան գետի մէջ, Հոգին Սուրբ իջաւ Նորա վրայ աղաւնու կերպարանքով և քարոզեց, թէ Քրիստոսն ուղարկուած է Հօրից և թէ Հոգին Սուրբ բնակուեցաւ սուրբերի մէջ։

9. Հաւատամք ՚ի մի մի այն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի։

Հաւատում ենք՝ թէ Յիսուս Քրիստոս Տէրն մեր բնակվում է Իւր եկեղեցու մէջ. թէ եկեղեցին մի է, Սուրբ է, Ընդհանրական է և Առաքելական։

10. Հաւատամք ՚ի մի Մկրտութիւն յԱպաշխարութիւն, ՚ի Քաւութիւն եւ ՚ի Թողութիւն մեղաց։

Հաւատում ենք՝ թէ մկրտութիւնով մարդս թողութիւն է գտնում սկզբնական մեղքից և արժանի է լինում Հոգոյն Սրբոյ շնորհքն ընդունելու, թէ մարդս ճշմարիտ ապաշխարութեամբ ազատվում է և թողութիւն է ստանում այն մեղքերից որ գործել է մկրտութիւնից յետոյ։

11. Հաւատամք ՚ի յարութիւն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից։

Հաւատում ենք, թէ ամեն մեռած մարդկանց մարմինները վերջին դատաստանի օրն իրանց հոգիների հետ պիտի միանան և վերկենան Աստուծոյ հրամանով և դատուին Քրիստոսից և ամենքն իրանց վարձն ստանան։

12. Եւ ՚ի կեանս յաւիտենականս։

Հաւատում ենք, թէ այս երկրաւոր կեանքից յետոյ կըլինի մի ուրիշ՝ յաւիտենական կեանք։

Վ Ե Ր Ջ

4227

ՀՀ Ազգային գրադարան
NL0031396

4088